Ուսանողների թվաքանակը հաշվետու և նախորդ ուստարիներին՝ ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի




Հաշվետու ուստարում ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշներն են.

ա) առաջին կիսամյակում առկա բակալավրիատում և մագիստրատուրայում՝ 79,6% (նախորդ ուստարում՝ 75,7%):

2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ տվյալներն՝ առկա ուսուցման համակարգում




Ուսանողների առաջադիմության համեմատումը՝ նախորդ և հաշվետու ուստարիների առաջին կիսամյակներում




բ) Երկրորդ կիսամյակում՝ համապատասխանաբար 84,6% (նախորդ ուստարում՝ 81,3%):

2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ տվյալներն՝ առկա համակարգում




Ուսանողների առաջադիմության համեմատումը՝ հաշվետու և նախորդ ուստարիների երկրորդ կիսամյակներում




2015-2016 ուստարում համալսարանի առկա բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման արդյունքներով բուհն ավարտեց ավարտական կուրսերի ուսանողների 98.87%-ը, այսինքն՝ 177 ուսանողից՝ 176-ը, նախորդ տարվա 100%-ի դիմաց: Նախորդ տարիների 1 նախկին ուսանողի թույլատրվեց մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը, ով հաջողությամբ հանձնելով ամփոփիչ ատեստավորման քննությունները՝ ավարտեց բուհը: Բուհը գերազանցությամբ ավարտեց բակալավրիատի շրջանավարտներից 71-ը, այսինքն՝ 40%-ը (2014-2015 ուստարում՝ 50%-ը), մագիստրատուրայի ավարտական կուրսերի 80 ուսանողներից 75-ը մագիստրոսական թեզերի հաջող պաշտպանության արդյունքում ստացան մագիստրոսի որակավորում: Մագիստրատուրայի 55 ուսանողներ համալսարանը ավարտեցին գերազանցությամբ, համալսարանի բոլոր մասնագիտությունների գծով մագիստրատուրան ավարտեց ավարտական կուրսի ուսանողների 93.8% (նախորդ ուստարում՝ 98.9%-ը): 2016 թվականին Գավառի պետական համալսարանում առկա բակալավրիատի 177 և մագիստրատուրայի 75 շրջանավարտների շնորհիվ եց համաեվրոպական նմուշի դիպլոմի երկլեզու հավելված՝ հայերեն և անգլերեն:

Հաշվետու ուստարում բուհն ավարտեց հեռակա ուսուցման բակալավրիատի թվով 185 շրջանավարտ: Հեռակա ուսուցման ֆակուլտետն ավարտեց նաև վեցամյա կրթության համակարգում ուսանած թվով 4 շրջանավարտ, իսկ նախորդ տարիներին բուհը չավարտած 34 նախկին ուսանողի թույլատրվեց մասնակցելու ամփոփիչ ատեստավորմանը, նրանցից դրական գնահատական ստացան 25-ը (ընդհանուր թվով՝ 189 շրջանավարտ), իսկ 23 ուսանող անբավարար գնահատական ստանալու և չներկայանալու պատճառով չավարտեց համալսարանը, այսինքն՝ բուհն ավարտեց ուսանողների թվի 89.1%-ը (2014-2015 ուստարում՝ 83.7%-ը):

2015-2016 ուսումնական տարվա շրջանավարտների թվաքանակի վերաբերյալ տվյալներ




Գավառի պետական համալսարանի 2015-2016 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ տվյալներ




Հաշվետու ուստարում համալսարանում շարունակաբար իրականացվել են ուսանողների ֆինանսական աջակցման ծրագրեր: Առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում սովորող ուսանողները ֆինանսական աջակցություն են ստացել պետական բյուջեից, համալսարանի միջոցներից, գործընկեր կազմակերպություններից, ԳՊՀ բարերարներից և տարբեր հիմնադրամներից: Ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ անվճար և վճարովի տեղերի փոխատեղման կանոնների համաձայն, հաշվետու ուստարվա ակադեմիական առաջադիմության ցուցանիշներով, առկա բակալավրիատի 13 ուսանող և մագիստրատուրայի 3 ուսանող մրցույթի արդյունքում փոխեցին իրենց կարգավիճակը:


2015-2016 ուստարում ֆինանսական աջակցություն ստացած առկա բակալավրիատի ուսանողների քանակի վերաբերյալ տվյալներ



2015-2016 ուստարում ֆինանսական աջակցություն ստացած մագիստրատուրայի ուսանողների քանակի վերաբերյալ տվյալներ




2015-2016 ուստարում ֆինանսական աջակցություն ստացած հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների վերաբերյալ տվյալներ




Համալսարանում շարունակական աշխատանքներ են իրականացվել մասնագիտական կրթական ծրագրերի կադրային ապահովման, առաջատար դասախոսներով համալրման, գործնական ոլորտից ներգրավված դասախոսներին կրթական գործընթացին ինտեգրման նպատակներով, ինչպես նաև երիտասարդ մասնագետների ակադեմիական աջակցման ուղղությամբ՝ նրանց որակավորման բարձրացման, վերապատրաստման միջոցով:

2015-2016 ուսումնական տարում ԳՊՀ դասախոսական կազմում գիտական աստիճաններ ունեցողների վերաբերյալ տվյալներ



ԳՊՀ դասախոսական կազմում գիտական աստիճաններ ունեցողների թիվը՝ նախորդ և հաշվետու ուստարիներին



Հաշվետու ուստարում համալսարանը ՀՀ ԿԳ նախարարի հրամանի համաձայն ստացավ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով ասպիրանտական կրթության իրականացման թույլտվություն, իսկ գիտական թեմաների հաստատման թույլտվության ստացման համար համալսարանում առկա են ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի դրույթներով սահմանված պայմանները: Ըստ այդմ, համալսարանը դիմել է ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովին՝ ստանալու «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» Ը.00.03 թվանիշով մասնագիտության գծով ատենախոսությունների թեմաներ հաստատելու թույլտվություն:

Համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքները ներկայացնող ամենամյա գիտական հոդվածների ժողովածուն ընդգրկված է «Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողով» գործակալության կողմից սահմանված գիտական ժողովածուների ցուցակում:

ՀՀ բուհերի վարկանիշավորման համակարգում, բուհերի դասակարգման համապատասխան խմբում համալսարանը պահպանեց երկրորդ տեղը՝ զիջելով Հայաստանում ամերիկյան համալսարանին:

Հաշվետու ուստարվա երկրորդ կիսամյակում կատարվել է համալսարանի 2011-2016 ռազմավարական պլանում ամրագրված գործողությունների իրականացման մշտադիտարկում, ուրվագծվել են այն ուղղությունները, որոնց գծով կատարված աշխատանքները կարիք ունեն շարունակական բարելավման, ինչպես նաև հաշվի առնելով համալսարանի բոլոր կառուցվածքային սորաբաժանումների առաջարկները, զարգացման երկարաժամկետ հայեցակարգային ուղղությունները՝ մշակվել է համալսարանի 2016-2021թթ զարգացման ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը:

Ըստ համալսարանի 2016-2021թթ զարգացման ռազմավարական ծրագրի հայեցակարգային ուղղությունների՝ սահմանվել են հիմնական գործողությունները, նշվել

պատասխանատու ստորաբաժանումը, կատարվել է այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ առկա և պահանջվող ռեսուրսների գնահատում, նախանշվել են խոչընդոտները, գնահատվել ռիսկերը, սահմանվել են տարբեր ուղղություններով իրականացվելիք գործողությունների արդյունավետության ցուցիչները:

ԵՄ «TEMPUS.GOVERN» ծրագրի շրջանակներում աշխատանքներ են ծավալվել բուհում վարչարարության հիմնական գործընթացների վերանայման, նոր գործիքների ու մեթոդների մշակման և ներդնման ուղղությամբ, որոնք ավելի թափանցիկ և օպերատիվ կդարձնեն համալսարանի կառավարումը: Միաժամանակ, մեկնարկել է «Էլեկտրոնային դեկանատ» համակարգի նախագծումը:

Հաշվետու ուստարում Գավառի պետական համալսարանը ընտրվել է որպես Եվրոպական Միության «ERASMUS+DOC MEN» ծրագրի անդամ-բուհ: Ծրագիրը կոչված է մշակելու և ներդնելու նորարարական ուսումնական ծրագրեր միկրոէլեկտրոնիկայի, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի, ճարտարագիտության կրթական ոլորտներում:

Ծրագրին անդամակցում են բուհեր Հայաստանից, Ղազախստանից, Իսրայելից, Լեհաստանից, Բուլղարիայից, Իտալիայից և Գերմանիայից:

Կարևորելով համալսարանում ընթացող ուսումնական, գիտական, հետազոտական, լուսավորչական գործընթացների կանոնակարգային հիմքերը՝ համալսարանում հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հաստատվել, կամ բարելավվել են ներքոհիշյալ փաստաթղթերը.

1. ԳՊՀ ուսանողների իրավունքների և պարտականությունների, ուսանողական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ ուղեցույցը,
2. Գավառի պետական համալսարանի հաշվապահության աշխատակարգը,
3. ԳՊՀ-ում ասպիրանտուրայի գիտակրթական ծրագրի ընդունելության և ուսուցման կանոնակարգը:

Թեև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Կրթության մասին» ՀՀ օրենքները բուհերի համար նախատեսում են ինստիտուցիոնալ ինքնավարություն, այդուհանդերձ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում առկա են հակասական դրույթներ, որոնց առկայությունը համալսարանի ֆինանսավորման այլ մոդելների ներդրման կամ տնտեսական գործունեության ծավալման համար խոչընդոտ են հանդիսանում, և համալսարանի ֆինանսավորման աղբյուրը հիմնականում ուսանողների վարձավճարներն են: Ոստի, ֆինանսական վիճակի բարելավման նպատակով համալսարանը սահմանված կարգով ձեռք բերեց նոր կազմակերպարավական կարգավիճակ՝ վերակազմակերպվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից գիտահետազոտական և ուսումնամեթոդական նյութերի տպագրման աշխատանքները, համալսարանի գիտխորհրդի կողմից տպագրության են երաշխավորվել ներքոհիշյալ ձեռնարկները.

- Սարգսյան Ռ.՝ «Практикум по словообразованию современного русского языка»,
- Ռափյան Ն.՝ «Արտադրանքի որակի կառավարման արդյունավետության գնահատումը»,

- Մուխսիխաշոյան Ա.՝ «Видо-временные соотношения в сложных предложениях с придаточными изъяснительными»,
- Խաչատրյան Գ.՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց,
- Թարփոշյան Հ.՝ «Արտադրանքի որակի կառավարման արդյունավետության գնահատումը»,
- Առաքելյան Վ., Թարփոշյան Հ.՝ «Մարքեթինգային գործունեության վերլուծության մեթոդներ»:

Բուհում նյութատեխնիկական բազայի թարմացման ուղղությամբ ևս իրականացվել են ծավալուն աշխատանքներ, բարձրացել է համացանցի մատչելիության աստիճանը ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար, կառուցվածքային ստորաբաժանումները համալրվել են արդի տեխնիկական միջոցներով:

Համաշխարհային բանկի միջոցներով Բնագիտական ֆակուլտետում բացվեց ուսումնական, հետազոտական լաբորատորիա, կահավորված ժամանակակից սարքավորումներով ու նյութերով՝ քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի, աշխարհագրության և այլ հարակից բնագիտական դասընթացների գործնական, փորձարարական աշխատանքների, հետազոտությունների իրականացման համար: Հիմնադրման օրվանից լաբորատորիան ծառայում է նաև մարզի հանրակրթական միջնակարգ և ավագ դպրոցների համապատասխան դասընթացների անցկացման, փորձերի կատարման համար:

Հաշվետու ժամանակաշրջանում պարբերաբար բուհ են այցելել մարզի տարբեր դպրոցների բարձր դասարանների աշակերտները, և այդ հանդիպումների շրջանակներում բացի բնագիտական լաբորատորիայում դասեր և փորձեր անցկացնելուց, աշակերտների համար կազմակերպվել են բազմազան ձևաչափերով միջոցառումներ՝ գրական-գեղարվեստական ցերեկոյթներ, ինտելեկտուալ խաղեր, մասնակցություն ուսանողական գիտաժողովին, շրջայց ԳՊՀ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական թանգարանում, մասնագիտական կողմնորոշման համար մասնակցել են դասատվության գործընթացին, հանդես եկել իրենց հուզող հարցադրումներով, ստացել մասնագիտական խորհրդատվություններ:

Կարևորելով ուսանողներից, շրջանավարտներից, դասախոսներից, պրակտիկաների ղեկավարներից, գործատուներից նախորդ ուստարում կատարված հարցումների ընթացքում ստացված արձագանքները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից արված առաջարկություններն ու նկատառումները՝ աշխատանքներ են ծավալվել մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային փոփոխությունների իրականացման, կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ: Մշակվել են նոր դասընթացներ, արդիականացվել իրականացվող դասընթացների բովանդակությունը, մասնավորապես, Պատմության ամբիոնում մշակվել և իրականացվել է «Հայ սփյուռքի պատմության հիմնախնդիրները», Իրավագիտության ամբիոնում՝ «Սահմանադրական ինստիտուտները ՀՀ-ում», Հասարակական գիտությունների ամբիոնում՝ «Սովորողների գիտելիքների ստուգումը և գնահատումը», Հաշվապահական հաշվառման ամբիոնում՝ «Ծառայությունների ոլորտի կազմակերպությունների հաշվապահական հաշվառում և հարկում», իսկ Ինֆորմատիկայի և

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում մշակվել են «Մաթեմատիկական անալիզ», «Անալիտիկ երկրաչափություն», «Համակարգիչների կիրառում» «Ճարտարագիտական և համակարգչային գրաֆիկա», «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ», «Ֆունկցիաների բազմանդամային մոտարկում», «Համակարգչային ցանցերի նախագծում և իրականացում», «Ցանցային համակարգերի պաշտպանություն և անվտանգություն», «Առաջատար Mobile տեխնոլոգիաներ» նոր պարտադիր և «Հաշվողական համակարգերի և ցանցերի սերվերներ», «Ժամանակակից պրոցեսորներում գաղտնագրման մեթոդների ապարատային իրականացում» կամընտրական դասընթացները, որոնք կիրականացվեն 2016-2017 ուստարում:

Հանրապետությունում 2014թ. հաստատված նոր մասնագիտությունների ցանկին համապատասխան մշակվել են 9 մասնագիտությունների ուսումնական պլանները, դրանցից մանկավարժի որակավորմամբ 6 մասնագիտությունների գծով սահմանվել են կրթական վերջնարդյունքները, վերանայվել են հոգեբանամանկավարժական կրթամասի մոդուլները, ուսանողների մանկավարժական պրակտիկային հատկացվող կրեդիտների քանակը, ճշգրտվել դրանց անցկացման վայրերը, կնքվել նոր պայմանագրեր պրակտիկաների անցկացման նպատակով:

Հաշվետու ուստարում համալսարանում կազմակերպվեց ամենամյա 18-րդ գիտաժողովը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյա հոբելյանին: Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան 89 գիտաշխատողներ, տպագրության է հանձնվել թվով 101 հեղինակների 87 հոդվածներ, հոդված-դասախոս հարաբերությունը՝ 0.73 է, նախորդ ուստարվա 0.56-ի դիմաց:

Կրթության որակի ապահովման և վերահսկման գործում շահառուների դերի բարձրացման, որակի մշակույթի արմատավորման նպատակով պարբերաբար կատարվել են անանուն թղթային, էլեկտրոնային հարցումներ ուսանողների, շրջանավարտների շրջանում, ամփոփվել են արդյունքները, քննարկվել ռեկտորատում, ներկայացվել ԳՀՀ գիտխորհրդին, գիտխորհրդի կողմից ենթակառուցվածքային ստորաբաժանումներին տրվել են հանձնարարականներ՝ համապատասխան ուղղություններով բարելավման ուղիների որոնման, իրականացվող գործընթացների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Հաշվետու ուստարում իրականացվեց բուհի ինքնավերլուծություն բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից, շահակիցների լայն ներգրավվածությամբ, նրանց կողմից կատարված դիտարկումների, ներկայացված SWOT վերլուծությունների հաշվառմամբ: Մասնակցելով ԵՄ «TEMPUS.GOVERN» ծրագրին՝ բուհը պատրաստակամություն հայտնեց ՀՀ Կառավարության կողմից հաստատված չափանիշներով և չափորոշիչներով, ծրագրի միջոցների հաշվին անցնելու ենթակառուցվածքային հավատարմագրում և հաշվետու ուստարվա վերջին բուհը ենթակառուցվածքային հավատարմագրում անցնելու հայտ, ապա նաև ինքնավերլուծության զեկույցը՝ հայերենով և անգլերենով, հանձնեց ՀՀ «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին, իրականացնելով ՀՀ հավատարմագրման կարգի պահանջներին համապատասխան հերթական քայլերը:

Ուսանողների, դասախոսների շրջանում պարբերաբար կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ՝ քննարկումներ, աշխատաժողովներ, խորհրդատվություններ,

վարպետության դասեր, այդ թվում՝ հանրապետության, արտերկրի գիտական, ակադեմիական հանրույթի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մասնավորապես, համալսարանն հյուրընկալել էր Եվրոպական Միության «TEMPUS. RETHINK – Կրթության բարեփոխում՝ գիտելիքների միջազգային փոխանակման միջոցով» ծրագրի գործընկերներին՝ կազմակերպելով միջազգային աշխատաժողովը: Պորտուգալիայի, Իսպանիայի, Գերմանիայի, Ուկրաինայի, Բելոռուսի, Մոլդովայի և Վրաստանի բուհերից ժամանած պատվիրակությունների ներկայացուցիչները բուհի վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ քննարկեցին բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգայնացման խնդիրները, բարձրագույն ազգային կրթությունից դեպի միջազգայնացում տանող ուղիները, ԳՏՎ միջազգայնացման տեսլականը, քաղաքականությունը, փուլերը, ցուցանիշները, ուղիներն ու խնդիրները: Նույն ծրագրի շրջանակներում գործընկեր բուհի՝ Իսպանիայի Կոռունայի համալսարանի բնագիտական ֆակուլտետի դասախոս, պրոֆեսոր Անտոնիո Պաս Գոնսալեսի հետ հանդիպման ժամանակ անրադարձ կատարվեց դասընթացների կազմակերպմանը, համատեղ կրթական ծրագրի իրականացման պայմանագրում նախատեսված առարկաների ցանկին, դրանց ելքային արդյունքներին ու գնահատման չափանիշներին:

Ուսանողների մոտ գործնական հմտությունների զարգացման համար, բացի ուսումնական պլանով նախատեսված պրակտիկաներից, հաճախակի կազմակերպվում են նաև կարճատև ուսուցողական այցելություններ հանրապետության տարբեր գիտական, արտադրական կազմակերպություններ, օրինակ Հաշվապահական հաշվառման, Ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման բաժինների ուսանողների համար կազմակերպվել էր արտադրական պրակտիկա Արենիի գինու գործարանում:

Կարևորելով երիտասարդների հոգևոր-մշակութային դաստիարակությունը՝ համալսարանը սերտորեն համագործակցում է Հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի, Գևորգյան ճեմարանի և Վազգենյան դպրանոցի հետ:

Համագործակցության արդյունքում բուհում պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ, տարբեր թեմաներով անցկացվում սեմինար-քննարկումներ՝ ուսանողների բարոյահոգեբանական, հոգևոր-մշակութային դաստիարակության նպատակով:

Ուսանողների ընդհանուր աշխարհայացքային իրազեկությունների ընդլայնման նպատակով համալսարանում կազմակերպվում են հանրային նշանակություն ունեցող թեմաներով տարբեր միջոցառումներ, մասնավորապես, կազմակերպվեց սեմինար-քննարկում՝ նվիրված Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հեռանկարներին: Հանդիպման ընթացքում ցուցադրվեց Եվրասիական զարգացման բանկի 10-րդ միջազգային համաժողովի տեսանյութից հատված, որտեղ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Թավադյանը, ով հաճախակի է անցկացնում վարպետության դասեր ԳՏՎ ուսանողների համար, ներկայացրել է միջազգային ինտեգրացիոն տնտեսական միավորման վերաբերյալ մի շարք դրույթներ:

ԳՏՎ տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատի և առաջին կուրսի ուսանողների նախաձեռնությամբ հաշվետու ուստարում կազմակերպվել են արվեստին նվիրված միջոցառումներ, մասնավորապես, հետաքրքիր տեսանյութերի, լուսանկարների և հնչած

երաժշտության միջոցով ուսանողները ներկայացրել են աշխարհահռչակ արվեստագետներ Պաբլո Պիկասոյի, Լեոնարդո դա Վինչիի, Սալվադոր Դալիի, գրող, հրապարակախոս Գաբրիել Գարսիա Մարկեսի, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի, Չարլի Չապլինի կյանքն ու գործունեությունը, անդրադարձել նրանց ստեղծած գլուխգործոցներին:

Անվտանգ երթևեկության կանոններին նվիրված սեմինար-քննարկումը՝ կազմակերպված Բնագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ, նպատակ ուներ լսարանին ներկայացնելու երթևեկության կանոնները, մեկնաբանելու ճանապարհային նշանների և համապատասխան գծանշումներից յուրաքանչյուրի նշանակությունը:

Ուսանողների գրական-գեղարվեստական, մշակութային գիտելիքների զարգացման նպատակով, ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու համար պարբերաբար կազմակերպվում են գրական ցերեկույթներ՝ նվիրված հայ և արտասահմանյան գրականությանը:

Ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքները ակտիվացնելու, նրանց՝ ուսումնական գործընթացի որակի վերահսկման աշխատանքներում առավելագույնս ընդգրկելու, նոր կառուցակարգեր կիրառելու նպատակով շարունակվել են ուսանողների մասնակցությունը հանրապետական ուսանողական կառույցների աշխատանքներին: Ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի /ՀԵՀ/ Գեղարքունիքի մարզային կենտրոնի համագործակցության արդյունքում պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ, սեմինար-քննարկումներ, տարաբնույթ ձեռնարկներ:

Իրականացվել է համալսարանում արդեն ավանդույթ դարձած առկա և հեռակա ուսուցման համակարգերում լավագույն ուսանողի պատվավոր կոչմանն արժանացած ուսանողների պարգևատրման, մեծարման և լավագույն օրինակի տարածմանը նվիրված միջոցառում:

Շարունակվել են հանրապետության տարբեր բուհերի ուսանողական կառույցների հետ համատեղ աշխատանքները, մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում տեղի ունեցավ Գավառի և Երևանի պետական համալսարանների ուսանողական գիտական ընկերությունների նախաձեռնությամբ սեմինար-քննարկում՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի զբոսաշրջային ներուժի և դրա օգտագործման արդի հիմնախնդիրների վերլուծությունը» թեմայով, որի ընթացքում ուսանողները և դասախոսները անդրադարձան զբոսաշրջությանը, որպես մարզի տնտեսության զարգացման կարևոր գործոն և ներկայացրին մարզում զբոսաշրջության զարգացման խոչընդոտները:

Ամբողջ ուստարվա ընթացքում ուսանողների համար կազմակերպվել են լրացական դասընթացներ՝ «Նկարչական ստուդիա», «Դիզայնի ստուդիա», «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» մոդուլների շրջանակում, իրավաբանական կլինիկայում, տնտեսագետների և այլ ակումբներում, իսկ դասախոսական անձնակազմի օտար լեզվի իմացության, հաղորդակցման մակարդակի բարձրացման համար, օտարալեզու դասընթացների մշակման և իրականացման նպատակով շարունակվել են նորագույն մեթոդներով կազմակերպված անգլերենի բազմամակարդակ ուսուցման դասընթացները:

Բարձրացել է ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների դերը կրթության կազմակերպման գործում, համալսարանի կողմից մշտապես ցուցաբերվել է աջակցություն՝

նրանց և տարածաշրջանի, հանրապետության այլ երիտասարդական կառույցների, հասարակական կազմակերպությունների, ՀՀ բուհերի ուսանողական խորհուրդների հետ ակտիվ համագործակցության համար: Ապրիլյան քառօրյա պատերազմից տուժած Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի դպրոցներին համալսարանի կողմից նվիրաբերվեց 250քմ ապակի, ուսանողների և անձնակազմի հանգանակությամբ հավաքած միջոցներով սնունդ, հագուստ, առաջին անհրաժեշտության պարագաներ, ուսանողների կողմից բազմաթիվ հայրենասիրական, ոգևորող նամակներ հղվեցին սահմանապահներին, կամավորներին, զինվորներին:

Ընդլայնվել է տարբեր հաստատությունների հետ համագործակցությունը, հաշվետու ուստարում հուշագրեր և նոր պայմանագրեր են կնքվել հանրապետության և արտերկրի տարբեր կազմակերպությունների հետ, շարունակվել են աշխատանքները ՀՀ կրթական, գիտական, հետազոտական հաստատությունների հետ:

Ելնելով ՀՀ կրթական համակարգին ներկայացվող արդի պահանջներից, Գեղարքունիքի պետական տարածաշրջանային պետական քոլեջի սովորողներին՝ նրանց նախասիրություններին և կարողություններին համապատասխան շարունակական կրթության հարցում աջակցելու, համալսարանում գործող մասնագիտությունների վերաբերյալ պատկերացումներ և կողմնորոշում ձևավորելու նպատակով կնքվեց համագործակցության հուշագիր համալսարանի և քոլեջի միջև:

Հաշվետու ուստարում պայմանագիր կնքվեց նաև համալսարանի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև ուսանողների ուսումնաարտադրական, նախաավարտական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպման, ինչպես նաև որպես մագիստրոսական թեզի կամ ավարտական աշխատանքի ղեկավար նախարարության մասնագետի ներգրավման նպատակով:

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» փակ բաժնետիրական ընկերությունում ուսանողների պրակտիկաների անցկացման, մասնագիտական առարկաների համատեղ դասավանդման, համատեղ հետազոտական-վերլուծական բնույթի աշխատանքների իրականացման, գիտամանկավարժական գործունեության արդյունքների համատեղ քննարկման նպատակներից ելնելով՝ համագործակցության հուշագիր կնքվեց ընկերության և համալսարանի միջև:

Դպրոց-բուհ կապի ամրապնդման, դպրոցին անհատույց ուսումնամեթոդական ձեռնարկների, ուղեցույցների, գիտական պարբերականների տրամադրման, մեթոդական աշխատանքների աջակցության ցուցաբերման, աշակերտների բնագիտական դասընթացները համալսարանի բնագիտական լաբորատորիայում անցկացնելու, աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը, ուսուցիչների որակավորման բարձրացմանը նպաստելու և մի շարք այլ նկատառումներով հուշագիր կնքվեց նաև համալսարանի և Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի միջև:

Համալսարանում ընթացող կրթական, գիտական, հետազոտական գործընթացների, լրացուցիչ կրթական ծառայությունների, ազգային և միջազգային ծրագրերի, նորությունների, նախաձեռնությունների, հետագա ծրագրերի, ուսանողական առօրյայի և այլ հանրությանը հետաքրքրող նյութերի վերաբերյալ համալսարանի պաշտոնական կայքում

օպերատիվ տրամադրվել է տեղեկատվություն, համակողմանիորեն պարզաբանվել յուրաքանչյուր հետադարձ արձագանք, հարցադրում:

2016-2017 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական զարգացման ռազմավարական ուղղությունները

ԳՀՂ 2016-2021թթ. ռազմավարական ծրագրին համապատասխան՝ 2016-2017 ուստարում պլանավորվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Առկա և հեռակա ուսուցման համակարգերում իրականացվող բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) կառուցվածքի վերանայում՝ համապատասխանեցնելով ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների նոր ցանկին, որակավորումներին համապատասխանող կրթական վերջնարդյունքների սահմանում, առանձին մասնագիտությունների գծով հոգեբանամանկավարժական կրթամասին, մանկավարժական պրակտիկաներին հատկացվող կրեդիտների տրման մեթոդաբանության մշակում, դրանց համապատասխանեցում Որակավորումների ազգային շրջանակին, Որակավորումների ոլորտային շրջանակներին, ազգային և միջազգային հենանիշերին:
2. Առարկայական ծրագրերի արդիականացում՝ սահմանելով յուրաքանչյուր դասընթացի կրթական վերջնարդյունքները, դրանց հետ փոխկապակցված ուսուցման, ուսումնառության և ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման մեթոդները:
3. Առկա ուսումնամեթոդական, կադրային ռեսուրսների ուսումնասիրում, կրթական ծրագրերի ընտրում, հետևողական աշխատանքների ծավալում՝ դրանք օտարալեզու դարձնելու, հեռահար ուսուցում կազմակերպելու ուղղությամբ:
4. Գործատուների, դիմորդների, գործազուրկների, կանանց, արտաքին այլ շահառուների շրջանում կրթական կարիքների բացահայտմանը միտված հարցումների իրականացում, արդյունքների վերլուծում, լրացուցիչ կրթական մոդուլների մշակում:
5. Մագիստրատուրայում Դեղագործական քիմիա, Սերվիս, Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտությունների գծով կրթության կազմակերպման լիցենզիայի համար անհրաժեշտ կանոնակարգային հենքի և անհրաժեշտ այլ փաստաթղթերի պատրաստում և ներկայացում, կրթության կազմակերպման արտոնման հետագա պահանջների բավարարում:
6. ՄԿԾ-ների վերջնարդյունքների և ուսպլանների բոլոր մոդուլների վերջնարդյունքների համադրում, շեղումների բացվահայտում, համապատասխանեցման աշխատանքների իրականացում:
7. Ներքին և արտաքին շահառուների շրջանում իրականացրած հարցումների արդյունքների ամփոփում, համապատասխան հաշվետվությունների, ուղեցույցերի մշակում, հրապարակում, տարածում:
8. Ուսուցանվող կրթական ծրագրերի տեղեկագրքերի թարմացում, կամընտրական, պարտադիր մոդուլների նկարագրերի, գնահատման համակարգի, դրա

- մեթոդաբանության, շրջանավարտի հետագա կարիերայի հնարավորությունների, ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների նկարագրությունների ներառմամբ տեղեկագրքերի մշակում կամ լրամշակում, տպագրում, տարածում, շնորհվող կրեդիտների մասին ուսանողների շրջանում իրազեկության ապահովում:
9. Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, հանրակրթական միջնակարգ և ավագ դպրոցներին ՄԿԾ-ների տեղեկագրքերի տրամադրում, հնարավոր դիմորդների շրջանում մասնագիտական կողմնորոշման այլ միջոցառումների իրականացում:
 10. Խորհրդատուների, կրթական ծրագրերի ղեկավարների ինստիտուտի, ուսանողի կրթական անհատական հետագծի կառուցման մշակույթի շարունակական զարգացում:
 11. Միջմասնագիտական, ազգային, միջազգային մակարդակներում ուսանողների ակադեմիական շարժունության հնարավորությունների ընդլայնում, կրեդիտների կուտակողական գործառույթի իրականացման շարունակական զարգացում:
 12. «E-learning.GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի, դրանում ներառված առարկայական ծրագրերում էլեկտրոնային ռեսուրսների առկայության, դրանց հասանելիության աստիճանի մշտադիտարկում, բարելավում:
 13. Էլեկտրոնային գրադարանի համալրում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ:
 14. Ուսանողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքների գնահատման նոր մեթոդաբանության մշակում՝ գիտելիք, կարողություն, հմտություն իրազեկությունների գնահատման տեսանկյունից:
 15. Ներքին և արտաքին շահառուների հետ հետադարձ կապի ապահովման նոր կառուցակարգերի մշակում և ներդնում, այդ գործում ուսանողական ինքնակառավարման մարմինների ներգրավում:
 16. Համալսարանի ամենամյա ինքնավերլուծության անցկացման աշխատանքային խմբերի կարողությունների շարունակական զարգացման ծրագրերի մշակում և գործարկում, ենթակառուցվածքային հավատարմագրման նախապատրաստական աշխատանքների իրականացում, հավատարմագրման պահանջների կատարում:
 17. Դասախոսական կազմի գործունեության գնահատման բազմագործոն համակարգի մշակում և գործարկում, նրանց վարկանիշային գնահատման համակարգում հրատարակած գիտական աշխատանքների հաշվառում, բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում դասախոսների հրապարակումների խրախուսում:
 18. ՈւԳԸ աշխատանքների ակտիվացում, հետազոտական ծրագրերում ընդգրկված ուսանողներին և դասախոսներին խրախուսման կառուցակարգերի մշակում և գործարկում:
 19. ԳՊՀ-ում ասպիրանտական գիտակրթական ծրագրի իրականացման, որակի ապահովման, աստիճանաշնորհման կարգերի, ընթացակարգերի, ասպիրանտների և գիտական ղեկավարների հաշվետվողականության համակարգի մշակում:
 20. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» ասպիրանտական ծրագրում ընդունելության համար անհրաժեշտ ընթացակարգի, փաստաթղթերի մշակում, տեղեկատվության տարածում հնարավոր շահառուների շրջանում, ընդունելության

- կազմակերպում, կրթական և հետազոտական բաղադրիչներին կրեդիտների հատկացման մեթոդաբանության, ասպիրանտական կրթության ուսումնական պլանի մշակում:
21. Ամբիոնների հետազոտական գործունեության ծրագրերի մշակում, գիտական ուղղությունների ամրագրում, հետազոտական աշխատանքների տարեկան հաշվետվությունների հրապարակում:
 22. ԳՊՀ ամենամյա 19-րդ գիտաժողովի կազմակերպում և իրականացում՝ նվիրելով ԳՊՀ պատվավոր բարերար Ժիրայր Նիշանյանի ծննդյան 80-ամյա հոբելյանին:
 23. Միջազգային և հանրապետական հետազոտական դրամաշնորհային ծրագրերին ակտիվ մասնակցության ապահովում:
 24. Հետազոտական ծրագրերում գործարար համայնքի ներգրավում, ներդրումների ապահովում և դրանց նպատակային օգտագործում:
 25. Համալսարանի կանոնակարգային բազայի շարունակական արդիականացում, համապատասխանեցում ոլորտի պետական, գերատեսչական ակտերին, գործող կանոնակարգերի, ընթացակարգերի բարելավում: Կանոնակարգման ենթակա ոլորտների համար անհրաժեշտ նոր ընթացակարգերի մշակում և գործարկում:
 26. Համալսարանի կառավարման գործում, որոշումների կայացման մեջ ուսանողական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացում:
 27. Վարչարարության նոր գործիքների մշակում և ներդնում, թափանցիկություն և օպերատիվություն ապահովող մեթոդների կառավարում, «Էլեկտրոնային դեկանատ» համակարգի նախագծում և ներդրում:
 28. Բուհի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերի, գործառույթների վերանայում, դրանք համապատասխանեցնելով բուհի ռազմավարական նպատակների իրականացմանը, «ԳՊՀ հիմնադրամի կանոնադրությանը»:
 29. Համալսարանական գործունեության բոլոր ուղղություններով գործընթացների արդյունավետության գնահատման ցուցիչների սահմանում, դրանց հասանելիության աստիճանի մշտադիտարկում:
 30. Պետական ֆինասավորման հնարավորությունների ընդլայնում, ֆինանսավորվող գիտակրթական ծրագրերի մշակում և իրականացում, ֆինանսական ռիսկերի մշտական կանխատեսում և դրանց մեղմման պլանավորում:
 31. Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի կանոնակարգի վերանայում՝ ներառելով արտաքին կապերի ընդլայնման գործառույթներ:
 32. Կրթության միջազգայնացման նպատակով համացանցային հարթակի մշակում, համալսարանի գործունեության բոլոր ոլորտների միջազգայնացման կարևորում:
 33. Հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում հետադարձ կապի մշտադիտարկման գործուն համակարգի մշակում և ներդնում, հանրակրթական և ավագ դպրոցների մեթոդական կարիքների ուսումնասիրում, դրանց բավարարման համար ծրագրերի մշակում:
 34. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության հուշագրերի մշակում, ուժը կորցրած պայմանագրերի վերահաստատում:

35. Համալսարանը՝ մարզում որպես գերազանցության կենտրոնի հռչակում, հանրությանը մատուցվող ծառայությունների բազմազանեցում:
36. ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի դրույթների հետևողական իրականացում, բարեվարքության կանոնների մշակում:

**Ն. Ա. Կուրուզյան՝
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր**

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ասոյան Թաթուլ Արսիկի,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դեկանի տեղակալ՝ Սարգսյան Ռուզաննա Մարադի

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
031300	Անգլերեն լեզու և գրականություն

Մասնագիտացումներ՝

բակալավր՝ բանասիրության բակալավր

մագիստրոս՝ բանասիրության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 137

Շրջանավարտների թիվը՝ 65

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Գավառի պետական համալսարանը՝ որպես կրթական ծրագրեր իրականացնող և տարածաշրջանը մասնագետներով ապահովող բարձրագույն ուսումնական հաստատություն, մշտապես ընթանում է ինքնակատարելագործման ճանապարհով: Նկատի ունենալով մարդկային գործունեության բոլոր ոլորտներում համաշխարհային սրընթաց զարգացումները՝ համալսարանն իր գործունեությունն իրականացնում է աշխատաշուկան մրցունակ և որակյալ կադրերով ապահովելու նպատակադրումով: Այս առաքելությունն իրագործելու առումով կարևոր էր ԳՊՀ 2016-2021թթ. զարգացման և հակակոռուպցիոն ռազմավարական 5-ամյա ծրագրերի ընդունումը, որոնցում արտացոլված են համալսարանի առջև դրված խնդիրները, նախանշված են զարգացման հիմնական ուղղությունները, կազմվել է գործողությունների իրականացման պլանը: Մյուս համահամալսարանական կարևորություն ունեցող իրողությունը բուհի ինքնավերլուծության ուղղությամբ կատարված աշխատանքն էր, որն իրականացվեց բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների համաչափ ու ներդաշնակ գործունեությամբ: Եվ վերջապես, իրադարձություն էր նաև համալսարանի կազմակերպատարական կարգավիճակի փոփոխությունը. համալսարանը ՊՈԱԿ-ից վերակազմակերպվեց հիմնադրամի:

Բանասիրական ֆակուլտետը իր գործունեությունը ծավալում է ինչպես համահամալսարանական խնդիրների լուծման, այնպես էլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու ուղղություններով: Ֆակուլտետում տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն: Նպատակահարմար է համարվել միավորել ռուսաց լեզվի և գրականության ու անգլերեն լեզվի ամբիոնները՝ վերակազմակերպելով մեկ՝ օտար լեզվի և գրականության ամբիոնի: Ամբիոնի վարիչ է ընտրվել բանասիրական գիտությունների թեկնածու Գայանե Միրիբյանը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ: Առկա ուսուցման համակարգում միասնական և կենտրոնացված կարգով անցկացված քննությունների արդյունքում բանասիրական ֆակուլտետ է ընդունվել 21 ուսանող. բակալավրիատ՝ 20, մագիստրատուրա՝ 1: Բակալավրիատի 20 ուսանողներից 11-ը ընդունվել է հայոց լեզվի և գրականության բաժին, իսկ 9-ը՝ անգլերեն լեզվի և գրականության: Ընդհանուր առմամբ ֆակուլտետում 2015-16 ուսումնական տարում սովորել են 137 ուսանողներ (նախորդ ուստարում՝ 149): Ուսանողների շարժն այսպիսին է. այլ ֆակուլտետներից և բուհերից տեղափոխվածներ՝ 2, այլ բուհ տեղափոխվածներ՝ 0, այլ ֆակուլտետներ և բուհեր տեղափոխվածներ՝ 0, վերականգնվածներ՝ 2, հեռացվածներ՝ 9, ազատվածներ՝ 1, տարկետում ստացողներ՝ 1:

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ: Ուսանողների ակադեմիական առաջադիմությունը բակալավրիատում կազմել է 86,96% (նախորդ ուստարում՝ 76,77%), մագիստրատուրայում՝ 100,00% (նախորդ ուստարում՝ 88,66%): Ֆակուլտետում առաջադիմությունը կազմել է 87,14% (նախորդ ուստարում՝ 80,54%) : Ձմեռային քննաշրջանում գրանցվել են հետևյալ

արդյունքները. բակալավրիատի 1-ին կուրս – 95,00% (ՀԼԳ՝ 90,91%, ԱԼ՝ 100,00%), 2-րդ կուրս – 65,22% (ՀԼԳ՝ 75,00%, ՌԼԳ՝ 40,00%, ԱԼ՝ 70,00%), 3-րդ կուրս – 89,66% (ՀԼԳ՝ 88,89%, ՌԼԳ՝ 100,00%, ԱԼ՝ 87,50%), 4-րդ կուրս – 86,05% (ՀԼԳ՝ 84,21%, ՌԼԳ՝ 100,00%, ԱԼ՝ 84,21%), ընդամենը ըստ բակալավրիատի՝ 84,35%, մագիստրատուրայի 1-ին կուրս – 100,00% (ԺՀԼ և թարգմ. գործ), 2-րդ կուրս – 76,19% (ԺՀԼ և թարգմ. գ՝ 100,00%, Հայ գր. պատմ՝ 40,00%, ՌԼԳ և թարգմ. գործ՝ 100,00%, ԱԼ և թարգմ. գործ՝ 71,43%), ընդամենը մագիստրատուրայում՝ 77,27%: Ֆակուլտետում ձմեռային քննաշրջանի ակադեմիական առաջադիմությունը կազմել է 83,21%: Գարնանային քննաշրջանի արդյունքները այսպիսին են. բակալավրիատի 1-ին կուրս – 100,00% (ՀԼԳ՝ 100,00%, ԱԼ՝ 100,00%), 2-րդ կուրս – 95,00% (ՀԼԳ՝ 83,33%, ՌԼԳ՝ 100,00%, ԱԼ՝ 100,00%), 3-րդ կուրս – 72,41% (ՀԼԳ՝ 100,00%, ՌԼԳ՝ 75,00%, ԱԼ՝ 56,25%), ընդամենը ըստ բակալավրիատի՝ 86,96%, մագիստրատուրայի 1-ին կուրս – 100,00% (ԺՀԼ և թարգմ. գործ), ընդամենը ըստ մագիստրատուրայի՝ 100,00%:

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Ատեստավորման քննություններ անցկացվել են և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում: Բակալավրիատում քննություններ հանձնել և ավարտական աշխատանքներ պաշտպանել են ընդհանուր առմամբ 44 ուսանողներ: Արդյունքները. հայոց լեզվի և գրականության բաժնի 19 ուսանողներից գերազանցության դիպլոմ է ստացել 7-ը, ավարտական աշխատանքների պաշտպանությունից A+ ստացել է 2 ուսանող, A՝ 8, A՝ 2, B+՝ 4, B՝ 2, B՝ 1: Ռուսաց լեզվի և գրականության բաժնի 6 ուսանողներից գերազանցության դիպլոմ է ստացել 2-ը, ավարտական աշխատանքների պաշտպանությունից A+ ստացել է 2 ուսանող, B+՝ 2, B՝ 2: անգլերեն լեզվի և գրականության բաժնի 19 ուսանողներից գերազանցության դիպլոմ է ստացել 6-ը, գերմաներենի քննության արդյունքներն են՝ A+ 2 ուսանող, A՝ 3, A՝ 6, B+՝ 3, B՝ 3, B՝ 1, անգլերենի քննության արդյունքներն են՝ A+ 1 ուսանող, A՝ 8, A՝ 2, B+՝ 1, B՝ 2, B՝ 2, C՝ 3: Մագիստրատուրան գերազանցությամբ են ավարտել ԺՀԼ և թարգմ. գործ մասնագիտությամբ սովորող 5 ուսանողներից 3-ը, հայ գրակ. պատմ. մասնագիտությամբ՝ 5 ուսանողներից 4-ը, ՌԼԳ և թարգմ. գործ մասնագիտությամբ՝ 4 ուսանողներից 4-ը, ԱԼ և թարգմ. գործ մասնագիտությամբ՝ 7 ուսանողներից A+ 3 ուսանող, A՝ 3, A՝ 1:

Ըստ հանձնաժողովների նախագահների կարծիքների՝ քննություններն անցել են բարոյագործական նորմալ պայմաններում: Կարգապահությունը բարձր մակարդակի վրա է եղել, և հանձնաժողովներն աշխատել են առանց խոչընդոտների: Քննությունները կազմակերպված էին պատշաճ մակարդակով, հարցաշարերը և քննական տոմսերի բովանդակությունը համապատասխանում էին դասընթացներին ներկայացվող պահանջներին, առկա են եղել ատեստավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, ուսանողների պատասխանները ձայնագրվել են: Շրջանավարտները ցուցաբերել են գիտելիքների պատշաճ մակարդակ, բավարար մակարդակով տիրապետել են ռուսերենին, անգլերենին և գերմաներենին: Մագիստրոսական թեզերը և ավարտական աշխատանքները կատարված էին պատշաճ մակարդակով, թեմաները արդիական էին և պարունակում էին նորոյթներ: Պաշտպանությունների մեծ մասը ընթացել է շնորհանդեսի տեսքով, օգտագործված գրականության ցանկում շատ են եղել նոր ուսումնասիրությունները: Արվել են որոշ դիտողություններ՝ կապված ընթերցանության, թարգմանության համար նախատեսված հոդվածների ընտրության հետ: Առաջարկություններ են արվել ուշադրություն դարձնել նախատեսված գեղարվեստական

երկերի ընթերցանությանը, ներկայացնել թեզերի համառոտագրեր, թեզերի գնահատման ժամանակ հաշվի առնել ղեկավարի, գրախոսի կարծիքները և աշխատանքի ներկայացման մակարդակը, հարցաշարերում ապահովել լեզվական և գրական նյութերի համամասնությունն ըստ բաժինների: Արված դիտողություններն ու առաջարկությունները կքննարկվեն և ըստ անհրաժեշտության՝ հաշվի կառնվեն:

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ: Ուսումնական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ժամանակի պահանջներն արտահայտող կրթական ծրագրերի ներմուծմամբ: Ամբիոններում մշտապես քննարկվել, վերանայվել ու թարմացվել են ուսպլաններն ու առարկայական ծրագրերը: Երկրորդ կիսամյակում աշխատանքներ են տարվել՝ կապված մասնագիտական որակավորման փոփոխության հետ: Հատկապես ուշադրություն է դարձվել մանկավարժական բնույթի առարկաների ներմուծման և մագիստրատուրայում բակալավրիատի կրկնվող առարկաները բացառելու ու նորերը ներառելու վրա:

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ: Բանասիրական ֆակուլտետում կրթական ծրագրերն իրականացնում են բարձրակարգ մասնագետներ, որոնք ունեն դոկտորի և թեկնածուի գիտական աստիճաններ, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ: Հաշվետու ժամանակաշրջանում մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան է ստացել օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Գ.Սարգսյանը, դոցենտի գիտական կոչում՝ հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Վ.Ներսիսյանը: Նույն ամբիոնի դասախոս Ն.Ղազարյանը Հայաստանի գրողների միության վարչության կողմից պարգևատրվել է «Գրական վաստակի համար» մեդալով: Դասախոսները, ինչպես միշտ, ակտիվորեն մասնակցեցին համալսարանում անցկացված դեկտեմբերյան ամենամյա գիտաժողովին՝ նվիրված Հայաստանի անկախության 25-ամյա հոբելյանին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կազմակերպված գիտաժողովներին (Վ.Կատվայան, Թ.Ասոյան, Վ.Ներսիսյան): Հրատարակվել են ուսումնամեթոդական ձեռնարկներ (Ա.Մուխսիխաչյան, Ն.Ռափյան), կազմակերպվել են բաց դասեր (Վ.Ներսիսյան, Ն.Ղազարյան): ԲՖ դասախոսները մասնակցում են Եվրամիության կրթական ծրագրերով նախատեսված տարբեր կարգի միջոցառումների, վերապատրաստումների և դասընթացների (Ռ. Սարգսյան՝ Էստոնիա, Տալլին, Գ. Սարգսյան՝ Իտալիա, Մ.Բադալյան՝ Բելգիա, Վ.Գրիգորյան՝ Գեներտ, և Գ.Միրիբյան՝ Գերմանիա): Սերտ համագործակցություն կա ուսանողների հետ հատկապես գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ոլորտում: Դա են փաստում համահեղինակությամբ տպագրված հոդվածները:

ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: Համալսարանի գործունեությունը չի կարող արդյունավետ լինել, եթե անտեսվեն ուսանողների շահերը և նրանց հետ տարվող աշխատանքները կրեն ձևական բնույթ: Այս գիտակցությամբ են ձևավորվում հարաբերությունները ուսանողների և ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ: Սերտ համագործակցություն կա մի կողմից ուսանողների և ուսանողական ինքնակառավարման մարմինների, մյուս կողմից՝ ղեկանատի և ամբիոնների միջև: Բազմաթիվ հարցեր, կապված ուսումնական գործընթացի, խորհրդատվությունների, բարեգործական հիմնադրամների հետ, լուծվում են անմիջապես: Բավականին ակտիվ դերակատարություն ունեն ֆակուլտետում ուսանողական խորհուրդն ու ուսանողական

գիտական ընկերությունը: Կազմակերպվում են տարբեր միջոցառումներ՝ նվիրված առանձին գրողների, հոբբեյանական տարեթվերի և իրադարձությունների: Դեկտեմբերյան ողբերգությանն էր նվիրված «Հիշատակի և հույսի լույսը» միջոցառումը, Ֆրանկոֆոնիայի շրջանակներում անցկացվեց գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված Շ.Ազնավուրին, ՀՀ անկախության 25-ամյակին էր նվիրված «Հայ ազգային-ազատագրական պայքարը երգերում» միջոցառումը, հանդես կազմակերպվեց Մարտի 8-ի կապակցությամբ: Առավել հիշարժան է դասախոս Ա.Բալագոզյանի ղեկավարությամբ կազմակերպված Շեքսպիրի «Մակբեթի» ներկայացումը բնագրով: Ֆակուլտետի ուսանողները և ՈՒԽ-ը, ՈՒԳԸ-ն մեծ ակտիվություն են ցուցաբերում նաև համահամալսարանական միջոցառումների ժամանակ: Մասնավորապես մրցանակներ են շնորհվել Անկախության 25-ամյակին նվիրված պաստառների և խոհագրությունների մրցույթներում մրցանակային տեղեր գրավելու համար:

Ուսանողները ակտիվություն են ցուցաբերել նաև գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ուղղությամբ: Նրանք համահեղինակությամբ մասնակցել են ԳՎՀ-ում կազմակերպված դեկտեմբերյան (Լ.Ներսիսյան, Զ.Ստեփանյան, Մ.Ավետիսյան), ինչպես նաև ներբուհական ու հանրապետական (ԵՊՀ, Լ. Ներսիսյան) գիտաժողովներին:

Հանրապետական Լավագույն ուսանող մրցույթում 2-րդ և 3-րդ տեղերը հայագիտության ոլորտում գրավել են բանասիրական ֆակուլտետի ուսանողուհիներ Ն.Միրիբյանը և Մ.Ավետիսյանը:

ԲՖ ուսանողներն օգտվել են ուսման զեղչերի համակարգից, հիմնադրամներից, միջազգային կրթական ծրագրերից:

ԲՖ 2016-2017 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ: Նոր ուսումնական տարում որակյալ մանկավարժական կրթություն ապահովելու հանգամանքը նոր օբյեկտիվ խնդիրներ է առաջադրում, որոնց լուծումը կնպաստի կրթության որակի, ուսուցման արդյունավետության բարձրացմանը: ԲՖ զարգացման հայեցակարգում ներկայացվում են այն աշխատանքները, որոնք ապահովելու են զարգացման շարունակականությունը և ԳՎՀ 5-ամյա ռազմավարական ծրագրով նախատեսված միտումները:

1. Ֆակուլտետի ամբիոններում ուշադրության կենտրոնում պահել մանկավարժական կրթություն ապահովելու նպատակով մագիստրատուրայի և բակալավրիատի ուսպլաններում ներառված նոր կրթական ծրագրերը, վերանայել և արդիականացնել գործող ծրագրերը:
2. Ֆակուլտետային և ամբիոնային տարեկան ծրագրերի կազմում և իրականացում կապված ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացման հետ:
3. Անհատական, կուրսային աշխատանքների, միջանկյալ քննությունների հարցաշարերի վերանայում և թարմացում:
4. Համագործակցություն որակի ապահովման բաժնի, համալսարանի մյուս ստորաբաժանումների հետ՝ ուսանողների կարիքների բացահայտման նպատակով:
5. Ուսանողների շրջանում գիտահետազոտական աշխատանքների շրջանակների ընդլայնում: Գիտական հետաքրքրություններ ունեցող ուսանողներին խրախուսում մասնակցելու ներբուհական և հանրապետական գիտաժողովներին:

6. Աշխատանք ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ ակտիվ և արդյունավետ համագործակցության սկզբունքով:
7. Կազմակերպել քննարկումներ և բանավեճեր արդի հայ և համաշխարհային գեղարվեստական գրականության երկերի շուրջ: Հետևել ծրագրային նյութերի յուրացմանը:
8. Վերահսկել կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարման որակը և տեխնիկական պահանջների բավարարումը:
9. Աշխատանքներ տանել ուսանողներին համալսարանի էլկայքերն ուղղորդելու և հետադարձ կապն ապահովելու ուղղությամբ:
10. Ամբիոններում և ֆակուլտետի խորհրդում պարբերաբար քննարկել մանկավարժական կրթության ապահովման նպատակով կատարվող աշխատանքները, ուշադրություն դարձնել կրթական ծրագրերի կատարման ընթացքին:
11. Անցկացնել դասալսումներ և բաց դասերի քննարկումներ:
12. Համագործակցել մարզի կրթօջախների հետ, քննարկել դպրոցներից ստացված արձագանքները, դրանք, ըստ անհրաժեշտության, հաշվի առնել հետագա աշխատանքների ընթացքում:
13. Համագործակցել և այցելություններ կազմակերպել գիտական, մշակութային կենտրոններ: Ակնարկային դասախոսությունների հրավիրել գիտնականների, մշակութային գործիչների:
14. Կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված հայտնի, վաստակաշատ մարդկանց, հոբբեյանական տարեթվերի և իրադարձությունների:
15. Ուսանողներին պարբերաբար ծանոթացնել համալսարանական կանոնակարգերին և ընթացակարգերին:
16. Պատշաճ կերպով կազմակերպել և անցկացնել ամփոփիչ ատեստավորման քննությունները:
17. Պարբերաբար կազմակերպել ամբիոնային և ֆակուլտետային փաստաթղթերի ստուգումներ, անցկացնել ուսանողական հարցումներ դասատվության որակի, դասախոս-ուսանող հարաբերությունների վերաբերյալ և սոցիալական ու կրթական կարիքների բացահայտման նպատակով:
18. Ուշադրության կենտրոնում պահել ակադեմիական ազնվության հայեցակարգի և հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքը:

**Թ. Ա. Ասոյան՝
Բանասիրական ֆակուլտետի դեկան**

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	11	-	5	90.91
2-րդ	8	-	4	75.00
3-րդ	9	-	5	88.89
4-րդ	19	-	6	84.21
Ռուսաց լեզու և գրականություն				
2-րդ	5	-	-	40.00
3-րդ	4	-	4	100.00
4-րդ	5	-	3	100.00
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	9	-	2	100.00
2-րդ	10	-	4	70.00
3-րդ	16	-	6	87.50
4-րդ	19	-	7	84.21
Ընդամենը	115	-	46	84,35
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն /Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ 1-ին/	1	-	1	100.00
Հայոց լեզու և գրականություն /Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ 2-րդ/	5	-	3	100.00
Հայոց լեզու և գրականություն /Հայ գրականության պատմություն 2-րդ/	5	-	2	40.00
Ռուսաց լեզու և գրականություն /թարգմանչական գործ 2-րդ/	4	-	4	100.00
Անգլերեն լեզու և գրականություն /Թարգմանչական գործ /անգլերեն/2-րդ/	7	-	5	71.43
Ընդամենը	22	-	15	77.27

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	11	-	11	100.00
2-րդ	6	-	3	83.33
3-րդ	9	-	7	100.00
Ռուսաց լեզու և գրականություն				
2-րդ	4	-	1	100.00
3-րդ	4	-	2	75.00
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	9	-	2	100.00
2-րդ	10	-	3	100.00
3-րդ	16	-	5	56.25
Ընդամենը	69	-	34	86.96
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն /Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ 1-ին/	1	-	1	100.00
Ընդամենը	1	-	1	100.00

2015/2016 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	2	1	46	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

*Ամբիոնի վարիչ՝ Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ասոյան Թաթուլ Արտիկի - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
2. Ղազարյան Նորիկ Կարոյի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ղարիբյան Ալինա Ամբիկի - ասիստենտ
4. Խանդանյան Սիրանուշ Կառլենի - ասիստենտ
5. Կարապետյան Գայանե Լևիկի - ասիստենտ
6. Սարգսյան Ռուզաննա Մարատի - ասիստենտ
7. Բազոյան Ալլա Սահակի - դասախոս
8. Իսկանդարյան Լիլիթ Հրաչիկի - դասախոս
9. Ղազարյան Օլգա Ալբերտի - դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Կատվայան Վիկտոր Լիպարիտի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Առաքելյան Արա Հրաչիկի - բանասիրական գիտ. դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. Իսկանդարյան Նաիրա Մանվելի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
4. Ներսիսյան Վարսիկ Արմենի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
5. Ալեքսանյան Թամարա Կարապետի - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
6. Ղռեջյան Լուսինե Խաչատուրի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
7. Ասատրյան Ծովինար Ժորայի - բանասիրական գիտ. թեկնածու

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց լեզվի պատմության, արդի հայերենի հիմնախնդիրների ուսումնասիրություն:
2. Բարբառների ուսումնասիրության հարցեր:

3. Բանահյուսական-բանահավաքչական աշխատանքների ուսումնասիրություն:
4. Արդի գրականության զարգացման միտումների ուսումնասիրություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	1	-	-	25	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ասոյան Թ. Ա.** Հայ բառարանագրության պատմությանը նվիրված նոր գիրք. գրախոսություն // Լեզու և լեզվաբանություն, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան 2016, էջ 78-82:
2. **Ասոյան Թ. Ա.**, Կատվայան Վ. Լ., Հայ բարբառագիտության հարցեր. գրախոսություն // Պատմաբանասիրական հանդես, N 1, Երևան, 2016, էջ 245-248:
3. **Ասոյան Թ. Ա.** Մխիթարյանների դերը արևմտահայերենի զարգացման մեջ /17-19-րդ դդ./ // Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, 2016, էջ 270-278:
4. **Ասոյան Թ. Ա.**, **Ստեփանյան. Զ. Մ.** Հայերենի խոսքի մասերի դասակարգումը Մ. Աբեղյանի աշխատություններում //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 18/3/, Երևան, 2016, հանձնված է տպագրության:
5. **Գրիգորյան Վ. Ռ.** Պատումի մատուցման ներժանրային առանձնահատկությունները Ի. Բունինի եվ Հր. Մաթևոսյանի ստեղծագործության մեջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N18 /3/, Երևան, 2016, հանձնված է տպագրության:
6. **Կատվայան Վ. Լ.** Բայազետի բարբառում բառակազմի բաղաձայնական հաջորդականությունների մասին // Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, «Գիտություն» հրատ., 2015, էջ 127-133:
7. **Կատվայան Վ. Լ.** Խոսվածքային առանձնահատկություններ Բայազետի բարբառում // «Հայ գիտական բարբառագիտության 100-ամյակի» գիտաժողովի զեկուցումների ժողովածու, /ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ./, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 9-16:
8. **Կատվայան Վ. Լ.** Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում // «Ասողիկ» հրատ., Երևան, 2015, էջ 5-10:
9. **Կատվայան Վ. Լ.** Բարբառ և բարբառային լեզու //«Աբեղյանական ընթերցումներ», Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների ժողովածու, ԵՊՀ հրատ., 2016, էջ 23-35:
10. **Կատվայան Վ.** Աբրահամյան Ա., Բառնասյան Զ., Իսաչատրյան Հ. // Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործող **Կր** ճյուղի բարբառների առնչությունները, Երևան, 2016, 240 էջ:

11. **Առաքելյան Ա. Հ. Ավետիսյան Մ. Ա.** «Նիրբելունգների երգը» էպոսի պատմական և դիցաբանական հիմքերը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17/2/, Երևան, 2015, էջ 490-494:
12. **Առաքելյան Ա. Հ.** Ֆր. Կաֆկայի օրագրերի կառուցվածքը // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, Երևան, 2015, N 2, էջ 178-182:
13. **Առաքելյան Ա. Հ.** О проблемах прозы Германа Гессе // Язык и культура, Кутаиси, 2015, стр.89-92.
14. **Առաքելյան Ա. Հ.** Հերման Հեսսեի արձակի պրոբլեմները // «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրները», Բոյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի գիտաժողովի նյութեր, Երևան, 2016, էջ 249-257:
15. **Առաքելյան Ա. Հ.** Ֆր. Կաֆկայի գոյափոխությունը // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, Երևան, 2016, N 7, էջ 216-222:
16. **Ղազարյան Ն. Կ., Ստեփանյան Ջ. Մ.** 20-րդ դարասկզբի ողբերգության արտացոլումը Պարոյր Սևակի «Անլռելի զանգակատուն» և «Եռաձայն պատարագ» պոեմներում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17/2/, Երևան, 2015, էջ, 432-434:
17. **Ղազարյան Ն.Կ., Ներսիսյան Լ. Վ.** Սուրենյանի կերպարը Վրթանես Փափագյանի «էմմա» վեպում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N18 /3/, Երևան, 2016, հանձնված է տպագրության:
18. **Ղոնջյան Լ. Խ.** Պատժի տեսակները ժողովրդական անեծքներում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N18 /3/, Երևան, 2016, հանձնված է տպագրության:
19. **Ղոնջյան Լ. Խ.** Հայկական ժողովրդական երգումները և դրանց կիրառությունները բանավոր և գրավոր ավանդության մեջ //ԳԱԱ ՀԱԻ գիտական հոդվածների ժողովածու. հանձնված է տպագրության:
20. **Ղոնջյան Լ. Խ.** Պատժի տեսակները հայկական ժողովրդական անեծքներում և երգումներում // «Էջմիածին» հանձնված է տպագրության:
21. **Ներսիսյան Վ. Ա.** Հայերենի *համաձայնել* և *համաձայնվել* բայերի իմաստային տարբերակման հարցի շուրջ // «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 165-172:
22. **Ներսիսյան Վ. Ա.** Հոդակապի արժեքը ժամանակակից հայերենի ածանցավոր բառերում // Հր. Աճառյանի 140-ամյակին նվիրված գիտաժողով. հանձնված է տպագրության:
23. **Ներսիսյան Վ. Ա.** Բառակազմության տեղը 5-10-րդ դարերի հայերենի քերականական աշխատություններում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N18 /3/, Երևան, 2016, հանձնված է տպագրության:
24. **Իսկանդարյան Ն. Մ.** «Ընդ եղեգան փող...». գրախոսություն // Գրական թերթ, 06.07.2016:
25. **Ղարիբյան Ա. Ա.** Իսանդուֆի կերպարի համեմատական քննությունը ըստ «Սասնա ծռերի» պատումների // «Հայ գիտական բարբառագիտության 100-ամյակի» գիտաժողովի զեկուցումների ժողովածու, /ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ./, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 265-275:
26. **Ղարիբյան Ա. Ա.** Ջրի խորհրդանիշը «Սասնա ծռեր» էպոսում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N18 /3/, Երևան, 2016, հանձնված է տպագրության:

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գայանե Աշոփի Միրիբյան*
բանասիրական գիտությունների թեկնածու

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Մուխսիխաչոյան Արուսյակ Մուշեղի - մանկավարժական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ
2. Հովհաննիսյան Ալլա Բորիսի - բանասիրական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ
3. Միրայելյան Ռուզաննա Քրիստաֆորի - ասիստենտ
4. Մարգարյան Արամ Հայկի - ԳՊՀ պրոֆեսոր
5. Ասրյան Մադլենա Սերգեյի - ասիստենտ
6. Հայթյան Սաթենիկ Հայրապետի - ասիստենտ
7. Մուրադյան Սիրանուշ Հովհաննեսի - ասիստենտ
8. Բալազոզյան Անիկ Կարապետի - ասիստենտ
9. Տիգրանյան Սաթենիկ Սաշայի - ասիստենտ
10. Ռափյան Նանա Լևիկի - դասախոս
11. Մելքոնյան Աննա Վրեժի - դասախոս
12. Բալազոզյան Կարինե Արամայիսի - ասիստենտ
13. Խաչատրյան Սիրանուշ Արտիկի - դասախոս
14. Թոռչյան Լիլիթ Գրիգորի - դասախոս
15. Ամիրխանյան Սալվինա Սամվելի - դասախոս
16. Մովսեսյան Աննա Աշոտի - դասախոս
17. Նալբանդյան Նարինե Նորայրի - ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Սարգսյան Ռուզաննա Ռուբենի - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. Մկրյան Նաիրա Ռաուլի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
3. Սարգսյան Գայանե Ռուբենի - մանկավարժական գիտությունների թեկնածու
4. Բղեյան Գայանե Ֆրեդիկի - ԳՊՀ պրոֆեսոր
5. Մուրադյան Նաիրա Էդուարդի - ասիստենտ
6. Եղիազարյան Անդրանիկ Ռաֆիկի - ասիստենտ
7. Աբգարյան Ռուզաննա Ֆրեդիկի - դասախոս
8. Պատվականյան Մարինե Արմանի - դասախոս
9. Ավագյան Սաթիկ Մարտինի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ռուս և հայ ազգագրության, ազգային մշակույթի և բանահյուսության համեմատական ուսումնասիրություն:
2. Համեմատական-համադրական քերականություն:
3. Օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի արդի հիմնահարցերը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	2	1	21	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Միրիբյան Գ. Ա.** Հայկական եվ ռուսական հարսանեկան ավանդույթներում արտացոլված որոշ խորհրդանիշների մասին // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 18 /3/, հանձնված է տպագրության:
2. **Սարգսյան Գ. Ռ.** Использование электронных средств учебного назначения по русскому языку для формирования социокультурной компетенции учащихся-армян // Բանբեր ԵՊՀ Հայաստանի/ Լեզվաբանություն 1 (36), Երևան, Լինգվա, 2016, с. 393-402.
3. **Սարգսյան Գ. Ռ.** О некоторых современных подходах к разработке учебников русского языка для общеобразовательных школ Армении // Психология и педагогика: методология, теория и практика: сборник статей Международно й научно-практической конференции (10 ноября 2015 г., г. Челябинск). В 2 ч. Часть 2. Челябинск, АЭТЕРНА, 2015, с. 103-106.
4. **Սարգսյան Գ. Ռ.** Об опыте применения электронных учебных материалов при обучении русскому языку студентов юридического отделения гуманитарного факультета ГГУ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 18 /3/ . հանձնված է տպագրության:
5. **Սարգսյան Գ. Ռ.** Об опыте применения метода дискуссии в вузе в процессе изучения курса “Теория перевода” // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 18 /3/ . հանձնված է տպագրության:
6. **Սարգսյան Գ. Ռ.** Обзор учебной литературы, обеспечивающей вузовский курс русского языка в университете Ка Фоскари Венеции // Проблемы современной русистики - 1, Ереван, 2016, с. 89-96.
7. **Սարգսյան Գ. Ռ.** О способах перевода военных аббревиатур на (материале русского и армянского языков) //Высшая школа, Научно-практический журнал. №13/2016 с. 21-24.
8. **Սարգսյան Գ. Ռ.** Использование языковой догадки при обучении общественно-политической лексике русского языка в итальянской аудитории // Психология и педагогика: методология, теория и практика: сборник статей Международно й научно-практической конференции (10 ноября 2015 г., г. Челябинск). В 2 ч. Часть 2. Челябинск, АЭТЕРНА, 2015 , с. 106-109.

9. **Սարգսյան Ռ. Ռ.** Социополитический аспект обучения инофонов русскому языку // Теоретические и практические вопросы психологии и педагогики: сборник статей Международной научно-практической конференции (10 декабря 2015 г., г. Челябинск). В 2 ч. Часть 2. Челябинск, АЭТЕРНА, 2015, с. 197-199.
10. **Սարգսյան Ռ. Ռ.** О месте словообразования в ряду лингвистических дисциплин, преподаваемых на факультетах русской филологии в вузах Армении // Журнал научных и прикладных исследований , №3 / 2016, г.Уфа, РФ, «Инфинити», с. 112-115.
11. **Սարգսյան Ռ. Ռ.** Суффиксация как способ выражения категории диминутивности в русском, армянском, английском и итальянском языках (на материале диминутивных существительных) // Բանբեր ԵՊԼՀ Բանասիրություն/ Լեզվաբանություն 1 (36), Երևան, Լինգվա, 2016, с. 415 –420.
12. **Սարգսյան Ռ. Ռ.** Практикум по словообразованию современного русского языка: Учебное пособие // Ер.: Лимуш, 2016, ISBN978-9939-64-239-0, с. 1-92.
13. **Սարգսյան Ռ. Ռ.** Формирование социополитической дискурсивной компетенции италогонов при обучении русскому языку// Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ 1, Երևան, 2016, էջ 52-58:
14. **Սարգսյան Ռ. Ռ.** Использование билингвальных лингвистических задач в рамках проблемного обучения как способ формирования лингвистической компетенции студентов (на материале субстантиватов со значением лица в русском и армянском языках)// Բանբեր ԵՊԼՀ Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2 (35), Երևան, Լինգվա, 2016, էջ 292-301:
15. **Սարգսյան Ռ. Ռ., Էրիկա Պինեյլի,** Методика работы над глаголами движения русского языка в итальянской аудитории // Проблемы современной русистики. Научно-методический журнал. Ереван, 2016 (1), с. 82-88.
16. **Սարգսյան Ռ. Ռ.** Использование проблемно-исследовательских заданий в ходе проведения морфемного анализа как прием оптимизации обучения русскому языку на филологических факультетах // Журнал научных и прикладных исследований , №6 / 2016, г.Уфа, РФ, «Инфинити», с. 93-96.
17. **Սարգսյան Ռ. Ռ.** Разрушаем стереотипы: использование проблемных заданий при анализе трудных случаев строения некоторых русских слов (на примере интерфиксации и наложения морфем) // Научно-практический журнал “Высшая школа” № 13, 2016, г.Уфа, РФ, «Инфинити», с. 29-31.
18. **Մուխսիխաչյան Ա. Մ.** Учебно-методическое пособие “Видо-временные соотношения в сложных предложениях с придаточными изъяснительными” (построение и употребление) // Ереван, 2016, с. 51.
19. **Մուխսիխաչյան Ա. Մ.** Взаимодействие методов при обучении теории и практике речи // Сборник научных статей Телавского госуниверситета, N 1 (28), 2015 г, с. 246-250.
20. **Մկրյան Ն. Ռ.** Exercises in English Syntax (The simple sentence), (քերականական վարժությունների ձեռնարկ) // Երևան, “Լուսակն“, 2016, 44 էջ:
21. **Ավագյան Ս. Մ., Սուքիասյան Ա. Շ.** Օտար լեզվով մասնագիտական առարկաների դասավանդման կարևորությունը ոչ լեզվական բուհերում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 18 /3/ . հանձնված է տպագրության:

22. **Մովսեսյան Ա. Ա.** Հարաբերական ածականների ձևաբանական, շարահյուսական և իմաստային առանձնահատկությունները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 18 /3/ . հանձնված է տպագրության:
23. **Խաչատրյան Ս. Ա.** Ծրագրի մշակման ուղենշային գործողություններն ու հիմնական բաղադրիչները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 18 /3/ . հանձնված է տպագրության:
24. **Եղիազարյան Ա. Ռ., Ավետիսյան Մ. Ա.** Հին անգլերենի բարբառները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 18 /3/ . հանձնված է տպագրության:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ավագյան Մարտին Պարվականի,
գյուղ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր

Դեկանի տեղակալ՝ Գարեյան Մելանյա Վարդանի

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
020200	Կենսաբանություն
020800	Բնապահպանություն և բնօգտագործում
020500	Քարտեզագրություն և կադաստրային գործ
100100	Սերվիս
020400	Աշխարհագրություն
230100	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա
021000	Դեղագործական քիմիա

Մասնագիտացումներ՝

Կենսաբանություն
բնապահպանություն
քարտեզագրություն
սերվիս
աշխարհագրություն
ճարտարագիտություն
դեղագործական քիմիա

Ուսանողների թիվը՝ 115

Շրջանավարտների թիվը՝ 42

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Առաջնորդվելով Գավառի պետական համալսարանի հնգամյա ռազմավարական ծրագրի, ինչպես նաև ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2015-2016 ուստարվա ռազմավարական ծրագրի հիմնադրույթներով, ֆակուլտետը զգալի աշխատանքներ է կատարել կրթության որակի բարձրացման, կարգապահության ապահովման, ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքների ակտիվացման ուղղությամբ: Ֆակուլտետի խորհրդի ուշադրության կենտրոնում է եղել համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացումը: Ամբիոնների առաջնահերթ խնդիրն է եղել առարկայական ծրագրերի պարբերաբար վերանայումը, գործող ուսումնական պլաններին դրանց համապատասխանության ապահովումը, դասալսումների կազմակերպումը, եղած թերությունների և բացթողումների շտկումը՝ ամբիոնների նիստերում պարբերաբար քննարկելով այդ գործընթացի իրականացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

Հիմք ընդունելով ֆակուլտետի գործողությունների ծրագիրը՝ հաստատված ժամանակացույցին համապատասխան գումարվել են խորհրդի նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնական, կարգապահական, կազմակերպչական բնույթի բազմաթիվ հարցեր, մշակվել է միջոցառումների ծրագիր՝ բարձրացված հարցերին գործնական լուծում տալու նպատակով: Ֆակուլտետում առկա է փոխհամաձայնեցված, ներդաշնակ աշխատանքի տրամադրող մթնոլորտ, բոլոր աշխատակիցների կողմից գործառույթները հստակ իրականացվում են, ժամանակին կատարվում են գիտխորհրդի կողմից ստացված հանձնարարականները: Կարևորվում է կրթական ռեսուրսների արդիականացումը: Ուսանողներին առաջարկվում է մասնագիտական գրականություն, ինչպես նաև էլեկտրոնային գրադարանի հնարավորությունները: Դասախոսների կողմից աշխատանքներ են կատարվում էլեկտրոնային քննությունների թեստային բազան համալրելու, դասախոսությունների՝ «E-learning.gsu» էլեկտրոնային համակարգի բազայի համալրման և թարմացման ուղղությամբ:

2015-2016 ուստարում «Examination-GSU» համակարգը համալրելու և համակարգչային թեստային քննություններ անցկացնելու համար պատրաստվել են հետևյալ դասընթացների թեստերը.

1. Արդյունաբերական ճյուղերի տեխնոլոգիական համակարգեր /դասախոս՝ Ա. Պ. Հովհաննիսյան/ – 1-ին կիսամյակում,
2. Ծրագրավորման հիմունքներ /դասախոս՝ Ա. Կ. Խուրշուդյան/ – 2-րդ կիսամյակում,
3. Տարածաշրջանների և պետությունների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն /դասախոս՝ Ա. Ռ. Ավագյան/ - 2-րդ կիսամյակում:

Ամբիոններում կատարվող գիտական և գիտահետազոտական աշխատանքներին նպաստում են համապատասխան տեխնիկական միջոցներով հագեցվածությունը, ինչը զգալի է կազմակերպվող գիտական կոնֆերանսների ինչպես քանակական, այնպես էլ

որակական ցուցանիշների առումով: Լաբորատոր-գործնական աշխատանքների անցկացմանն էապես նպաստում է համալսարանի միջոցներով հիմնանորոգված և Համաաշխարհային բանկի կողմից տրամադրված սարքավորումներով կահավորված Բնագիտության լաբորատորիան: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն ապահովել կատարվող աշխատանքների որակը, այլ նաև ներգրավել դպրոցների բարձր դասարանների աշակերտներին՝ մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու համար: Այդ նպատակով, ինչպես նաև բուհ-դպրոց կապն ամրապնդելու համար Բնագիտական ֆակուլտետի դեկանի գլխավորությամբ, աշխատակիցներ Մ. Հովհաննիսյանի և Ն. Մուրադյանի, Սերվիս բաժնի 3-րդ կուրսի ուսանող Շ. Սահակյանի հետ կազմակերպվել են այցելություններ Գավառի տարածաշրջանի թվով 10 դպրոցներ: Ֆակուլտետը 2015-2016 ուսումնական տարում հյուրընկալեց բազմաթիվ դպրոցականների, ովքեր մասնակցեցին նաև մասնագիտական դաշնթացների:

Ընդունելությունը և ուսանողական համակազմը

2015-2016 ուսումնական տարում ևս բնագիտական ֆակուլտետը համալրվել է 16 ուսանողներով՝ Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժին՝ 12 ուսանող, Դեղագործական քիմիա բաժին՝ 4 ուսանող:

Հարկ է նշել, որ նախորդ տարում բնագիտական ֆակուլտետ ընդունվել էին 16 ուսանողներ: Ընդունելության միասնական քննությունների արդյունքներով նկատվում է դիմորդների գիտելիքների ցածր մակարդակ, հատկապես՝ բնագիտական առարկաներից:

2015-2016 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ ֆակուլտետում հաշվառված են եղել 115 ուսանողներ:

Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը և ուսումնական առաջադիմությունը

2014-2015 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի հետ համեմատած՝ 2015-2016 ուսումնական տարվա նույն ժամանակահատվածում առաջադիմությունը բակալավրիատում բարձրացել է 8%-ով, մագիստրատուրայում՝ 13%-ով:

Այսպես, 2014-2015 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում բակալավրիատում բացարձակ առաջադիմությունը կազմել է 79.8%, իսկ հաշվետու տարում՝ 87.9%: Առաջադիմության հետևողական բարձրացումը պայմանավորված է ուսանողների հաճախելիության մակարդակով, անհատական աշխատանքների և ակտիվության բարձր ցուցանիշներով: Քննաշրջանին մասնակցել են 107 ուսանող, չեն ներկայացել 11-ը, բոլոր առարկաներից քննությունները հանձնել են 94-ը, գերազանց գնահատականներով կիսամյակը փակել են 45, միայն գերազանց և լավ գնահատականներով՝ 27, խառը գնահատականներով՝ 20, միայն բավարար՝ 2 ուսանող: Մեկական անբավարար գնահատական ստացել են 2 ուսանող:

Առաջադիմության հետևողական աճ է արձանագրվել նաև մագիստրատուրայում. նախորդ ուսումնական տարում այն կազմել է 77.3%, հաշվետու տարում՝ 90%: Քննաշրջանին մասնակցել են 10 մագիստրոսներ, չի ներկայացել 1-ը: Բոլոր առարկաներից դրական գնահատական են ստացել 9 մագիստրոսներ, քննաշրջանը փակել են միայն գերազանց գնահատականով՝ 8, խառը գնահատականներով՝ 1 մագիստրոսներ: Միայն բավարար կամ անբավարար գնահատական ստացող մագիստրոսներ չեն եղել:

Հաշվետու ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում 100%-անոց բացարձակ առաջադիմություն են ցուցաբերել բակալավրիատի Կենսաբանություն,

Դեղագործական քիմիա բաժինների բոլոր կուրսերը, Սերվիս բաժնի 2-րդ, Քարտեզագրություն և կադաստրային գործ բաժնի 3-րդ, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 1-ին, 4-րդ, մագիստրատուրայի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 1-ին, 2-րդ կուրսերը: Ամենացածր առաջադիմությունը արձանագրվել է Սերվիս բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսում՝ 50%՝ քննաշրջանին ոչ լիարժեք մասնակցելու պատճառով:

2015-2016 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դրությամբ ֆակուլտետի ընդհանուր բացարձակ առաջադիմությունը կազմել է 88%:

2015-2016 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դիտվել է առաջադիմության բարձրացում՝ 3%-ով բակալավրիատում, 11%-ով՝ մագիստրատուրայում 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի հետ համեմատած՝ համապատասխանաբար կազմելով նախորդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում 80.9%, իսկ հաշվետու տարում՝ 83.3%: Քննաշրջանին մասնակցելու իրավունք ստացել են 78 ուսանող, չեն ներկայացել 13-ը, բոլոր առարկաներից քննությունները հանձնել են 65-ը, գերազանց գնահատականներով կիսամյակը հանձնել են 24, միայն գերազանց և լավ գնահատականներով՝ 25, խառը գնահատականներով՝ 11, միայն բավարար՝ 5 ուսանող: Անբավարար գնահատական ստացող ուսանողներ չեն եղել:

Մագիստրատուրայում նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակահատվածում առաջադիմությունը կազմել է 88.9%: Հաշվետու տարում մագիստրատուրայում բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%:

2015-2016 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ֆակուլտետի ընդհանուր բացարձակ առաջադիմությունը կազմել է 83.5%:

Բնագիտական ֆակուլտետում 2015-2016 ուսումնական տարում իրենց ուսանողական իրավունքներն են վերականգնել 10 ուսանողներ, որոնցից մեկը՝ մագիստրատուրայում, իսկ 1-ը՝ ամփոփիչ ատեստավորմանը մասնակցելու համար:

2015-2016 ուսումնական տարվա ընթացքում Բնագիտական ֆակուլտետից ԳՊՀ այլ ֆակուլտետներ տեղափոխվել են 6 ուսանողներ: Համալսարանի այլ ֆակուլտետներից բնագիտական ֆակուլտետ են տեղափոխվել 6 ուսանողներ, ժամանակավոր կցագրումից Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 2-րդ կուրս է ընդունվել 1 ուսանող: Բուհից ազատվել է ֆակուլտետի 1 ուսանող, հեռացվել են 5 ուսանողներ, որոնցից 1-ը՝ ամփոփիչ ատեստավորման արդյունքում, տարկետում տրամադրվել է 2 ուսանողի, որոնցից 1-ը՝ առաջին կուրսին ժամանակավոր կցագրված ուսանող:

Անհարգելի բացակայությունների պատճառով նկատողություն է ստացել 10 ուսանող, խիստ նկատողություն՝ 7 ուսանող:

2015-2016 ուսումնական տարում Բնագիտական ֆակուլտետի ուսման բարձր առաջադիմություն ունեցող մի խումբ ուսանողներ օգտվել են կրթական հիմնադրամների և բարերարների, ինչպես նաև պետական բյուջեի կողմից տրամադրված ուսման վարձի փոխհատուցումից.

- Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամից՝ 15 ուսանող
- Վիվասել ՄՏՍ –ից՝ 5 ուսանող
- Հայաստանի երիտասարդական հիմնադրամից՝ 3 ուսանող
- Հայ կրթական հիմնարկությունից՝ 4 մագիստրոս

- Ընտանեկան նպաստի «Փարոս» համակարգում ընդգրկված 14 ուսանող:

Ամփոփիչ ատեստավորում

2015-2016 ուսումնական տարում բնագիտական ֆակուլտետն ավարտեցին 42 ուսանողներ: Նրանցից 33-ը ստացան բակալավրի և 9-ը՝ մագիստրոսի կրթական աստիճան:

Ամփոփիչ ատեստավորման քննություններին և ավարտական աշխատանքների պաշտպանությանը թույլատրվել են մասնակցելու բակալավրիատի 33 ուսանողներ՝ Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա, Աշխարհագրություն, Կենսաբանություն, Քարտեզագրություն և կադաստրային գործ, Սերվիս բաժիններից: Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի նախորդ տարվա մեկ ուսանող իրավունք է ստացել մասնակցելու ամփոփիչ ատեստավորմանը:

Ընդհանուր առմամբ, նշված 34 շրջանավարտներից դրական գնահատական են ստացել 33-ը, Սերվիս բաժնի 1 ուսանող ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել է անբավարար գնահատական և հեռացվել համալսարանից: Չներկայացած ուսանողներ չեն եղել:

Գերազանցության դիպլոմ են ստացել Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 14 շրջանավարտներից 4-ը, Աշխարհագրություն բաժնի 4 շրջանավարտներից 1-ը, Կենսաբանություն բաժնի 9 շրջանավարտներից 5-ը, Քարտեզագրություն և կադաստրային գործ բաժնի 5 շրջանավարտներից 1-ը, Սերվիս բաժնի 1 շրջանավարտ:

Մագիստրոսական թեզ են պաշտպանել Կենսաբանություն բաժնի 4, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 5 մագիստրոսներ: Անբավարար գնահատական ստացած կամ չներկայացած մագիստրոսներ չեն եղել: Գերազանցության դիպլոմի են արժանացել Կենսաբանության բաժնի 3 մագիստրոսներ, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի բոլոր մագիստրոսները:

Ըստ հանձնաժողովների նախահազաների դիտարկումների՝ անհրաժեշտ է ավելացնել ուսանողների կողմից կատարվող փորձարարական աշխատանքների բաժինը, մղել օգտվելու գիտության նորագույն նվաճումներից և մասնագիտական արդի գրականությունից:

Կրթական ծրագրերի բարեփոխումները և զարգացումները

Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի պատշաճ մակարդակով իրականացումը, դրանց համապատասխանեցումը արդի կրթական չափորոշիչներին, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայումը, դրանց պարբերաբար թարմացումը, համապատասխան մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորումը, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ և որակյալ կադրերի պատրաստումը համարվում են մասնագիտական ամբիոնների կարևոր խնդիրները: Առարկայական ծրագրերը համապատասխանում են գործող ուսումնական պլաններին:

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբին բնագիտական ֆակուլտետում կատարվեց կառուցվածքային փոփոխություն՝ Աշխարհագրության ամբիոնը լուծարվեց, իսկ ամբիոնի համապատասխան գործառույթները վերապահվեցին Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնին: Նշված ամբիոնում հաշվետու ժամանակաշրջանում համալրվել է դասախոսական կազմը գիտությունների մեկ դոկտորով և երկու

թեկնածուներով (Ա. Եզեկյան՝ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, Ս. Առաքելյան՝ երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վ. Մուրադյան՝ աշխ. գիտ. թեկնածու)՝ Աշխարհագրություն, Քարտեզագրություն և կադաստրային գործ, Սերվիս բաժիններում դասավանդելու համար:

2015-2016 ուստարվա նախաշեմին բնագիտական ֆակուլտետում գործող ամբիոններում կատարվել են դասաժամերի փոփոխություններ, կիսամյակից կիսամյակ տեղափոխություններ՝ համաձայն ուսումնական պլանների: Սակայն հարկ է նշել, որ զգալի փոփոխությունը ուսումնական և արտադրական պրակտիկաներին է վերաբերել: Դրանք մտել են ուսումնական կիսամյակի մեջ և անցկացվել են մինչև կիսամյակային քննաշրջանի սկիզբը: Այդ փոփոխությունները արձանագրվել են ամբիոնների համապատասխան որոշումներում:

Ուսումնական գործընթացի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով ամբիոններում կատարվել են դասալսումներ՝ հիմնականում ամբիոնի վարիչների կողմից: Դասալսումների ընթացքում ի հայտ եկած թերությունները քննարկվել են ամբիոնների նիստերում, կատարվել վերլուծություններ՝ ի հայտ եկած ունեցող խնդիրները շտկելու համար:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար կարևոր նշանակություն ունի համակարգչային լսարանների լիարժեք օգտագործումը, եղած լաբորատորիաների հնարավորությունների ընդլայնումը, օգտակար ուսումնական համացանցային կայքերի կիրառումը:

Բուհի ինստիտուցիոնալ (ենթակառուցվածքային) հավատարմագրման նպատակով Բնագիտական ֆակուլտետում ավարտին են հասցվել ինքնավերլուծության աշխատանքները:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում զգալի աշխատանքներ են կատարվել միջազգային ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Եվրամիության կողմից իրականացվող «Erasmus Mundus Tempo» ծրագրի շրջանակներում, Իսպանիայի Թագավորության Վալենսիայի համալսարանում հետազոտություն է կատարել Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Սիփան Արևշատյանը:

ԵՄ «TEMPUS-PACT» ծրագրի շրջանակներում 2016 թ. հոկտեմբերի 28-31-ը Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում ծրագրի ամփոփիչ աշխատաժողովին մասնակցել են Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Անահիտ Մարգարյանը և ԲՆՖ աշխատակից Մարինե Հովհաննիսյանը:

2016թ. մայիսի 9-13-ը Լեհաստանի Կրակովի Յագիելոնյան համալսարանում և մայիսի 22-27-ը Իտալիայի Պավիայի համալսարանում դասախոսություններով հանդես է եկել Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, աշխարհագրական գիտությունների թեկնածու Վահագն Մուրադյանը:

Եվրամիության կողմից իրականացվող «Erasmus Mundus Hermes» ծրագրով 2015թ. սեպտեմբեր ամսից Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ Նարեկ Արևշատյանը և Նորիկ Համբարձումյանը հնարավորություն են ստացել մեկ ուսումնական տարով ուսումը շարունակել Իտալիայի Հանրապետության Սալերնոյի

համալսարանում և այժմ, վերադառնալով, շարունակում են իրենց կրթությունը Գավառի պետական համալսարանում:

Միջոցառումներ

Հաշվետու ժամանակահատվածում բնագիտական ֆակուլտետում անցկացվել են բազմաթիվ միջոցառումներ, որոնք կազմակերպվել են ուսանողների կողմից:

Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանողները, ամբիոնի դասախոս Մաքսիմ Հակոբյանի ղեկավարությամբ, 2015թ. հոկտեմբերի 2-ին Հաշվիչ մեքենաների ինստիտուտի թանգարանում մասնակցեցին ամենամյա «DigiTech Expo» ցուցահանդեսին:

Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ 2015թ. նոյեմբերի 18-ին անցկացվեց սեմինար-քննարկում՝ նվիրված անվտանգ երթևեկության կանոններին:

ԳՊՀ ամենամյա գիտաժողովին, որը նվիրված էր Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին, ակտիվ մասնակցություն ունեցան ֆակուլտետի ամբիոնների դասախոսները: Ներկայացվել են 19 գիտական զեկուցումներ ըստ ոլորտների. կենսաբանական գիտություններ՝ 7, էկոլոգիական գիտություններ՝ 3, Աշխարհագրություն, երկրաբանություն և երկրաբնապահպանություն՝ 2, քիմիական գիտություններ՝ 1, ֆիզիկամաթեմատիկական գիտություններ՝ 1, տեխնիկական գիտություններ՝ 5 զեկուցում:

Բնագիտական ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ անցկացվել են Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված միջոցառումներ:

2016թ. ապրիլի 3-ին Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի աջակցությամբ և Կենսաբանություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ անցկացվեց ուսանողական հերթական գիտաժողովը՝ «Մանրէներն՝ ամենուրեք» խորագրով:

2016թ. ապրիլի 9-ին Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի կողմից և Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 4-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ կազմակերպվեց և անցկացվեց «Կիբեռնետիկայի և ինֆորմատիկայի ժամանակակից հարցեր» խորագրով ուսանողական գիտաժողով:

2016թ. ապրիլի 30-ին անցկացվել է ուսանողական գիտաժողով՝ «Ճանապարհորդություն անկախ Հայաստանիս մարզերով» խորագրով՝ Սերվիս, Քարտեզագրություն և կադաստրային գործ բաժինների ուսանողների մասնակցությամբ և բաց դաս՝ «Հայաստանը 20-21-րդ դարերի սահմանագծին. մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով:

ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2016-2017 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

2016-2017 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը բխում է բնագիտական ֆակուլտետի զարգացման 2012-2017թթ. հիմնական ուղղություններից: Ֆակուլտետի զարգացման և բարեփոխման առանձնահատկությունները պայմանավորված են կրթական նոր բարեփոխումներով, որոնք միտված են եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելուն, եվրոպական չափանիշներին համապատասխան որակյալ կրթական ծառայություններ մատուցելուն, ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունությունը ակտիվացնելուն:

2016-2017 ուստարվա զարգացման հայեցակարգը միտված է.

ա/ Բնագիտական ֆակուլտետում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը պատշաճ կազմակերպելու համար բոլոր հիմքերի ստեղծմանը,

բ/ առկա ձեռքբերումների ամրապնդմանը և պահպանմանը,

գ/ ֆակուլտետի մրցունակության բարձրացմանը՝ կապված կրթական ծրագրերի բարելավման, կատարելագործման, գործող բաժինները ուսանողական կազմով համալրման հետ:

Ֆակուլտետի զարգացման հիմնական ուղղություններն են.

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Կրթական ծրագրերի շարունակական կատարելագործում և արդիականացում՝ հաշվի առնելով ինչպես ՀՀ պետական բուհերի, այնպես էլ միջազգային առաջավոր համալսարանների փորձը:
2. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ և որակյալ կադրերի պատրաստումը՝ արդի կրթական չափորոշիչներին համապատասխան:
3. Կրթական ծրագրերի իրականացման գործընթացներում հրապարակայնության և թափանցիկության ապահովում, ակադեմիական ազնվության հայեցակարգում ներառված հիմնադրույթների լիարժեք իրականացում:
4. Կրթական գործընթացում ուսուցման ժամանակակից ձևերի և մեթոդների ներդրում, նոր տեխնոլոգիաների համադրումը ավանդական մեթոդների հետ:
5. «Examination-GSU» համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի շարունակական ընդլայնում, առնվազն 2 նոր թեստային բազայի առարկաների ներմուծում համակարգ:
6. Ուսանողների շրջանում ձևավորված առողջ մրցակցային միջավայրի պահպանում՝ կապված անվճար և վճարովի հիմունքներով սովորող ուսանողների փոխատեղման հետ՝ պահպանելով օբյեկտիվության և արդարության սկզբունքները:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1. Ամբիոնների կողմից ուսումնամեթոդական ձեռնարկների մշակման գործընթացների ակտիվացում:
2. Ամենամյա գիտաժողովներին ինչպես դասախոսական, այնպես էլ ուսանողների գործուն մասնակցություն:
3. Դասախոսումների պարբերաբար կազմակերպում, ամբիոններում դրանց արդյունքների քննարկում:
4. Ֆակուլտետի դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների շարունակական բարձրացում, վերապատրաստման գործընթացներում ամբիոնների դասախոսների ներգրավում, նրանց համար գիտահետազոտական աշխատանքների կատարման հնարավորությունների ստեղծում, նրանց մասնագիտական աճի խրախուսում:
5. Դասախոսական կազմի կողմից միջազգային և հանրապետական գիտաժողովներին ակտիվ մասնակցության ապահովում:
6. Համակարգչային լսարանների լիարժեք օգտագործում, դրանց տեխնիկական հնարավորությունների հետագա կատարելագործում:

7. Նորաբաց բնագիտության լաբորատորիայի նպատակային օգտագործում, փորձարարական աշխատանքների համար անհրաժեշտ պարագաների (քիմիական ռեակտիվներ, սարքավորումներ և այլն) ձեռքբերում:
8. Էլեկտրատեխնիկայի լաբորատորիայի գործունեության ակտիվացում՝ հաշվի առնելով համակարգչային ճարտարագիտություն մասնագիտության առանձնահատկությունները:
9. Գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացում, մագիստրոսական աշխատանքների փորձարարական մասի ավելացում:
10. Համագործակցության հուշագրեր կնքած գիտահետազոտական ինստիտուտների (ՀՀ ԳԱԱ Կենսաքիմիայի ինստիտուտ, Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ) հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացում, համագործակից կազմակերպություններում առանձին դասընթացների անցկացում:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Ուսանողների շրջանում օտար լեզուներով հաղորդակցման կարողությունների մեծացում, համացանցի ուսումնական ռեսուրսներից արդյունավետ օգտվելու հմտությունների զարգացում:
2. Ուսանողական ինքնակառավարման մարմինների (Ուսխորհուրդ, ՈւԳԸ) աշխատանքների ակտիվացում, նրանց համակողմանի աջակցություն, ավանդական դարձած ուսանողական գիտաժողովների ամենամյա կազմակերպում:
3. Ֆակուլտետի շրջանավարտների հետ կապերի ամրապնդում:
4. Բնագիտական ֆակուլտետում գործող «Բնագետի ակումբ»-ի և «Տուրիզմի ակումբ»-ի աշխատանքների ակտիվացում:
5. Ուսանողների շրջանում անանուն հարցումների պարբերաբար անցկացում մատուցվող դասընթացների որակի բարձրացման, ինչպես նաև կոռուպցիոն վտանգների կանխարգելման նպատակով:
6. Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի բարձր կուրսեցիների, ինչպես նաև մագիստրոսների կողմից Հայաստանում անցկացվող ամենամյա «Digitech Expo» ցուցահանդեսին մասնակցության ապահովում:

ԴՊՐՈՑ-ԲՈՒՀ ԿԱՊԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1. Հաշվի առնելով նոր մասնագիտությունների գովազդման անհրաժեշտությունը, ինչպես նաև մասնագիտությունները գրավիչ դարձնելու հանգամանքը, նախապես սահմանված ժամանակացույցով ֆակուլտետում հյուրընկալել հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների, ապահովել մասնագիտական խորհրդատվություն, նորաբաց լաբորատորիայում կազմակերպել լաբորատոր աշխատանքներ:
2. Բնագիտական առարկաների գծով կազմակերպել նախապատրաստական դասընթացներ՝ միասնական քննությունների նվազագույն շեմը հաղթահարելու նպատակով:

3. Կազմակերպել բարձր դասարանների աշակերտների հանդիպում եվրոպական ծրագրերով արտերկրում սովորած ուսանողների հետ:

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՈՒՄ**

1. Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի ուսումնական պրակտիկան լիարժեք կազմակերպելու համար Ջի-էն-սի Ալֆա (UCom) կազմակերպության հետ վերակնքել արտադրական պրակտիկայի վերակնքման պայմանագիրը, հնարավորություն ստեղծել արտադրական պրակտիկան անցկացնելու նշված կազմակերպությունում:
2. Դեղագործական քիմիա մասնագիտությամբ սովորող ուսանողների ուսումնական պրակտիկան արդյունավետ դարձնելու համար ներգրավել մարզային կառույցների, մասնավորապես դեղատների, ամբուլատորիաների և հիվանդանոցների լաբորատոր հնարավորությունները:

**Մ. Պ. Ավագյան՝
ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան**

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակլավրիատ				
Կենսաբանություն				
3-րդ	6	-	3	100
4-րդ	8	-	5	100
Քարտեզագրություն և կադաստրային գործ				
3-րդ	4	-	1	100
4-րդ	5	-	2	80
Սերվիս				
2-րդ	7	-	4	100
3-րդ	14	1	3	57.1
4-րդ	2	-	1	50
Աշխարհագրություն				
4-րդ	4	-	3	75
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա				
1-ին	13	-	1	100
2-րդ	10	-	6	80
3-րդ	6	1	3	66.7
4-րդ	13	-	7	100
Դեղագործական քիմիա				
1-ին	4	-	2	100
3-րդ	11	-	4	100
Ընդամենը	107	2	45	87.9
Մագիստրատուրա				
Կենսաբանություն				
2-րդ	4	-	3	75
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա				
1-ին	1	-	-	100
2-րդ	5	-	5	100
Ընդամենը	10	-	8	90

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Կենսաբանություն 3-րդ	6	-	3	83.3
Քարտեզագրություն և կադաստրային գործ 3-րդ	5	-	3	80
Սերվիս 2-րդ	7	-	4	85.7
3-րդ	14	-	3	64.3
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա 1-ին				
2-րդ				
3-րդ	15	-	1	80
Դեղագործական քիմիա 1-ին	10	-	5	90
3-րդ	6	-	-	83.3
	4	-	2	100
	11	-	3	100
Ընդամենը	78	-	24	83.3
Մագիստրատուրա				
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա 1-ին	1	-	-	100
Ընդամենը	1	-	-	100

2015/2016 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
2	-	-	1	47	6

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Սիմոնյան Արմեն Արշալույսի,*
 ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,
 ՌԴ Բնական և էկոլոգիական գիտությունների
 ակադեմիաների ակադեմիկոս, կենսաբանական
 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 ԳՊՀ պատվավոր պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ավագյան Մարտին Պատվականի - գյուղ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
2. Առաքելյան Լյուդմիլա Նիկոլայի - կենս. գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
3. Գրիգորյան Ստասիկ Մնացականի - գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Սարգսյան Վահան Արշավանի - ԳՊՀ դոցենտ
5. Հասասյան Գագիկ Գուրգենի - դասախոս
6. Մկրտչյան Լալա Արշալույսի - դասախոս
7. Հովհաննիսյան Մարինե Հրահատի - ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Ավագյան Արամայիս Ռուստամի - աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Թադևոսյան Արտաշես Վահանի - տեխ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
3. Եզեկյան Ալբերտ Սարգսի - գյուղ. գիտ. դոկտոր
4. Գրիգորյան Վալերի Վոլոդյայի - կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Փանոսյան Հովիկ Հարությունի - կենս. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
6. Մարգարյան Անահիտ Սամվելի - կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Մխիթարյան Ազնիվ Կառլենի - տեխ. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
8. Սիմոնյան Ռուզան Մաքսիմի - կենս. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
9. Ավետիսյան Կարինե Սամվելի - քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
10. Առաքելյան Սամվել Աշոտի - երկրաբ. գիտ. թեկնածու, դոցենտ
11. Մուրադյան Էդիկ Կամսարի - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
12. Մուրադյան Վահագն Սոսի - աշխ. գիտ. թեկնածու
13. Դավթյան Սմբատ Ռուբիկի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Ա. Ն. Բելազերսկու անվան ֆիզիկո-քիմիական ինստիտուտում սինթեզված հակաօքսիդանտների ուսումնասիրություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումանմերոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
2	-	-	1	35	6

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Тадевосян А. В., Багдасарян Т. С.** Некоторые особенности расчета экологического риска хвостохранилищ // Конференция (Высокие технологии; фундаментальные и прикладные исследования в физиологии и медицине), Санкт-Петербург, 2015:
2. **Тадевосян А. В., Оганезов Т. А., Арутюнян Н. Г., Хачатурян Н. Г.** Использование новых подходов в процессе подготовки инженеров-технологов // IV международная конференция по химии и химических технологий, Ереван, 2015:
3. **Թադևոսյան Ա. Վ., Նավասարդյան Տ., Սևոյան Գ.** Պոչամբարների ռեկուլիվացման չափորոշիչների որոշումը և մեթոդի ընտրությունը // ՀԱՊՀ տարեկան գիտաժողով, 2015:
4. **Թադևոսյան Ա. Վ., Թովմասյան Ա., Սուքիասյան Ա., Խաչատրյան Ն.** Քիմիական որոշ աղտոտող նյութերի տարածական և ժամանակային փոփոխությունների հետազոտությունները մակերևութային ջրերում // ՀԱՊՀ տարեկան գիտաժողով, 2015:
5. **Тадевосян А. В.** Эффективный метод выполнения дипломного проекта студентами технического вуза // Методика преподавания хим. И эколг. Дисциплинах. Сб. н. ст. VIII метод. Научно-метод. Конфер., Брест, 26-27.11.2015, էջ 182-184:
6. **Тадевосян А. В., Сукисян А. Р., Хачатрян Н. Р.** Оценка экологического состояния в условиях дефицита воды и растворенных в ней некоторых тяжелых металлов // ՀԱՊՀ Բանբեր, Քիմիական և բնապահպանական տեխնոլոգիաներ №2, 2015, էջ 68-74:
7. **Тадевосян А. В., Сукисян А. Р., Нахдалян А. Г., Багдасарян Т. С.** Транспирация как критерий оценки абиотического стресса // ՀԱՊՀ Բանբեր, Քիմիական և բնապահպանական տեխնոլոգիաներ №2, 2015, էջ 9-14:
8. **Тадевосян А. В., Сукисян А. Р., Пирумян Г. П.** Миграция ряда тяжелых металлов в системе почва-растение на фоне процессов водопоглощения в растении // Естественные и технические науки №3, 2016, էջ 32-34:
9. **Тадевосян А. В., Сукисян А. Р., Симонян Г. С., Пирумян Г. П.** Влияние абиотического стресса на рост растений // Успехи современного естествознания № 7, 2016, էջ 168-172:
10. **Թադևոսյան Ա. Վ., Սիրականյան Մ. Ա.** Էկոլոգիական նորմավորում և մոնիթորինգ // Դասագիրք, ՀԱՊՀ, Երևան, 2015, 362 էջ:

11. **Симонян А. А., Маргарян А. С., Симонян Л. А.** Влияние SkQ1 на активность Mg^{2+} -АТФазы в митохондриях различных органов крыс при экспериментальных эпилептиформных судорогах с использованием различных доз пентилентетразола. // Сборник научных статей Гаварского государственного университета, N 2, 2015:
12. **Симонян А. А., Маргарян А. С., Абрамян С. С.** Гистологические и гистохимические изменения при экспериментальном циррозе печени. // Сборник научных статей Гаварского государственного университета, N 2, 2015:
13. **Симонян А. А., Маргарян А. С.** Влияние пролин богатого полипептида на активность АТФаз в митохондриях мозга крыс при коразол-индуцированных эпилептиформных судорогах. // Сборник научных статей Гаварского государственного университета, N 3, 2016:
14. **Simonyan A. A., Danielyan Q. E.** New inhibitors and activators of xantine oxidase and their roles in the fate of the cells // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 3, 2016:
15. **Тер-Татевосян Л. П., Аракелян Л. Н., Маргарян А. С., Симонян А. А., Чаилян С. Г.** Участие препарата SkQ1 в активности некоторых ферментов углеводно-фосфорного обмена тканей крыс в норме и при экспериментальной эпилепсии. // Мед. наука Армении, Т. 55 (1), 2015. էջ 46-53:
16. **Погосян Л. Г., Мкртчян З. С., Газарянц М. Г., Маргарян А. С., Бадалян Р. Б., Симонян А. А., Акопян Ж. И.** Влияние производного пластохинона (SkQ1) на активность некоторых ключевых ферментов клеточного метаболизма. // Биол. Ж. Армении. 67 (3), 2015, էջ 37-42:
17. **Маргарян А. С., Симонян А. А., Симонян Л. А.** Влияние пролин-богатого полипептида на активность АТФаз в митохондриях мозга крыс при коразол-индуцированных эпилептиформных судорогах. // Сборник научных докладов международно-научной конференции “Наука, техника и инновационные технологии в эпоху огущества и счастья”, Ашхабад, 12-13 июня, 2016, էջ 238-241:
18. **Симонян А. А., Симонян Р. А., Маргарян А. С., Симонян А. А., Симонян Л. А.** Изменение активности Ca^{2+} -АТФазы в митохондриях тканей белых крыс под влиянием производного пластохинона (SkQ1) при коразол-индуцированных эпилептиформных припадках. // Мед. наука Армении, Т. 61 (3), 2016:
19. **Симонян Р. М., Симонян Л. А., Ширинян С. В., Алексанян А. С., Симонян Г. М., Бабаян М. А., Оганисян Г. А., Симонян М. А.** Новые биохимические показатели определения эффективности лечения злокачественных новообразований // Вопр. теорет. клин. мед., 2(98), 2015, էջ 3-6:
20. **Симонян Р. М., Фесчян С. М., Карапетян М. А., Симонян Г. М., Бабаян М. А., Енгибарян А. А., Симонян М. А.** Понижение гемоглобин-индуцирующего релизинга изоформ NADPH оксидазы из эритроцитарных мембран и мембран поверхностных клеток срезов легких крыс галармином при гипоксии // Вопр. теорет. клин. мед., 4(100), 2015, էջ 28-31:
21. **Симонян Р. М., Симонян М. А., Симонян Г. М., Серебрякова М. В., Казарян П. А., Ширинян К. В.** Информативность масс-спектральных показателей субединиц NADPH оксидазы выделенной из эритроцитарных мембран доноров и больных раком молочной железы // Фарма, 11-2015, էջ 28-32:

22. **Симонян Р. М.** Механизмы оксидативного повреждения клеток тканей млекопитающих и защитные факторы. *Вопр. теорет. клин. мед.*, 3(106), 2016, էջ 41-49:
23. **Симонян Р. М., Фесчан С. М., Симонян Г. М., Оксюзян Г. Р., Симонян М. А.** Выделение и свойства фракции NADPH оксидазы из икры ручьевой форели, коровьево молока и куриного желтка // *Биологический журнал Армении*, 1(68), 2016, էջ 50-54:
24. **Симонян Р. М., Симонян А. А.** Оценка мембраностабилизирующей эффективности некоторых биоактивных соединений (обзор) // *Сборник научных статей Гаварского государственного университета*. N 2, 2015, էջ 74-78:
25. **Ավագյան Ա. Ռ.** Սերվիսազիտություն // *Դասագիրք, Երևան*, 2016, 220 էջ:
26. **Ավագյան Ա. Ռ., Մոհաջեր Է.** Մարդ-բնություն փոխհարաբերության սոցիալ-էթնիկական սկզբունքների վերլուծությունը // *ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու*, N 3, 2016:
27. **Գրիգորյան Ս. Մ.** The productivity of flax sowing rate in conditions of RA Gegharqunik marz // *Известия НАУА*, N 1, 2016, էջ 12-22:
28. **Ավագյան Ս. Պ.** ՀՀ տարածքում լանդշաֆտների անապատացման առանձնահատկությունները // *ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու*, N 3, 2016:
29. **Галстян Л. Х., Аветисян К. С., Арутюнян В. С.** Некоторые превращения функционально замещенных 2,5-дигидрофуран-2-онов и биологическая активность полученных соединений. *Сборник трудов “Некоторые успехи органической и фармацевтической химии”*. Посвящается 60-летию основания Института тонкой органической химии им. А.Л. Мнджояна Научно-технологического центра органической и фармацевтической химии НАН РА. Ереван, выпуск 2, 2015, էջ 260-269:
30. **Галстян Л. Х., Аветисян К. С., Алебян З. Г., Топузян В. О.** Синтез некоторых четвертичных аммониевых солей на базе 4а,8-диметил-3Н,5Н-бис-спиро[циклогексан-4а,5-дигидроизобензофуоро[5,6-с]фуран]-1,7-(3Н,4Н)-диона и их биологическая активность // *Хим. ж. Армении*. т.68, №4, 2015, էջ 508-514:
31. **Galstyan L. Kh., Avetisyan K. S. and Halebyan Z. Gh.** Synthesis and anticholinesterase activity of quaternary ammonium salts of functional substituted dihydroisobenzofuro[5,6-c]furan-1,7-(3H,4H)-dione // *Book of abstracts of 3rd International Scientific Conference on “Dialogues on Sciences”*, Yerevan, 2015, էջ 122:
32. **Saghatelyan A., Asmaryan Sh., Muradyan V., Tepanosyan G.** Towards sustainable land use: new methods for assessing the ecological state of Armenian grasslands. *Abstracts book of the International Conference “Applied Ecology: Problems, Innovations”*: ICAE-2015, 7-10 May, 2015, Tbilisi – Batumi, էջ 129:
33. **Muradyan V.** The use of remote sensing data for studying the dynamics and monitoring climate condition of mountain ecosystem (Armenia) // *33rd International Geographical Congress Book of Abstracts*, (21-25.08.2016). - China Beijing, 2016, էջ 597:
34. **Muradyan V.** The use of remote sensing data for vegetative drought monitoring of mountain ecosystem (Armenia) // *33rd International Geographical Congress Book of Abstracts*, (21-25.08.2016). - China Beijing, 2016, էջ 1305:
35. **Tepanosyan G., Muradyan V., Asmaryan Sh.** Land use mapping of Yerevan based on CORINE LU/LC nomenclature using GIS & Remote Sensing technologies // *Proceedings of the*

8th international youth school- conference “Meridian” (21.05-24.05.2016), Kursk, Russia. 2015, էջ 91-94:

36. **Мурадян В. С., Асмарян Ш. Г., Сагателян А. К.** Мониторинг состояния растительности в Армении с помощью дистанционных технологий // Региональные проблемы дистанционного зондирования земли, Материалы II Международной научной конференции, г. Красноярск, 22–25 сентября 2015, էջ 308-313:
37. **Մուրադյան Վ. Ս., Աբովյան Լ. Ս.** Սյունիքի մարզի լանդշաֆտների գեղագիտական գնահատումն ու քարտեզագրումն աշխարհագրական տեղեկատվական համակարգերի միջոցով // Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, Հանրապետական գիտաժողովի նյութեր (6-7 մայիսի, 2015), Երևան, 2015, էջ 249-254:
38. **Muradyan V. S. & Asmaryan Sh. G.** Applying landscape-ecological concept and GIS modelling for assessing and mapping of ecological situation of mountainous landscapes (on the case of Syunik marz, Armenia) // Geocarto International, Volume 30, Issue 10, 2015, էջ 1077-1091: DOI: 10.1080/10106049.2015.1013065:
39. **Astsatryan H., Hayrapetyan A., Narsisian V., Asmaryan Sh., Saghatelyan A., Muradyan V., Giuliani G., Guigoz Y., Ray N.** An interoperable cloud-based scientific GATEWAY for NDVI time series analysis // Elsevier "Computer Standards & Interfaces", Volume 41, 2015, էջ 79–84: DOI: 10.1016/j.csi.2015.02.001:
40. **Asmaryan Sh. G., Muradyan V. S., Tepanosyan G. O., Hovsepyan A., Minasyan L. and Saghatelyan A. K.** A Practice of Using Remote Sensing Technologies in Geoecological Studies // Journal of Siberian Federal University. Engineering & Technologies, 2015, Issue 8, էջ 1024–1031: DOI: 10.17516/1999-494X-2015-8-8-1024-1031:
41. **Muradyan V. S., Asmaryan Sh. G., Saghatelyan A. K.** Assessment of space and time changes of NDVI (biomass) in Armenia’s mountain ecosystems using remote sensing data // Современные проблемы дистанционного зондирования Земли из космоса, 2016, Т. 13. № 1, էջ 49–60: DOI: 10.21046/2070-7401-2016-13-1-49-60.:
42. **Մուրադյան Վ. Ս.** Հողերի աշխարհագրություն: Դաշտային պրակտիկայի կազմակերպման ուսումնամեթոդական ուղեցույց // Եր., ԵՊՀ հրատ., 2016, 52 էջ:
43. **Մկրտչյան Լ. Ա.** Իրադարձային տուրիզմի զարգացման հեռանկարները Գեղարքունիքի մարզում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 3, 2016:
44. **Մկրտչյան Լ. Ա.** Տեղեկատվական տեխնոլոգիաները աշխարհագրության մեջ // Հայ-Ռուսական համալսարանի հոբելյանական 10-րդ տարեկան գիտաժողով, 2015թ.:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Մելիքյան Հենրիկ Աշոտի,*
 տեխնիկական գիտությունների թեկնածու,
 դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Շեկյան Լավրենտի Արամի** - Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. **Հակոբյան Մամիկոն Զալիբեկի** - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Հակոբյան Մաքսիմ Ասատուրի** - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ավագ գիտաշխատող
4. **Խուրշուդյան Արմեն Կորյունի** - տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. **Հովհաննիսյան Անդրանիկ Պարույրի** - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
6. **Բաղդոյան Շուշան Գևորգի** - ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Կուտուզյան Նելլի Ալբերտի** - ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Արտեմյան Ռոբերտ Նորիկի** - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Դարբինյան Ալբերտ Սարգսի** - դասախոս, ԳՊՀ պրոֆեսոր
4. **Ավետիսյան Վարազդատ Կորյունի** - դասախոս
5. **Հովհաննիսյան Մարգար Արտավազի** - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ
2. Կառավարման ավտոմատացված համակարգեր
3. Ծրագրային ապահովման մշակում
4. WEB-տեխնոլոգիաներ
5. Համակարգչային թեստավորում

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ձեռնարկ	ՈՒՍՈՒՄԱՆԹՐՈՂԱԿԱՆ ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	12	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Մելիքյան Հ. Ա., Հարությունյան Զ. Գ.** Լիազորությունների փոխանցման խնդիրը հատուկ նշանակության կառավարման տարածքային ավտոմատացված համակարգերում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3, 2016:

2. **Кутузян Н. А., Григорян М. С., Шемян Л. А.** Поперечный изгиб свободно опертой балки при наличии продольных сил // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016, N 3:
3. **Հովհաննիսյան Ա. Պ.** Գործածությունից դուրսեկած ռետինատեխնիկական իրերի վերօգտագործման նոր տեխնոլոգիաներ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3, 2016:
4. **Հակոբյան Մ. Զ., Հովհաննիսյան Մ. Ա.** Անօդաչու թռչող սարքերի նշանցային գծի կայունացման և կառավարման մի օրինակ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2, 2016:
5. **Шемян Л. А., Григорян М. С.** Об одной граничной задаче теории установившейся фильтрации жидкости // Вестник НПУА. Серия механика, машиноведение, машиностроение, 2015, №2, էջ 29-39:
6. **Верлинский С. В., Шемян А. Л., Шемян Л. А.** Изгиб балки на упругой шероховатой полосе равномерно распределенными поперечными силами при наличии сжимающих осевых сил // Национальный политехнический университет Армении. Вестник. Сборник научных статей, Ч.2, Ереван, Чартарагет, 2016, էջ 408-415:
7. **Haroutunian M., Avetisyan V.** Development of the test quality evaluation system // Proceedings of the International Conference on Computer Science and Information Technologies (CSIT 2015), Armenia, Yerevan, 2015, September 28-October 2, էջ 372-375:
8. **Haroutunian M., Avetisyan V.** New approach for test quality evaluation based on Shannon Information measures // Transactions of IIAP NAS RA, Mathematical Problems of Computer Science, Yerevan, 2015, vol. 44, էջ 7-21:
9. **Haroutunian M., Avetisyan V.** Analysis of the Experiments for Test Quality Evaluation New Approach // Transactions of IIAP NAS RA, Mathematical Problems of Computer Science, Yerevan, 2016, vol. 45, էջ 35-43:
10. **Акопян М. З.** Выбор характеристики усилительного элемента и некоторых параметров автогенераторного преобразователя для гальванометрических автокомпенсаторов // Актуальные проблемы современной науки V международная научно-практическая конференция. Ставрополь, 16-20 февраля 2016 года. Выпуск 5, том 2, էջ 183-186:
11. **Акопян М. З.** О компенсации кинематических обратных связей в системах стабилизации с одним несоосным оптическим датчиком // Актуальные проблемы современной науки V международная научно-практическая конференция. Ставрополь, 16-20 февраля 2016года. Выпуск 5, том 2, էջ 187-190:
12. **Դարբինյան Ա. Ս.** Հակադրության սայմաններում որոշումների կայացման համակարգի մոդելի մշակում // National Polytechnic University of Armenia, Bulletin, Collection of Scientific Papers, Part 1, Yerevan, 2016:

**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Դեկան՝ Ղաջոյան Համլետ Գրիշայի,
փիլիսոփայական գիտությունների
թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ Գևորգյան Գոհար Վոլոդյայի**

**ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ**

Դասիչ	Մասնագիտություն
030400	Պատմություն
030500	Իրավագիտություն
051100	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/

Մասնագիտացումներ՝

բակալավր՝	մանկավարժություն իրավագիտություն պատմություն
մագիստրոս՝	մանկավարժություն իրավագիտություն պատմություն (իրավունքի հիմունքներ)

Ուսանողների թիվը՝ 182

Շրջանավարտների թիվը՝ 73

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2015-2016 ուսումնական տարում Հումանիտար մասնագիտությունների ֆալուլտետում անփոփոխ մնաց գլխավոր կարգախոսը, այն է՝ ուսման որակի աստիճանական բարելավում: Հաշվետու ժամանակաշրջանում կատարեցինք մեր առջև դրված և զարգացման հայեցակարգով նախատեսված երկու գլխավոր խնդիրները. ուսման ընդհանուր առաջադիմությունը կիսամյակային և տարեկան կտրվածքով պահել 80 %-ի սահմանագծում, իսկ ընդհանուր առաջադիմության մեջ գերազանց և գերազանց ու լավ գնահատականների տեսակարար կշիռը՝ 60 %-ի սահմանագծում: Նախորդ և ներկա նույն ժամանակահատվածներում ուսման առաջադիմությունների միջև էական տարբերություն չկար, ներկայումս՝ 80.2 %-նախորդ՝ 81 %: Մինչդեռ որոշ տարբերություն ի հայտ եկավ բակալավրիատի և մագիստրատուրայի առաջադիմությունների միջև: Այսպես. բակալավրիատում՝ 3 %-ով աճեց, իսկ մագիստրատուրայում նվազեց 3.5 %-ով: Մեր առաջիկա խնդիրն է բարձրացնել մագիստրոսական խմբերում ուսման առաջադիմությունը և որակը, ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը չապահովել ի հաշիվ բակալավրիական խմբերի: Հաշվետու ժամանակաշրջանում բոլոր խմբերում կատարվել են աշխատանքներ ուսման որակը և արդյունավետության ցուցիչը բարձրացնելու ուղղությամբ: Այսպես. ունեցանք 100 %-անոց առաջադիմությամբ 9 խումբ: Տարեկան կտրվածքով C տիրույթի և A ու B տիրույթի գնահատականների հարաբերակցությունը վաստում է, որ նկատվել է ուսման որակի բարձրացում: Ներկայումս գործածական է մոտիվացիայի կամ շահադրդման գործոնը: Այս տեսանկյունից բարձր գնահատականներ վաստակելու մղումը, շահագրգռվածությունը հաշվետու ժամանակաշրջանում առավել հստակ զգացնել տվեց: Խոսքը վերաբերում է անվճար ուսուցման տեղերի և բազմաթիվ դրամաշնորհներից օգտվելու հնարավորությանը, որից օգտվել կարողացան նաև իրավագիտության խմբերի ուսանողները: Այն մրցակցությունը, որ ծավալվել է ուսանողների միջև բարձր գնահատականներ վաստակելու նպատակով, երևում է փոխատեղման արդյունքների ամփոփման գործընթացից: Մրցակցությունը առավել զգալի էր մանկավարժական խմբերում, որտեղ անվճար ուսուցման 7 տեղերի համար պայքարում 3 ուսանող անվճար սովորելու իրավունքը զիջեցին բարձր առաջադիմություն դրսևորած համակուրսեցիներին: Տարբեր դրամաշնորհներից օգտվող ուսանողները նույնպես պայքարում էին միջին որակական բարձր գնահատականը պահպանելու համար: Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի 42 ուսանող օգտվել են տարբեր դրամաշնորհներից, այդ թվում՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամ - 8 ուսանող, Վիվասել - 12, Նիշանյան՝ 11, Հայ կրթական հիմնարկություն՝ 8, Թրփանճեան և Ագեան հիմնադրամ՝ 1, «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն՝ 2:

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում իրենց ուսանողական իրավունքներն են վերականգնել 16 ուսանող, ԳՊՀ այլ ֆակուլտետներ են տեղափոխվել 6 ուսանող, այլ ֆակուլտետներից Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ են տեղափոխվել 2 ուսանող, ակադեմիական պարտքերի և անհարգելի բացակայությունների պատճառով հեռացվել են 14 ուսանող: Անհարգելի բացակայությունների պատճառով նկատողություն են ստացել 39 ուսանող:

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքում բակալավրիատում գրանցվել է 98 % առաջադիմություն, իսկ մագիստրատուրայում՝ 85.7%:

Իրավագիտություն բաժնի բակալավրիատում 32 շրջանավարտներից 12-ն ամփոփիչ ատեստավորման քննություններից ստացել են «գերազանց», 10-ը՝ «լավ», 8-ը՝ «բավարար», 2-ը՝ խառը գնահատականներ: Գերազանցության դիպլոմ ստացել են 9 ուսանող:

Իրավագիտության մագիստրատուրայի 17 շրջանավարտներից 10-ը իրենց թեզը պաշտպանել են «գերազանց», 3-ը՝ «լավ», 1-ը՝ «բավարար» գնահատականներով, 3 ուսանող չի ներկայացել մագիստրոսական թեզի պաշտպանությանը: Գերազանցության դիպլոմ ստացել են 7 շրջանավարտ:

Պատմության բաժնի բակալավրիատի 12 շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորման քննություններից 7-ը ստացել են «գերազանց», 1-ը՝ «լավ», 3-ը՝ «բավարար», 1-ը՝ խառը գնահատականներ: Գերազանցության դիպլոմ ստացել են 5-ը:

Պատմության մագիստրատուրայի 6 շրջանավարտներից բոլորն իրենց թեզերը պաշտպանել են «գերազանց» գնահատականով: Գերազանցության դիպլոմ ստացել են 6 շրջանավարտ:

Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) բաժնի բակալավրիատում 6 շրջանավարտներից 3-ն ամփոփիչ ատեստավորման քննություններից ստացել են «գերազանց», 2-ը՝ «լավ», 1-ը՝ խառը գնահատականներ: Գերազանցության դիպլոմ ստացել են 3 ուսանող: 1-ը ստացել է «անբավարար» գնահատական:

Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) մագիստրատուրայի 5 շրջանավարտներից 3-ը իրենց թեզը պաշտպանել են «գերազանց», 1-ը՝ «բավարար» գնահատականներով, 1 ուսանող չի ներկայացել մագիստրոսական թեզի պաշտպանությանը: Գերազանցության դիպլոմ ստացել է 1 շրջանավարտ:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները հիմնականում կատարել են դրական դիտարկումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնագիտությունների կրթական ծրագրերի բարեփոխման ուղղությամբ հետևողական աշխատանքներ են կատարվել: Ուսումնական պլաններում ներառվել են մանկավարժական կրթամասի դասընթացներ: Ուսումնական ծրագրերի բարելավման նպատակով մշակվել են 8 նոր դասընթացներ բակալավրիատում, 6-ը՝ մագիստրատուրայում: Նախորդ ուսումնական տարիներին մշակվել և 2015-2016 ուսումնական տարում դասավանդվել է 6 նոր դասընթաց:

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում ուսանողների և դասախոսների նախաձեռնությամբ անցկացվել են մի շարք միջոցառումներ:

Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Արփինե Զարգարյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց բաց դաս-միջոցառում «Խոսում են երաժշտական գործիքները» խորագրով: Իրավագիտության ամբիոնի դասախոս Սամվել Խաչատրյանը «Սրբոց Վարդանանց» և «Սրբոց Թարգմանչաց» միջոցառումների շրջանակում զեկուցեց «Հայոց այբուբենի ստեղծման հարցի շուրջ» թեմայով:

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողներն ակտիվորեն մասնակցեցին «Թանգարանային գիշեր» և Ուսանողների օրվան նվիրված համահամալսարանական մշակութային միջոցառումներին:

2015-2016 ուսումնական տարում ֆակուլտետի դասախոսները և ուսանողները մասնակցեցին ֆակուլտետային, համալսարանական, հանրապետական, միջազգային գիտաժողովների, կոնֆերանսների:

Ֆակուլտետի դասախոսները գիտական զեկուցումներով հանդես եկան Գավառի պետական համալսարանի ամենամյա գիտաժողովին՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին՝ ներկայացնելով 15 հոդված: 5 ուսանող զեկուցումներով հանդես եկան Գավառի պետական համալսարանի Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված ուսանողական գիտաժողովին՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին:

ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում Պատմության ամբիոնի կողմից կազմակերպվեց ուսանողական գիտական կոնֆերանս: Ուսանողները հանդես եկան «Հայկական բանակի կազմավորման գործընթացը», «Լեոնային Ղարաբաղի հիմնահարցը ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության ոլորտում», «Զինադադարի հաստատումը: Ադրբեջանադարաբաղյան պատերազմը», «Պետականաշինությունը Հայաստանի երրորդ Հանրապետությունում» և այլ զեկուցումներով:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնների կողմից մեծ ուշադրություն է դարձվել «E-learning GSU» համակարգում ներբեռնված առարկայական ծրագրերում դասընթացների վերջնարդյունքների վերանայմանը:

Միջազգային ծրագրերի շրջանակներում աշխատաժողովների մասնակցել են ֆակուլտետի 5 դասախոս, ուսումը այլ բուհերում շարունակել է 2 ուսանող: Արտերկրի բուհերից վերադարձած 2 ուսանող ներկայացրել են շնորհանդես-հաշվետվություններ:

2016-2017 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգում նախատեսում ենք ավելացնել տարբեր դրամաշնորհներից օգտվող ուսանողների քանակը: 2015-2016 ուսումնական տարվա իրավագիտության բաժնի բակալավրիատի ավարտական կուրսի ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցած 32 շրջանավարտներից 26-ի ՄՈԳ-ը բարձր է 2.3 միավորից, որոնք ստացան A և B տիրույթի գնահատականներ: 6 ուսանողների ՄՈԳ-ը ցածր էր 2.3 միավորից, նույնքան ուսանող էլ վաստակեցին C գնահատական: Օբյեկտիվության գործոնի վերուծության ուղղությամբ ուսանողների հարցումների արդյունքը հետևյալն է. 80 %-ը գտնում է, որ գնահատվում է օբյեկտիվորեն, 20 %-ը կասկածանք է հայտնել, ինչը մտահոգիչ է և պահանջում է հսկողություն սահմանել քննաշրջաններում գործոնների ճիշտ գնահատման գործընթացի նկատմամբ: Պատճառը տեսնում ենք բազմագործոն գնահատման համակարգում, որտեղ գործոններից մեկի դեպքում ուսանողի սուբյեկտիվիզմը կարող է բախվել դասախոսի օբյեկտիվ գնահատմանը: Հարցումների արդյունքում ուսանողների 97%-ը նշել է, որ տիրապետում է գիտելիքների գնահատման համակարգին, իսկ 3%-ը՝ չի տիրապետում գնահատման գործոններին:

Ֆակուլտետի ինքնավերլուծություն իրականացնող աշխատանքային խումբը ակտիվորեն մասնակցել է հավատարմագրման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Կրթության որակի ապահովման նպատակով ուսանողների, շրջանավարտների, դասախոսների շրջանում կատարվել են հարցումներ, և ապահովվել է հետադարձ կապ: Հարցումների արդյունքները, ուսանողների առաջարկությունները քննարկվել են ֆակուլտետի խորհրդի նիստերում, և կատարվել են համապատասխան եզրահանգումներ: Հաշվի առնելով ուսանողների առաջարկությունը, ուսանողների գիտելիքների գնահատման նոր ձևերի, արդի մեթոդների կիրառման անհրաժեշտությունը՝ 8 դասընթացներից կազմակերպվել է միջանկյալ և ամփոփիչ քննությունների անցկացում «Examination.GSU» համակարգի միջոցով:

**ԳՊՀ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2016-2017
ՈՒՍԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններն են.

1. Ուսման գործընթացի կազմակերպման և կրթության որակի բարելավման ոլորտում.

- 1.1. Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացումը համարել ֆակուլտետում տարվող աշխատանքների հիմնական ուղղությունը,
- 1.2. 2016-2017 ուսումնական տարում ապահովել ուսման առաջադիմություն 80%-ի սահմանագծից բարձր՝ կիսամյակային և տարեկան արդյունքներով,
- 1.3. Ուսման որակը բարձրացնելու և այն առավել չափելի դարձնելու նպատակով կիրառել «ինտենսիվ առաջադիմություն» հասկացությունը, որի պարագայում 80% և բարձր առաջադիմությանը զուգահեռ A և B գնահատականների տեսակարար կշիռը չպետք է ցածր լինի 60%-ի սահմանագծից,
- 1.4. Ապահովել ֆակուլտետում գործող մասնագիտությունների մանկավարժական ուղղվածությունը, արդիականացնել և կատարելագործել ուսումնական պլաններն ու ծրագրերը՝ նպատակակետ ունենալով շրջանավարտների աշխատանք ձեռք բերելու հնարավորությունների ընդլայնումը,
- 1.5. Առավել կատարելագործել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների խրախուսման համակարգը, այդ նպատակով «Լավագույն կուրս» և «Լավագույն ուսանող» անվանակարգերում խրախել 1-3 տեղերը զբաղեցնողներին: Ավելացնել խրախուսման անվանակարգերը «Հասարակական ակտիվություն ունեցող ուսանող», «Միջոցառումների ակտիվ կազմակերպիչ» և այլն,
- 1.6. Պարբերաբար բարելավել ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, վերանայել դրանց բովանդակությունն ու կառուցվածքը: Կատարել ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի համեմատական ուսումնասիրություն՝ հանրապետության լավագույն բուհերի ծրագրերի հետ,
- 1.7. Դեկանատի և ամբիոնների գործունեության առանցքում պահել մագիստրոսական կրթության դերի ու նշանակության կարևորությունը, աստիճանաբար բարձրացնել ուսման առաջադիմությունը և ապահովել ուսման որակական ցուցանիշների ձեռքբերումը,

- 1.8. Շարունակել ուսանողների գնահատման համակարգի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները, ապահովել գնահատման օբյեկտիվություն՝ հենվելով ուսանողների անանուն հարցումների և ամփոփիչ քննությունների և ձեռք բերված ՄՈԳ-երի համեմատական վերլուծության ու համադրման վրա,
- 1.9. Ֆակուլտետի խորհրդի, ամբիոնների գործունեության արդյունավետության բարձրացում, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի և կայուն աշխատանքային դիմի պահպանում,
- 1.10. Ամբիոնների գերակա գիտական ուղղվածության հստակեցում, գիտական ներուժի նպաստակամ դրած ուղղորդում ըստ կարողությունների, նախասիրությունների, ժամանակակից, հրատապ ու տարածաշրջանային խնդիրների հետ փոխառնչվող խնդիրների վերհանում և ուսումնասիրում,
- 1.11. Դասախոսական կայուն կազմի պահպանումը համարել ֆակուլտետի առաջընթացի և զարգացման հիմնական երաշխիքը: Ստեղծել բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ՝ դասախոսական անձնակազմի սերնդափոխությունը սահուն կերպով իրականացնելու համար: Պրոֆեսորադասախոսական անձնակազմը մշտապես համալրել երիտասարդ, խոստումնալից կադրերով, ապահովել փորձառու մասնագետների ու երիտասարդ կադրերի արդյունավետ համագործակցությունը:
- 1.12. Ուսումնասիրել ուսանողների սոցիալական վիճակը, բացահայտել կարիքները, նպաստել ուսանողների ընտանիքների սոցիալական վիճակի բարելավմանը, օգնել և ուղղորդել տարաբնույթ դրամաշնորհներից օգտվելուն, ուսման վարձի լրիվ կամ մասնակի զեղչման ակնկալիքով:
- 1.13. Հավատարմագրման գործընթացին պատշաճ նախապատրաստում: Ինստիտուցիոնալ կարողությունների վերհանում, ինքնավերլուծության իրականացում, աշխատանքների արդյունավետ կազմակերպում, ուսանողների և դասախոսների առավելագույն ներգրավում ինքնավերլուծության աշխատանքներում:
- 1.14. Շարունակել դասավանդման մեթոդների կատարելագործման գործընթացը, ավանդական և արդի մեթոդների արդյունավետ համադրում, համագործակցային փոխներգործուն և այլ նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառում:

2. Գիտելիքների նկատմամբ ուսանողների հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը ապահովելու ոլորտում

- 2.1. Կարևորել գիտելիքը՝ որպես արժեք, ընդգծել գիտելիքի դերն ու նշանակությունը մարդու անձնական և հասարակական կյանքում, շեշտադրել 21-րդ դարում կայուն և խորը գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը: Այս նպատակով ի ցույց դնել ֆակուլտետի լավագույն շրջանավարտների աշխատանքային հաջողությունները: Միաժամանակ, խրախուսել բարձր առաջադիմություն ունեցող և ակտիվ ուսանողների նախաձեռնողականությունը, ինչպես նաև խրախուսել ստեղծագործական մոտեցման և նորարարության ջատագով դասախոսական անձնակազմին:
- 2.2. Շարունակել և կատարելագործել ուսումնական պլաններով նախատեսված բոլոր դասավանդվող առարկաների գծով դասախոսության նյութերի տրամադարումը «E-learning GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի միջոցով: Մշտապես հետևել ներբեռնման աշխատանքներին, մատուցվող դասախոսության նյութերի, ոչ միայն քանակական, այլև բովանդակային, որակական կողմի վրա: Միաժամանակ

ուսանողներին տրամադրել ուսումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնաօժանդակ այլ նյութեր:

- 2.3. Նպաստել ուսանողական ինքնակառավարման մարմիններում սովորողների ակտիվ գործունեությանը, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության գործունեությունը նպատակաուղղել ուսման առաջադիմության և որակի ապահովմանը: Ապահովել ֆակուլտետի ուսանողների ակտիվ դերակատարությունը համալսարանի կառավարման գործընթացում: Խրախուսել նաև արտահամալսարանական հասարակական այլ կազմակերպություններում ուսանողների մասնակցությունը:
- 2.4. Ֆակուլտետում կահավորել համակարգչային մեկ լսարան, ուսանողներին համակարգչային տեխնիկայով և համացանցային կապով լիարժեք ապահովելու նպատակով:
- 2.5. Հանրապետության մյուս գիտամշակութային հիմնարկությունների, այդ թվում՝ ՀՀ ազգային գրադարանից, Ազգային արխիվից, Գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտների գրադարաններից օգտվելու նկատառումներով պրակտիկ օգնություն ցուցաբերել ուսանողներին աշխատակազմի փորձառու դասախոսների միջոցով,
- 2.6. Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի հնարավորությունները առավելագույնս օգտագործել, իրավագիտության մասնագիտության լավագույն ուսանողների մասնակցությունը ապահովել Ամառային և Ձմեռային դպրոցների աշխատանքներին,
- 2.7. Ուսանողների կողմից բարձրացված տարաբնույթ հարցերին ընթացք տալու գործընթացը պահել դեկանատի ամենօրյա ուշադրության կենտրոնում, բոլոր կարգի /անանուն, էլեկտրոնային, բանավոր/ հարցումների արդյունքները քննել ֆակուլտետի խորհրդի նիստերում և ձեռնարկված միջոցառումների մասին իրազեկել ուսանողներին համապատասխան միջոցներով,
- 2.8. Առավել հետևողականորեն զբաղվել սովորողների ուսումնական, նախաավարտական, գիտահետազոտական պրակտիկաների արդյունավետության բարձրացման խնդիրներով, ընդլայնել պրակտիկայի բազաները և ուշադրության կենտրոնում պահել պրակտիկայի ընթացքը՝ ուսանողներին գործնական կարողությունների զարգացման ու կատարելագործման, պրակտիկ ու տեսական գիտելիքների համամասնության ապահովման նպատակով,
- 2.9. Ֆակուլտետում կարևորել տարբեր ծրագրերով արտերկրում ուսումը շարունակելու մրցույթները և խրախուսել ուսանողներին՝ նրանց թիվը առավելագույնի հասցնելու նկատառումներով: Ուսումն արտերկրում ավարտած ուսանողների հաշվետվություն-շնորհանդեսներին մասնակից դարձնել հնարավորինս մեծ թվով ուսանողների: Լուրջ ուշադրություն դարձնել օտար լեզուների դասավանդման գործընթացին, միաժամանակ ուղղորդել ուսանողներին՝ մասնակցելու համալսարանում մշտապես կազմակերպվող օտար լեզուների արագացված դասընթացներին:

3. Ուսանողական առօրյան հետաքրքիր դարձնելուն, սովորողների հոգևոր-մշակութային դաստիարակությանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը ուղղված աշխատանքների ոլորտում.

- 3.1. Ուսանողական առօրյան հետաքրքիր և բովանդակալից դարձնելու նպատակով բուհի ուսանողական խորհրդի և ֆակուլտետի ուսանողական խորհրդի միջոցով

- սովորողներին ներգրավել տարաբնույթ միջոցառումների կազմակերպմանը՝ նրանց գեղագիտական ճաշակի բարձրացման նպատակով,
- 3.2. Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ դեպի Հայաստանի պատմամշակութային տեսարժան վայրերը, ապահովել ուսանողների մասնակցությունը հանրապետական մասշտաբի միջոցառումներին, այդ թվում՝ Թանգարանային գիշերներին, Ուսանողների օրվան և այլ ձեռնարկների,
 - 3.3. Մշտական կապ պահպանել ուսանողների ծնողների հետ, չսահմանափակվել միայն առաջին կուրսեցիների ծնողների հետ հանդիպման կազմակերպմամբ, այլև ապահովել արդյունավետ հետադարձ կապեր, ականջալուր լինել նրանց պահանջներին, առաջարկություններին և դրանք ներառել ֆակուլտետի գործողությունների ծրագրում,
 - 3.4. Բոլոր հնարավոր միջոցները գործադրել առաջին կուրս ընդունվածներին ուսանողական ինքնակառավարման մարմիններում ինտեգրելու և տարաբնույթ միջոցառումներին մասնակից դարձնելու համար: Նպաստել նրանց անհատական ունակությունների և նախասիրությունների զարգացմանը, ընդգրկել համալսարանում գործող խմբակներում,
 - 3.5. Ընթերցասիրության արմատավորումը ուսանողության շրջանում համարել դեկանատի և ամբիոնների ամենօրյա բացատրական աշխատանքի բաղկացուցիչ մասը, շարունակել կազմակերպել գեղարվեստական և մասնագիտական գրականության քննարկումներ, հրավիրել հանրապետության ճանաչված մշակութային գործիչների և արվեստի ներկայացուցիչների, կազմակերպել վարպետության դասեր,
 - 3.6. Տպավորիչ և հիշարժան լինելու նկատառումներով շրջանավարտների դիպլոմների հանձնումը կազմակերպել տարբերակված ձևով. Պատմաբաններին՝ պատմական վայրերում կամ մշակութային հուշարձանների շրջակայքում, իրավաբաններին՝ իրավական որևէ հաստատությունում, մանկավարժների դիպլոմների հանձնմանը մասնակից դարձնել կրթության ոլորտի նշանավոր մարդկանց:

**Հ. Գ. Ղազոյան՝
ԳՀՀ հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետի դեկան**

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	6	-	3	100
2-րդ	22	-	4	62
3-րդ	6	-	1	66.6
4-րդ	34	-	9	78.8
Պատմություն				
1-ին	3	-	2	100
2-րդ	4	-	-	100
3-րդ	4	-	3	100
4-րդ	11	-	8	100
Մանկ. և մեթոդ.(տարր. կրթության)				
1-ին				
2-րդ	13	-	-	90
3-րդ	15	-	9	100
4-րդ	6	-	4	100
	6	-	3	100
Ընդամենը	130	-	46	85.5
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	16	-	2	43.7
2-րդ	16	-	5	50
Պատմություն				
1-ին	4	-	-	50
2-րդ	6	-	6	100
Մանկ. և մեթոդ. (տարր. կրթության)				
1-ին	5	-	1	60
2-րդ	5	-	2	60
Ընդամենը	52	-	16	55.7

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	6	-	2	83.3
2-րդ	21	-	8	85.7
3-րդ	6	-	3	83.3
Պատմություն				
1-ին	3	-	3	100
2-րդ	4	-	3	100
3-րդ	4	-	2	100
Մանկ. և մեթոդ.(տարր. կրթության)				
1-ին	10	-	-	90
2-րդ	15	-	4	93.3
3-րդ	6	-	4	100
Ընդամենը	75		29	90.6
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	15	-	2	66.6
Պատմություն (իրավ. հիմ.)				
1-ին	4	-	2	50
Մանկ. և մեթոդ. (տարր. կրթության)				
1-ին	3	-	1	100
Ընդամենը	22		5	68

2015/2016 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	3	-	-	29	4

Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 3

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

*Ամբիոնի վարիչ՝ Քուրքյան Լուսիկ Ներսեսի,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ղաջոյան Համլետ Գրիշայի - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր,
2. Օհանյան Հայկ Հեքիմի - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր,
3. Սիդելնիկովա Ռիտա Վյաչեսլավի - հոգեբանական գիտությունների թեկնածու,
4. Գարեյան Մելանյա Վարդանի - դասախոս,
5. Խաչիկյան Հայկ Խաչիկի - դասախոս,
6. Համբարձումյան Արմինե Եփրեմի - դասախոս,
7. Պետրոսյան Նաիրա Ֆահրադի - դասախոս,
8. Ղաջոյան Արմինե Սամվելի - լաբորանտ:

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Այվազյան Էդվարդ Իշխանի - մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ,
2. Բարսեղյան Պարզև Աշոտի - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. Զարգարյան Արփինե Հրանտի - դասախոս,
4. Կոտոլյան Թամարա Հակոբի - դասախոս,
5. Սաֆարյան Ալիտա Սոսի - դասախոս,
6. Դավթյան Արմինե Վահրամի - դասախոս:

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Երեխայի իմացական ոլորտի, անձնային հատկությունների և վարքի ձևավորման ու զարգացման հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները:
2. Մարդը ժամանակակից սոցիալական, տնտեսական և քաղաքական զարգացման արժեհամակարգում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	11	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Բարսեղյան Պ. Ա.** Վաղ հավատալիքներն ու դիցաբանությունը Հայաստանում, Երևան, հեղինակ. հրատ., 2015, 276 էջ:
2. **Բարսեղյան Պ. Ա.** ՀՀ բուհերում «Կրոնների պատմություն» առարկայի դասավանդման մի քանի հարցեր, Տարեգիրք 2015, Աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 145-153:
3. **Բարսեղյան Պ. Ա.** Երկնքի պաշտամունքը Զինաստանում //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3 (18), 2016:
4. **Ղաջոյան Հ. Գ.** Սպորտի փիլիսոփայական արժևորումը //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3 (18), 2016:
5. **Սաֆարյան Ա. Ս., Դադոյան Ա. Ն.** Սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը կրտսեր դպրոցում՝ դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառմամբ //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3 (18), 2016:
6. **Քուրբջյան Լ. Ն., Աթայան Ն. Ա.** Մասնագիտական ինքնորոշման դրդապատճառների հիմնախնդիրը դեռահասության տարիքում//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3 (18), 2016:
7. **Օհանյան Հ. Հ.** Հայ հասարակական –մանկավարժական միտքը աշխատանքային կրթության վերաբերյալ (19-րդ դարի 2-րդ կես – 20-րդ դարի սկիզբ) //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3 (18), 2016:
8. **Խաչիկյան Հ. Խ.** Տարրական դասարաններում երեխայի մտածողության զարգացումը շախմատի դասավանդման գործընթացում //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3 (18), 2016:
9. **Давтян А. В.** Энциклопедические статьи: «Социология религии в Армении», (обзор для энциклопедии «Социология религии», гл. ред. проф. М.Ю. Смирнова), М., 2015г.
10. **Давтян А. В.** Энциклопедические статьи: «Предписания религиозные», (обзор для энциклопедии «Социология религии», гл. ред. проф. М.Ю. Смирнова), М., 2015г.
11. Դավթյան Ա. Վ. Զինակոչիկների հարմարման սոցիալ-մանկավարժական և հոգեբանական մեխանիզմները //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3 (18), 2016:
12. **Давтян А. В.** Проблема формирования толерантности в общеобразовательных школах Армении, «Российский журнал социологии религии», ISSN 2411-2089, N1, 2015.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Հարությունյան Համլետ Մալխասի,
 պատմական գիտությունների
 դոկտոր, պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ղարաբյոզյան Արմեն Հայկազի - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. Հակոբյան Արսեն Աշոտի - պատմական գիտությունների թեկնածու
3. Պողոսյան Աշխունջ Ամիրխանի - պատմական գիտությունների թեկնածու,
4. Խաչատրյան Արմենակ Սուրենի - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
5. Հայրապետյան Քանաքարա Խաչիկի - ասիստենտ:

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Զոհրաբյան Էդուարդ Լենդրուշի - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. Թունյան Վալերի Գեորգիի - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառը 19-րդ դարում և 20-րդ դարի 30-ական թվականներին

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	2	-	-	9	4

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հարությունյան Հ. Մ.** Ագրարային փոփոխությունները Նոր Բայազետի գավառում 1921-1929 թթ., ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N3 (18), 2016:
2. **Պողոսյան Ա. Ա.** Արցախյան գորգագործական ավանդույթների արեսալային տարածման ու Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին, Բանբեր հայագիտության, 2015, թիվ 2-3, էջ 78-104:
3. **Պողոսյան Ա.Ա.** Վասպուրականի գորգագործական մշակույթի ուսումնասիրման առանձնահատկությունների մասին, «Էջմիածին» կրոնագիտատական-հայագիտական հանդես, 2016, էջ 107-124 :
4. **Պողոսյան Ա. Ա.** «Եռախորան» գորգի թվագրման հարցի շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N3 (18), 2016:

5. **Ashkhunj Poghosyan On the Origin Anatolian Rugs**, Անատոլիական գորգերի ծագումնաբանության հարցի շուրջ, “Armenian Knot: Traditions of Carpet Weaving Art. Proceedings of the international Conference. Yerevan, 20-22 November, 2013, Ministry of Culture of the Republic of Armenia Yerevan, 2016, 258-270:
6. **Ashkhunj Poghosyan, Reverend Father Asoghik Karapetian** The Rug Collection of the Holy See Museums /Մայր Աթոռի թանգարաններում պահվող գորգերի հավաքածուն/ - “Armenian Knot: Traditions of Carpet Weaving Art. Proceedings of the international Conference. Yerevan, 20-22 November, 2013, Ministry of Culture of the Republic of Armenia Yerevan, 2016, 278-296:
7. **Ashkhunj Poghosyan, Tatev Muradyan** Traditions of Armenian Rug Weaving Culture in Northeastern Transcaucasus /Հայոց գորգագործական մշակույթի ավանդույթները հյուսիս-արևելյան Այսրկովկասում/, Armenian Knot: Traditions of Carpet Weaving Art. Proceedings of the international Conference. Yerevan, 20-22 November, 2013, Ministry of Culture of the Republic of Armenia Yerevan, 2016, էջ 308-315:
8. **Հայրապետյան Ք. Խ.** Ժամանակագրությունը և նրա դասավանդման մեթոդիկան, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 3 (18), 2016:
9. **Թունյան Վ. Գ.** Հայաստանի Հանրապետության 25-ամյակը, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 3 (18), 2016:
10. **Тунян В. Г.** А. С. Грибоедов: новое в известном, Ереван, 2015, 180 с.:
11. **Тунян В. Г.** Армянская церковь за рубежом, Начало XXI в, Ереван, 2016, 304 с.:
12. **Тунян В. Г., М. Гасамлы** Анатолия и Южный Кавказ.- Вопросы Армяноведения. 2016, N 1 (Հայագիտության Հարցեր):
13. **Тунян В. Г.** Реальная политика и миф об уступке Еревана, Акунк (Ակունք), Сборник научных статей, 2016, N 1:
14. **Հակոբյան Ա. Ա.** Պանդի սուրբը. սրբավայրը, բռնագաղթը եւ նոր Սփյուռքը, Գարդմանի եւ Շիրվանի հայության պատմա-մշակութային ավանդները, Երևան, 2016:
15. **Hakobyan A.** From Aleppo to Yerevan: The War and Migration from the Window of the Bus Route// Marcello Mollica (Ed.) Fundamentalism, Ethnographies on Minorities, Discrimination and Trans-Nationalism/ Bd. 44, Reihe: Freiburger Sozialanthropologische Studien/Freiburg Studies in Social Anthropology/ Etudes d'Anthropologie Sociale de l'Université de Fribourg, 2015:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
2. **Ապրոյան Արսեն Հրաչիկի** - իրավաբանական գիտությունների թեկնածու,
3. **Խաչատրյան Սամվել Արտաշեսի** - իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
4. **Վարդանյան Գեղեցիկ Մարատի** - ասիստենտ,
5. **Հովհաննիսյան Օլգա Արտյոմի** - ԳՊՀ դոցենտ,
6. **Մուրադյան Պապին Օնիկի** - ասիստենտ,

7. Ամիրյան Անի Սամվելի - լաբորանտ:

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Հակոբյան Հրանուշ Հրանտի - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. Խաչատրյան Աշոտ Հայկի - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
3. Հարությունյան Մնացական Հայկի - իրավաբանական գիտությունների թեկնածու,
4. Լազարյան Վարդան Գերասիմի - դասախոս,
5. Վարդանյան Մարգարետունի Գոռի - ասիստենտ,
6. Գրիգորյան Տարոն Վրեժի - ասիստենտ,
7. Բախտիկյան Լուսինե Վանիկի - ասիստենտ:

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանի պետության և իրավունքի պատմություն, իրավունքի տեսություն, ՀՀ սահմանադրական, քաղաքացիական իրավունքի ինստիտուտներ, սահմանադրական բարեփոխումներ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	9	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ. Ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015, էջ 24-36:
2. Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ. Նկատառումներ ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների վերաբերյալ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3 (18), 2016:
3. Հակոբյան Ռ. Խ. ՀՀ Ազգային ժողովի սահմանադրական պատասխանատվությունը՝ ըստ ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների // «Սահմանադրական բարեփոխումները ՀՀ-ում. արդի մարտահրավերները» խորագրով միջբուհական գիտաժողովի նյութեր (պատրաստվում է տպագրության):
4. Խաչատրյան Ս. Ա. Գիջությունը որպես հին հայկական զրադաշտական և քրիստոնեական իրավունքի նորմ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015, էջ 495-518 :
5. Խաչատրյան Ս. Ա. Խոսքով Երրորդ Մեծ Արշակունու թագավորության և նրա սպանության հարցի շուրջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015, էջ 519-547 :

6. **Խաչատրյան Ս. Ա.** Սովետական իրավունքի և պետության գոյության փուլերը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015, էջ 548-576:
7. **Խաչատրյան Ս. Ա.** Նորից «Հաճախապատում ճառքի» հեղինակության հարցի շուրջ: Գրիգոր Լուսավորիչ, թե՞ Մեսրոպ Մաշտոց // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3 (18), 2016:
8. **Ամիրյան Ա. Ս.** Հայաստանի Հանրապետությունում ըստ օրենքի ժառանգման իրավական կարգավորումը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015, էջ 577-583 :
9. **Ամիրյան Ա. Ս.** Հայաստանի Հանրապետությունում ըստ կտակի ժառանգման իրավական կարգավորումը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3 (18), 2016:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ամիրխանյան Սամվել Գրիգորի,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ պրոֆեսոր

Դեկանի տեղակալ՝ Հերզնյան Մարիամ Նորիկի,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

**ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ**

Դասիչ	Մասնագիտություն
080300	Ֆինանսներ
081500	Հաշվապահական հաշվառում
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում

Մասնագիտացումներ՝

բակալավր՝	Ֆինանսների բակալավր Ֆինանսների բակալավր տնտեսագիտության բակալավր
մագիստրոս՝	Ֆինանսների մագիստրոս Ֆինանսների մագիստրոս տնտեսագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 196
Շրջանավարտների թիվը՝ 72

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2015-2016 ուսումնական տարին ԳՊՀ-ում մեկնարկեց ձեռքբերումների ամրապնդման, բարձրագույն կրթության ասպարեզում առաջավոր փորձի կիրառման, բուհի միջազգայնացման, կրթության որակի բարձրացման նշանաբանով:

Ուսումնական տարվա ընթացքում բուհում կազմակերպվեցին Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձին նվիրված բազմաթիվ միջոցառումներ, որոնցից անմասն չէր տնտեսագիտական ֆակուլտետը:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում իրականացվել է անխափան ուսումնական գործընթաց:

«Շրջանավարտը՝ պահանջված մասնագետ» ահա ֆակուլտետի կարգախոսը: Ըստ այդմ, իրականացվում են ակտիվ գործընթացներ, հաշվի են առնվում ժողովրդագրական և արտաքին այլ փոփոխությունները, կարևորվում է արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը: Աստիճանաբար ընդլայնվում է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը ուսումնական գործընթացում:

2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում սովորում էին 196 ուսանողներ, այդ թվում՝ 152-ը բակալավրիատում, և 44-ը՝ մագիստրատուրայում: Բակալավրիատի առաջին կուրս են ընդունվել է 12 ուսանող, իսկ 14-ը՝ մագիստրատուրայում: Կուրսերը համալրվել են նաև բանակից վերադարձած ուսանողներով:

Տնտեսագիտական ֆակուլտետում սովորող ուսանողների թիվը

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ	I	II	III	IV	Ընդամենը
Ֆինանսներ	4	32	25	34	95
Հաշվապահական հաշվառում	5	10	0	11	26
Ձեռն. տնտ. և կառավարում	5	9	11	6	31
Ընդամենը	14	51	36	51	152
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ					
Ֆինանսներ	8	13	X	X	21
Հաշվապահական հաշվառում	7	7	X	X	14
Ձեռն. տնտ. և կառավարում	5	4	X	X	9
Ընդամենը	20	24	X	X	44
Ընդամենը ֆակուլտետում	196				

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների առաջադիմությունը

2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակում ֆակուլտետի առաջադիմությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 2,1 %-ով (79.2-ից դարձել է 81.3%), իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 10.7%-ով: Բակալավրիատում այն աճել է 3.3%-ով և հասել 84,3%-ի, իսկ մագիստրատուրայում նվազել է 20%-ով և կազմել 50%, առաջին կիսամյակի համեմատությամբ բակալավրիատում աճը կազմել է 12,5%, իսկ մագիստրատուրայում 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է 15,8%-ով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)

	2014-2015 ուս. տարվա II կիսամյակ	2015-2016 ուս. տարվա I կիսամյակ	2015-2016 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2014-2015 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2015-2016 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆակուլտետ	79.2	70.6	81.3	+2.1	+10.7
Բակալավրիատ	81.0	71.8	84.3	+3.3	+12.5
Մագիստրատուրա	70.0	65.8	50.0	-20	-15.8

Մագիստրատուրայում առաջադիմության նվազել է, քանի որ որոշ ուսանողներ չեն մասնակցել քննաշրջանին՝ ֆինանսական պարտականությունները չկատարելու պատճառով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)

Ֆինանսներ բաժնում

Կուրսը	2014-2015 ուս. տարվա II կիսամյակ	2015-2016 ուս. տարվա I կիսամյակ	2015-2016 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2014-2015 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2015-2016 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	87.5	100	80.0	-7.5	-20
Երկրորդ	80.0	75.8	83.3	+3.3	+7.5
Երրորդ	60.6	72	95.8	+35.2	+23.8
Չորրորդ	-	55.9	-	-	-

Ֆինանսներ մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսում ուսման առաջադիմությունը երկրորդ կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ նվազել է 7,5 %-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ 20%-ով:

Երկրորդ կուրսում այն համապատասխանաբար աճել է 3.3% և նվազել 7.5 %-ով:

Երրորդ կորսի առաջադիմությունը նախորդ տարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ աճել է 35.2%-ով և 23.8%-ով էլ աճել առաջին կիսամյակի համեմատությամբ:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)

Հաշվապահական հաշվառում բաժնում

Կուրսը	2014-2015 ուս. տարվա II կիսամյակ	2015-2016 ուս. տարվա I կիսամյակ	2015-2016 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2014-2015 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2015-2016 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	100	80	80	-20	0
Երկրորդ	-	70	88.9	-	+18.9
Երրորդ	100	-	-	-	-
Չորրորդ	-	80	-	-	-

Հաշվապահական հաշվառում մասնագիտության առաջին կուրսում առաջադիմությունը հաշվետու տարում նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 20%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ պահպանվել է առաջին կիսամյակի մակարդակը՝ 80%:

Հաշվապահական հաշվառում մասնագիտության երկրորդ կուրսի առաջադիմությունը 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 18.9%-ով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)

Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնում

Կուրսը	2014-2015 ուս. տարվա II կիսամյակ	2015-2016 ուս. տարվա I կիսամյակ	2015-2016 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2014-2015 ուս. տարվա II կիսամյակի համեմատու- թյամբ	Շեղումը 2015-2016 ուս. տարվա I կիսամյակի համեմատու- թյամբ
Առաջին	100	100	83.3	-16.7	-16.7
Երկրորդ	81.8	66.7	66.7	-15.1	0
Երրորդ	100	72.7	81.8	-18.2	+9.1
Չորրորդ	-	83.3	-	-	-

Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտության առաջին կուրսում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի և 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ առաջադիմությունը իջել է 16.7%-ով և կազմել 83.3%: Երկրորդ կուրսում նախորդ տարվա համեմատությամբ առաջադիմությունը նվազել է 18.2 %-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ պահպանվել է նույն մակարդակը՝ 66.7%:

Երրորդ կուրսում նախորդ տարվա համեմատությամբ առաջադիմությունը նվազել է 18.2%-ով, իսկ առաջին կիսամյակի նկատմամբ աճել է 9.1 %-ով և կազմել 81.8%:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)

Մագիստրատուրայում

Բաժինը, կուրսը	2014-2015 ուս. տարվա II կիսամյակ	2015-2016 ուս. տարվա I կիսամյակ	2015-2016 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2014-2015 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2015-2016 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆինանսներ I կուրս /ՄՖ/	50	66.7	50	0	-16.7
Ֆինանսներ II կուրս	-	61.5	-	-	-
Հաշվապահական հաշվառում I կուրս /ՄՀՀ/	100	33.3	-	-	-
Հաշվապահական հաշվառում II կուրս	-	100	-	-	-
Ձեռնարկությունների տնտես և կառավարում I կուրս /ՄՁՏԿ/	75	40	50	-25	+10
Ձեռնարկությունների տնտես և կառավարում II կուրս	-	75	-	-	-

ՄՖ առաջին կուրսում առաջադիմությունը նախորդ տարվա համեմատությամբ պահպանվել է նույն մակարդակը 50%, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է 16.7 %-ով:

ՄՁՏԿ առաջին կուրսում առաջադիմությունը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 25%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 10 %-ով:

ՄՁՏԿ երկրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 75%:

Կարևոր է նաև ուսումնառության 7 կիսամյակների ընթացքում տվյալ կուրսի առաջադիմության շարժընթացը:

IV կուրսերի առաջադիմությունն ըստ կիսամյակների

Կիսամյակներ	Ուսանողների թիվը	Ֆինանսներ IV կուրս	Ուսանողների թիվը	Հաշվապահական հաշվառում IV կուրս	Ուսանողների թիվը	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում IV կուրս
1-ին կիսամյակ	21	57,1	15	53,3	6	66,7
2-րդ կիսամյակ	21	85,7	15	73,3	6	100
3-րդ կիսամյակ	36	44,4	13	62,9	4	50,0
4-րդ կիսամյակ	34	72,7	11	81,8	7	80

ԳՀՊ 2015-2016 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

5-րդ կիսամյակ	36	45,7	11	81,8	6	83,3
6-րդ կիսամյակ	33	60,6	11	100	6	100
7-րդ կիսամյակ	34	55	10	80	6	83.3

Ֆինանսներ մասնագիտությունում 4-րդ կուրսի առաջադիմությունը երկրորդ կիսամյակում առաջին կիսամյակի համեմատությամբ աճեց 28,6%-ով և կազմեց 85,7%: Սակայն 3-րդ կիսամյակում առաջադիմությունը նվազեց 41,3%-ով և կազմեց 44,4%, 4-րդ կիսամյակում առաջադիմությունը աճել է 28,3%-ով՝ կազմելով 72,7%: 5-րդ կիսամյակում առաջադիմությունը նվազել է 27%-ով՝ կազմելով 45,7%: 7-րդ կիսամյակում այն կազմել է 55%: Այս կուրսում 15 ուսանողներ ստացել են անբավարար գնահատական կամ չեն ներկայացել քննությունների: Առաջադիմության նման տատանումները արդյունք են անբավարար գնահատականների և քննության չներկայանալուն, ինչը մտահոգության տեղիք է տալիս:

Հաշվապահական հաշվառում մասնագիտությունում այն 53,3%-ից աճեց և 2-րդ և 3-րդ կիսամյակներում կազմեց 62,9%: 4-րդ կիսամյակում առաջադիմությունը աճել է 18,9%-ով և կազմել 81,8 %, որը պահպանվել է նաև 5-րդ կիսամյակում, այն 6-րդ կիսամյակում կազմել է 100%, իսկ այժմ 80%: Այս մասնագիտությունում նկատվում է առաջադիմության դինամիկ աճ:

Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնում առաջադիմությունը 2-րդ և 5-րդ կիսամյակներում հասել է 100%-ի, իսկ այժմ կազմում է 83.3%:

Առաջադիմության փոփոխությունները վկայում են, որ ֆակուլտետի խորհուրդը, դասախոսական անձնակազմը անելիքներ ունեն ուսման բարձր առաջադիմություն ապահովելու և դրանք ներկա պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում տնտեսագիտական ֆակուլտետում արձանագրվել է ուսանողների հետևյալ շարժը:

**Ուսանողների շարժը տնտեսագիտական ֆակուլտետում
2015-2016 ուսումնական տարում**

	բակալավրիատ	մագիստրատուրա	ընդամենը
Զորակոչվել է բանակ	6	-	6
Զորացրվել է բանակից	9	1	10
Վերականգնել է ուսանողական իրավունքները	1	-	1
Տրամադրվել է տարկետում	1	1	2
Սովորում է արտերկրում	-	1	1
Հեռացվել է ԳՊՀ-ից	3	12	15
Ազատվել է ԳՊՀ-ից	1	1	2
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական	4	-	4

Ֆակուլտետ այլ ֆակուլտետներից			
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետից այլ ֆակուլտետ	-	-	-
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետից հեռակա ուսուցման ֆակուլտետ	2	-	2
Տեղափոխվել է այլ բուհից/քոլեջից/ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ	12	-	12
Ներֆակուլտետային տեղափոխություններ	1	3	4

2015-2016 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են բակալավրիատի 51 ուսանողներ:

Ամփոփիչ ատեստավորմանը Ֆինանսներ մասնագիտությամբ մասնակցել է 34 ուսանող, Հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ՝ 10 ուսանող, Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ՝ 7 ուսանող: Հաշվետու տարում բակալավրիատի «Ֆինանսներ» բաժինն ավարտեց 34 ուսանող, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 14 ուսանող: «Հաշվապահական հաշվառում» բաժինն ավարտեցին 10 ուսանողներ, որոնցից գերազանցության դիպլոմով՝ 7 ուսանող: «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժինն ավարտեց 7 ուսանող, 5-ը գերազանցության դիպլոմով:

Մագիստրատուրան ավարտել են 21 մագիստրոսներ, այդ թվում՝ Ֆինանսներ մասնագիտությամբ՝ 10 ուսանող, որոնցից 7-ը գերազանցության դիպլոմով, Հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ՝ 7 ուսանող, որոնցից 5-ը գերազանցության դիպլոմով, Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ՝ 4 ուսանող, որոնցից 3-ը գերազանցության դիպլոմով: Մագիստրոսական թեզի պաշտպանությանը չի ներկայացել 1 մագիստրոս:

Ամփոփիչ ատեստավորման առաջադիմություն

Մասնագիտությունը	Բակալավրիատ %	Մագիստրատուրա %
Ֆինանսներ	100	90.91
Հաշվապահական հաշվառում	100	100
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	100	100

Ստորև ներկայացվում են ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

**2015-2016 ուսումնական տարվա
ամփոփիչ ատեստավորման արդյունքները**

Բաժինը		Ուսանողների թիվը	A+	A	A-	B+	B	B-	C+	C	C-	F
Ֆինանսներ /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	34	5	4	7	3	4	3	1	2	5	-
	Ամփոփիչ քննություն II	9	-	-	-	-	-	-	2	2	5	-
	Ավարտական աշխատանք	25	2	4	8	3	6	1	1	-	-	-
Ֆինանսներ /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	11	4	2	1	-	1	2	-	-	-	1
Հաշվապահական հաշվառում /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	10	5	3	1	-	-	-	1	-	-	-
	Ամփոփիչ քննություն II	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	Ավարտական աշխատանք	10	5	4	-	-	-	1	-	-	-	-
Հաշվապահական հաշվառում /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	7	5	1	-	1	-	-	-	-	-	-
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	7	4	1	1	1	-	-	-	-	-	-
	Ամփոփիչ քննություն II	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	Ավարտական աշխատանք	7	4	1	1	1	-	-	-	-	-	-
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /մագիստրատուրա /	Մագիստրոսական թեզ	4	2	2	-	-	-	-	-	-	-	-

Հանձնաժողովները, կատարելով իրենց պարտականությունները, միաժամանակ հանդես եկան հետագա աշխատանքները կատարելագործելու վերաբերյալ արժեքավոր առաջարկություններով:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի դիտողությունները և առաջարկությունները քննարկվել են համապատասխան ամբիոններում, կմշակվեն միջոցառումներ՝ թերությունները վերացնելու և ամփոփիչ ատեստավորումը պահանջվող մակարդակով կազմակերպելու համար:

Անվճար տեղերում սովորող ուսանողների մասին

Անվճար տեղերում սովորող ուսանողները դրսևորում են բարձր առաջադիմություն՝ ձգտելով պահպանել իրենց տեղերը: Այժմ 33 ուսանող բակալավրատից և 12 ուսանող մագիստրատուրայից սովորում են պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցման սկզբունքով:

Տնտեսագիտական ֆակուլտետում անվճար սովորողների թիվն՝ ըստ մասնագիտությունների

Բակալավրիատ

Կուրսը	Ֆինանսներ				Հաշվապահական հաշվառում			Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում				Ընդամենը
	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	4-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	4-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	4-րդ կուրս	
Ուսանողների թիվը	3	3	2	3	3	3	3	3	3	3	4	33

Մագիստրատուրա

Կուրսը	Ֆինանսներ		Հաշվապահական հաշվառում		Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում		Ընդամենը
	1-ին կուրս	2-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	
Ուսանողների թիվը	2	2	1	4	1	2	12

Անվճար տեղերի առկայությունը բակալավրիատում և մագիստրատուրայում օրինաչափորեն ազդում է ուսանողների կտրվելության և ուսման որակի բարձրացման վրա՝ ապահովելով մրցակցություն: Անվճար սովորելը մղում է բարձր առաջադիմության, յուրաքանչյուր միավորի համար լուրջ ջանքերի ներդրման:

Մագիստրատուրայի անվճար տեղերում սովորող և զինվորական տարկետումից օգտվող, ինչպես նաև զինվորական ծառայությունից հետո ուսումը շարունակող ուսանողները պահպանել են իրենց միջին որակական գնահատականները:

Ֆակուլտետում ուշադրություն է դարձվում ուսանողների հաճախումներին: Ամենօրյա հաշվառման արդյունքում որոշ ուսանողներ ենթարկվել են վարչական պատասխանատվության (նկատողություն, խիստ նկատողություն):

Վարչական տույժեր ստացած ուսանողներ

Կրթական աստիճաններ	2015-2016 ուստարվա I կիսամյակ	2015-2016 ուստարվա II կիսամյակ
		Նկատողություն
Բակալավրիատ	13	5

Մագիստրատուրա	4	2
Ընդամենը	17	7
Խիստ նկատողություն		
Բակալավրիատ	6	-
Մագիստրատուրա	5	-
Ընդամենը	11	-

Համալսարանի ռեկտորատը, դեկանատը մշտապես մտահոգվում են ուսանողների սոցիալական խնդիրներով, և միջոցներ են ձեռնարկում նրանց հովանավորներ փնտրելու համար: Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները օգտվում են ներքոհիշյալ հովանավոր կազմակերպությունների կրթաթոշակներից.

Տնտեսագիտական ֆակուլտետի կրթաթոշակառուները

Հովանավոր կազմակերպությունը	Ուսանողների թիվը
Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	22
«Վիվա-Սել MTS» ընկերություն	14
Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	3
Թրփանճեան ընտանեկան հիմնադրամ	2
Ամբրո ՀԿ	2

Տնտեսագիտական ֆակուլտետի 25 ուսանողներ օգտվել են <<Փարոս>> ծրագրով պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցումից:

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգ

Տնտեսագիտական ֆակուլտետում 2015-2016 ուսումնական տարվա արդյունքների հաշվառմամբ մշակվել է 2016-2017 ուստարվա զարգացման հայեցակարգ՝ հետևյալ ուղղություններով.

Կրթության որակի ապահովման ուղղությամբ.

Ֆակուլտետի խորհրդի մշտական ուշադրության կենտրոնում է կրթության որակի բարձրացումը:

«Որակը» ընդհանրական ու լայն հասկացություն է, իսկ որակի բարելավումը կրթական համակարգում համալիր, բազմազործոն ու համակարգված գործունեություն է և ունի իր առանձնահատկությունները: Այստեղ կրթության բոլոր դերակատարները՝ դասախոսներն ու ուսանողները պետք է կիրառեն ժամանակի պահանջներին

համապատասխանող գործիքներ: Որակի ապահովման միջոցառումները կազմել ենք մեթոդաբանական այն սկզբունքով, որ կան ինչպես ուսման որակի բարձրացմանը խոչընդոտող, այնպես էլ նպաստող գործոններ: Խոչընդոտող գործոնների մի մասը գտնվում է կրթական համակարգից դուրս, մյուս մասը՝ կրթական համակարգի ներսում: Արդյունքի հասնելու համար երկուսն էլ պետք է հաշվի առնել: Օրինակ, համակարգի ներսում է գտնվում դասաժամը հրապուրիչ ու գրավիչ դարձնելու գործոնը:

Կարևորում ենք գիտելիքի պիտանելիության գաղափարը, որպեսզի դասընթացների ծրագրում, թեմատիկ պլաններում տեղ չգտնեն ժամանակավրեպ հասկացություններ:

Կարևոր է ապահովել որակի գնահատման գործընթացների թափանցիկությունը և ընթացիկ արդյունքների մշտադիտարկումն ու բարելավումը ուսանողներին կրթության, որակի վերահսկմանը մասնակից դարձնելը, ներքին և արտաքին շահակիցների կարիքները հաշվառելը: Ուսանողների հարցերին դասախոսները պատասխանում են նաև էլեկտրոնային կապի միջոցով: Իրականացնում ենք դեմ առ դեմ և առցանց խորհրդատվություններ: Մշտադիտարկումն իրականացվում է որակի վերաբերյալ ուսանողների և դասախոսների շրջանում անցկացվող հարցումներով: Պատրաստվում են հարցաթերթիկներ, որոնց պատասխանները ուսանողների կողմից տրվում են անանուն սկզբունքով: Արդյունքները վերլուծվում են: Մինչ օրս անհատական, ավարտական, կուրսային աշխատանքներում դեռևս պակասում են վերլուծությունները, հանդիպում են գրագողության դեպքեր: Անհրաժեշտ է նմանատիպ երևույթներին տալ սկզբունքային գնահատական և հետևել որպեսզի դրանք չկրկնվեն:

Հետևողական աշխատանք է տարվում գիտելիքների բազմագործոն գնահատման համակարգի բարելավման, նոր ձևերի և եղանակների կիրառման, համակարգչային թեստերի միջոցով «Examination.GSU.am» համակարգով սովորողների գնահատման ուղղությամբ: Հաշվետու ուսումնական տարում ևս երկու առարկայի քննության համար մշակվել է թեստային բազա /«Էլեկտրոնային կոմերցիա» դասախոս՝ Ա. Ղազարյան և «Մակրոտնտեսական կարգավորում» դասախոս՝ Մ. Հերգնյան/:

Ֆակուլտետում շարունակվում է կիրառվել ուսանողի կողմից ուսումնառության ուժեղ և թույլ կողմերի վերլուծության պրակտիկան, այսինքն՝ կատարվում է SWOT վերլուծություն, և ուսանողները մասնացում են դրա իրականացմանը:

Ֆակուլտետում ուսումնասիրում ենք կրթության որակի ապահովման միջազգային փորձը: Որակին վերաբերող հարցերը քննության նյութ ենք դարձնում ամբիոններում:

Բուհական համակարգը համատեղում է կրթությունը և գիտությունը, ուստի մեր կարևոր խնդիրներից ենք համարում ամբիոններում գիտահետազոտական աշխատանքների խթանումը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ անկախության 25 ամյակին նվիրված գիտաժողովում ներկայացրել ենք թվով 21 զեկուցումներ:

Չափազանց կարևոր է յուրաքանչյուր ուսանողի միջին որակական գնահատականը և ուսումնառության ընթացքում դրա դրական շարժընթացը:

**2015-2016 ուս. տարում ըստ մասնագիտությունների և կուրսերի
ձևավորված ՄՈԳ-ը՝ համապատասխան սանդղակով
2014-2015 ուս. տարվա համեմատությամբ**

Մասնագիտություններ, կուրսեր	ուսանողների թիվը	1,7-2,9		3,0-3,5		3,6-4,0	
		ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս
Ֆ 1-ին	5	-/1	-/20	-/2	-/40	-/2	-/40
Ֆ 2-րդ	24/30	5/7	21/23.3	15/4	63/13.3	4/19	16/63.4
Ֆ 3-րդ	25/24	6/4	35.7/16.7	9/2	35/8.3	11/18	42/75
Ֆ 4-րդ	36/34	7/9	19/26.5	11/8	31/23.5	18/17	50/50
ՀՀ 1-ին	5	1	20	0	0	4	80
ՀՀ 2-րդ	4/9	0 / 1	0 / 11.1	2 / 2	50 / 22.2	2 / 6	50 / 66.7
ՀՀ 4-րդ	11/10	1 / 1	9 / 10	3/ 2	27/ 20	7 / 7	64 / 70
ՁՏԿ 1-ին	6	-/1	-/16.6	-/1	-/16.6	-/4	-/66.8
ՁՏԿ 2-րդ	7/12	3/4	43/33.3	4/3	57/25	0/5	0/41.7
ՁՏԿ 3-րդ	11	2/2	18/18	0/1	0/9	9/8	82/73
ՁՏԿ 4-րդ	6	0/0	0/0	1/2	17/33	5/4	83/67

Միջին որակական գնահատականը առանձին ուսանողի առաջադիմությունն է, որի առաջընթաց փոփոխությունը դառնում է որակի իսկական ցուցանիշ: 3,6-4,0 ՄՈԳ ունեցող ուսանողների շարժը հետևյալն է.

- «Ֆինանսներ» 2-րդ կուրսում աճել է 47.4-ով և կազմել 63.4%,
- «Ֆինանսներ» 3-րդ կուրսում աճել է 33-ով և կազմել 75%,
- Ֆինանսներ» 4-րդ կուրսում պահպանվել է նույն մակարդակը՝ 50%,
- «Հաշվապահական հաշվառում» 2-րդ կուրսում աճել է 16.7-ով և կազմել 66.7%,
- «Հաշվապահական հաշվառում» 4-րդ կուրսում աճել է 6-ով և կազմել 70%,
- «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 2-րդ կուրսում աճել է և կազմել 41.7%:

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 3-րդ կուրսում նվազել է 9%-ով և կազմել 73%:

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 4-րդ կուրսում նվազել է 16%-ով և կազմել 67%:

1.7-2.9 ՄՈԳ ունեցող ուսանողների թիվը հիմնականում նվազել է, «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 4-րդ կուրսում այն հավասարվել է 0-ի, որի հաշվին ավելացել է 3.0-3.5 ՄՈԳ ունեցողների թիվը, այսինքն կա առանձին ուսանողի առաջադիմության աճ:

Ուսանողների առաջադիմությանը և ուսման որակի բարձրացմանը նպաստում են նաև վերջին տարիներին ԳՊՀ ուսանողների ակադեմիական առաջադիմության բարձրացման և որակի վերաբերյալ կատարված առաջարկություններն ու ընդունված կանոնակարգերը, որոնք պետք է ավելի հասանելի դարձնել ուսանողներին և դասախոսներին:

Դասախոսությունների տրամադրումը ուսանողին մղում է ինքնուրույն աշխատանքի: Ուսուցման գործընթացի որակի բարձրացման միջոցներից մեկը դասախոսությունների տրամադրումն է ուսանողությանը, որը նյութի ուսումնասիրման և յուրացման լավագույն միջոցն է:

Նկատվում է ուսանողների խոսքի մշակույթի աճ, ինքնուրույն աշխատանքի ծավալի ավելացում:

Հասարակական ակտիվության և միջոցառումների կազմակերպման ոլորտում

Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվացել է համալսարանի ուսանողական խորհրդի գործունեությունը՝ ընթանում է համակարգված գործունեություն /ըստ բնագավառների աշխատանքի բաժանում/, որն իր դրական ազդեցությունն է թողել ֆակուլտետի ուսանողական խորհրդի աշխատանքների վրա: Տնտեսագիտական ֆակուլտետում տեղի են ունեցել բազմազան միջոցառումներ: Ուսանողական խորհրդի և ակտիվ ուսանողների հետ միասին մշակվել է շրջանավարտների հետ հանդիպման հետաքրքիր ձևաչափ՝ գործնական-գեղարվեստական-ուսուցողական ոճի համադրմամբ, 2016 թվականի հունիսի 15-ին կազմակերպվեց 2005թ. շրջանավարտների հավաք, ինչը կլինի շարունակական:

Հաշվետու ժամանակաշրջանում զգալի ակտիվություն նկատվեց ուսանողական գիտական ընկերության աշխատանքներում /ՈւԳԸ նախագահ Մելսիդա Թովմասյան/, ինչը պայմանավորված էր նրա և համալսարանի ուսանողական գիտական ընկերության ակտիվ ու նախաձեռնողական աշխատանքներով: 2015թ. նոյեմբերի 21-ին կազմակերպվեց գիտաժողով՝ նվիրված Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հիմնահարցերին ու հեռանկարներին, որին մասնակցեցին 12 ուսանողներ, «Կառավարման և ֆինանսներ» ամբիոնի դասախոսներ Ռշտուն Մարտիրոսյանը, Աշոտ Մարդոյանը: Ապագա տնտեսագետները բովանդակալից շնորհանդեսի ձևով ներկայացրին Եվրասիական տնտեսական միության էությունը, նպատակները, կառուցվածքը, անդամ-պետությունների միջև կնքված համաձայնագրերը, անդրադարձ կատարվեց համապատասխան ապրանքների վրա սահմանված մաքսատուրքի տոկոսադրույքի նվազեցման և ավելացման խնդիրներին:

Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվեց սեմինար «Ինչպե՞ս գրել գիտական հոդված» թեմայով: Սեմինարի ընթացքում տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Մելսիդա Թովմասյանը և Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 1-ին կուրսի ուսանող Կորյուն Սարգսյանը ներկայացրին հոդված գրելու կարգը, սկզբունքները, մեթոդները և համապատասխան աղբյուրներից օգտվելու կանոնները: Հոդված գրելու կանոնները մանրամասն ներկայացրեց Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Հրայր Զաքոյանը:

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվեց «Հայ-իրանական հարաբերությունների զարգացման նախադրյալներն ու հեռանկարները» թեմայով սեմինար-քննարկում:

Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ մեկնարկեց ներբուհական ուսանողական գիտաժողով՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին:

Հետաքրքիր էր առաջին կուրսի ուսանողների նախաձեռնությամբ 2015թ. դեկտեմբերի 18-ին կազմակերպված միջոցառումը՝ նվիրված արվեստին: Ուսանողները ներկայացրին աշխարհահռչակ արվեստագետներ Պաբլո Պիկասոյի, Լեոնարդո դա Վինչիի, Սալվադոր Դալիի, գրող, հրապարակախոս Գաբրիել Գարսիա Մարկեսի, ավստրիացի նշանավոր կոմպոզիտոր Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի, <<ծիծաղի արքա>> Չարլի Չապլինի կյանքն

ու գործունեությունը, անդրադարձան նրանց ստեղծած գլուխգործոցներին, որոնք համալրել են համաշխարհային քաղաքակրթության գանձարանը:

Ուսանողների շրջանում հետևողական աշխատանքներ են իրականացվում՝ նրանց հայրենիքի, ընտանիքի, ավանդույթների, ազգային ու համամարդկային ոգով դաստիարակելու ուղղությամբ, որպեսզի նարնք ճանաչեն մայր ժողովրդի, բնակավայրի, մայր բուհի պատմությունը: Ավանդույթի համաձայն՝ առաջին կուրսի ուսանողներն իրենց ուսանողական տոմսերն ու ստուգման գրքույկները ստանում են ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի կիսանդրու առջև կազմակերպված հանդիսավոր միջոցառման ժամանակ:

Կրթության համակարգը լուծում է անձի սոցիալական շարժունության խնդիրը՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին ինքնահաստատվելու և ինքնադրսևորվելու: Այս առումով կարևորվում են հասարակական կազմակերպությունների, նրանց ղեկավարների հետ կազմակերպված հանդիպումներն ու միջոցառումները:

Ֆակուլտետի ուսանողների ակտիվության և ինքնուրույնության զարգացմանը և ապագա աշխատանքին պատրաստվելուն նպաստում է տարբեր գործարարների կողմից սեմինարների անցկացումը: 2015թ. նոյեմբերին Ինգո-Արմենիա Գեղարքունիքի մասնաճյուղի աշխատակից Արտակ Գաբրիելյանը /ԳՊՀ շրջանավարտ/ մասնակցությամբ կազմակերպվեց սեմինար-քննարկում:

Ուսանելի էր նաև Ռոսգոսստրախ Արմենիա ապահովագրական ընկերության աշխատակից Արմեն Ներսիսյանի /ԳՊՀ շրջանավարտ/ վարած սեմինար քննարկումը:

Հաշվետու ժամանակաշրջանում հետևողական աշխատանք է կատարվել ուսումնական և արտադրական պրակտիկաներին նախապատրաստվելու և դրանք կազմակերպված անցկացնելու նպատակով: Նշենք, որ «Արդշինբանկ» ՓԲԸ Կամոյի մասնաճյուղում ֆակուլտետի ֆինանսներ մասնագիտության երրորդ կուրսի մի քանի ուսանողների ուսումնական պրակտիկայի ավարտից հետո բանկի ղեկավարության նախաձեռնությամբ և ուսանողների ցանկությամբ առաջարկվեց ևս մեկ ամիս երկարաձգելու համագործակցությունը բանկի հետ:

Ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորմանը նպաստում են գործող ձեռնարկություններ այցելությունները: 2015թ. հոկտեմբեր ամսին կազմակերպվեց պրակտիկա Վայոց Ձորի Արենի գինու գործարանում, որտեղ ուսանողները մոտիկից ծանոթացան փոքր բիզնեսի բարդություններին և առանձնահատկություններին:

Տնտեսագիտական ֆակուլտետը շարունակելու է իր գործունեությունը ուսումնադաստիարակչական գործընթացի արդիականացման ուղղությամբ:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

1. Վերանայել և հստակեցնել մասնագիտական կրթական ծրագրերը, կրթության կազմակերպման ձևերն ու մեթոդները՝ դրանք համապատասխանեցնելով արդի միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին:
2. Ապահովել մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման ընթացքի ու արդյունքների մշտադիտարկում և շարունակական բարելավում:

3. Ուսումնասիրել աշխատաշուկայի պահանջները, գործատուների ակնկալիքները, ապահովել ուսումնասիրվող մասնագիտությունների խոր իմացություն: Ուսուցման բովանդակությունն ու գործնական գիտելիքները համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին, ըստ Գեղարքունիքի մարզի զարգացման առանձնահատկությունների:
4. Ապահովել առարկայական ծրագրերի շարունակական թարմացում, ակնկալվող մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների հստակ սահմանում, կրթական ելքային արդյունքների համապատասխանեցում գործատուների պահանջներին:
5. ԳՊՀ ուսանողի և դասախոսի ուղեցույցերը շարունակաբար բարեփոխել և հրապարակել, դասընթացների նկարագրերը հստակեցնել և մասնագիտությունների տեղեկագրքերը վերամշակել ու արդիականացնել:
6. Ապահովել ուսումնական գործընթացում, կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչների հետևողական կիրառում, դրանց արդյունավետության բարձրացում, ուսանողներին համակարգի վերաբերյալ լայն իրազեկում, գնահատման գործոնների հստակեցում:
7. Գիտական-տեղեկատվական տարբեր շտեմարանների օգտագործման, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման նպատակով ուսանողների համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ: Ուսուցման ողջ ընթացքում ուսանողներին մղել գիտելիքների ձեռքբերման ինքնուրույն աղբյուրների, մասնագիտական կարևոր աշխատությունների ուսումնասիրմանը:
8. Միջոցներ ձեռնարկել երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի, լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրերի իրականացման շրջանակի ընդլայնման ուղղությամբ:
9. Ապահովել դասավանդման մեթոդների արդյունավետ համադրում, համագործակցային, փոխներգործուն (ինտերակտիվ) և այլ նորարարական կրթական տեխնոլոգիաների եվրոպական կրթական մեթոդների ուսումնասիրում և կիրառում:
10. Աշխատանքներ կատարել սովորողների գիտելիքների բազմագործոն գնահատման համակարգի կատարելագործման, նոր ձևերի և եղանակների կիրառման, համակարգչային թեստերի միջոցով «Examination.GSU.am» համակարգով սովորողների գնահատման ուղղություններով:
11. Իրականացնել կրթության որակի մշտադիտարկում, ուսումնական գործընթացի կազմակերպման ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, խոչընդոտների հաղթահարում ինքնավերլուծության և ինքնագնահատման պարբերաբար իրականացում:
12. Միջոցներ ձեռնարկել ամփոփիչ (ավարտական) ատեստավորման գործընթացի կատարելագործման, ամփոփիչ քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքում սովորողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքների և մասնագիտական կարողությունների օբյեկտիվ գնահատման նպատակներով՝ հետագա գործունեության ծրագրային բարելավման համար:

13. Կիրառել ֆակուլտետի և ամբիոնների աշխատանքի որակի գնահատման նոր գործիքներ, հաշվառել դասախոսների և ուսանողների գիտահետազոտական գործունեության արդյունքները:
14. Բարձրացնել ուսումնական խորհրդատուների աշխատանքի արդյունավետությունը, բացահայտել ուսանողների կրթական կարիքները և կազմակերպել խորհրդատվություններ:
15. Գրադարանի գրքաֆոնդը համալրել, նոր դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և ուղեցույցեր, մենագրություններ ձեռքբերել, տեղեկատվական պաշարները հարստացնել, էլեկտրոնային գրադարանն անընդհատ ընդլայնել:
16. Ուսանողների համար գործող «E.Learning.GSU.am» էլեկտրոնային ուսուցման համակարգը կատարելագործել:
17. Մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչը կարևորել, մագիստրոսների հետազոտական աշխատանքի հմտությունները զարգացնել: Մագիստրոսական թեզերը գնահատել հիմնականում գիտական հետազոտական բաղադրիչի հաշվառմամբ:
18. Ապահովել մագիստրոսական կրթական աստիճանում առաջատար մասնագետների պատշաճ ներգրավվածություն, ապահովել մագիստրոսների հետազոտական աշխատանքների կիրառական ուղղվածությունը:
19. Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխանող չափանիշներով ներդնել կրթական երրորդ աստիճան:
20. Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունությունը խրախուսել, միջազգային ծրագրերին ակտիվորեն մասնակցել:
21. Պրակտիկաների արդյունավետությունը բարձրացնել, պրակտիկայի բազաները ընդլայնել, պրակտիկայի ընթացքում զարգացնել ուսանողների գործնական կարողությունները:
22. ՏՖ ամբիոնների գերակա գիտական ուղղությունները հստակեցնել՝ ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և արտաքին միջավայրի պահանջների հաշվառմամբ:
23. ՏՖ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեությունը գնահատել, հրատարակած գիտական աշխատանքները հաշվառել:
24. Միջբուհական գիտական ծրագրերի, համատեղ հետազոտությունների իրականացման նպատակով, դրամաշնորհային ծրագրերի ընձեռած հնարավորությունները արդյունավետ օգտագործել:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Ապահովել շահառուների շրջանում հարցումների պարբերաբար անցկացում, կարիքների բացահայտումը և ուսանողական գործնական միջավայրի ստեղծումը:
2. Տնտեսագիտական ֆակուլտետում ավելացնել տեղեկատվական արդի տեխնոլոգիաներով հագեցած լսարանների թիվը:

3. Մշակել և ներդնել դասընթացներին ուսանողների գրանցման, գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու գնահատման արդյունքների հաշվառման, ակադեմիական տեղեկատվության կառավարման էլեկտրոնային համակարգ:

**ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

1. Ապահովել ուսանողների սոցիալական կարիքների բացահայտում, թղթային և էլեկտրոնային անձնական գործերի կազմում, սոցիալական վիճակի «անձնագրավորում», սոցիալական օժանդակության հասցեագրված ծրագրերի իրականացում:
2. Ուսանողների համար կազմակերպել կրթադաստիարակչական, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական և այլ բնույթի միջոցառումներ, ինտելեկտուալ մրցույթներ, «Լավագույն ուսանող», «Լավագույն խումբ», «Լավագույն դասախոս», «Լավագույն գիտական աշխատանք» և այլ անվանակարգերում մրցանակաբաշխություններ, իրականացնել գիտելիքի արժևորմանը միտված ծրագրեր:
3. Բազմաբնույթ ձեռնարկներով ապահովել սովորողների հայրենասիրական, քաղաքացիական, իրավական, բարոյական, հոգևոր-մշակութային, աշխատանքային, բնապահպանական, գեղագիտական, էթիկական, ֆիզիկական պատշաճ դաստիարակությունը:
4. Ուսանողների հետ շարունակական բացատրական աշխատանք կատարել, որպեսզի սովորողները ստանձնեն անձնական պատասխանատվություն իրենց ուսման գործընթացի և կրթական ելքային արդյունքների ձեռքբերման համար:
5. Միջոցներ ձեռնարկել ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների դաստիարակման, նրանց բարոյականային հատկանիշների զարգացման, ուսանողների շրջանում պատշաճ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորման ուղղություններով:

**ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ**

1. Իրականացնել ծրագրեր՝ պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի մասնագիտական, մանկավարժական որակների շարունակական զարգացման նպատակով՝ վերապատրաստման, որակավորումների բարձրացման միջոցով:
2. Խրախուսել երիտասարդ դասախոսների մասնագիտական աճը, նրանց ընդգրկել գիտահետազոտական աշխատանքներում:

**ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ**

1. Միջոցներ ձեռնարկել ուսումնարտադրական բազայի ընդլայնման ուղղությամբ:
2. Ակտիվացնել կարի արտադրամասի աշխատանքները:

**ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

1. Պահպանել փոխադարձ կապեր համալսարանի շրջանավարտների հետ, շրջանավարտների տվյալների էլեկտրոնային բազան շարունակաբար համալրել, ապահովել անմիջական և էլեկտրոնային հաղորդակցություն:
2. Հաստատել համագործակցություն հայրենական և արտասահմանյան տնտեսագիտական հաստատությունների և ընկերությունների հետ:

**Ս. Գ. Ամիրխանյան՝
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան**

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ				
1-ին	4	-	1	100
2-րդ	33	-	17	75.8
3-րդ	25	-	13	72.0
4-րդ	34	2	12	55.9
Հաշվ. հաշվառում				
1-ին	5	1	1	80.0
2-րդ	10	-	4	70.0
4-րդ	10	-	6	80.0
Ձեռնարկ. տնտ. և կառ.				
1-ին				
2-րդ	6	-	-	100
3-րդ	12	-	4	66.7
4-րդ	11	-	7	72.7
	6	-	4	83.3
Ընդամենը	156	3	69	71.8
Մագիստրատուրա				
Ֆինանսներ				
1-ին	6	-	-	66.7
2-րդ	13	-	7	61.5
Հաշվ. հաշվառում				
1-ին	3	-	-	33.3
2-րդ	7	-	5	100
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	5	-	1	40.0
2-րդ	4	-	3	75.0
Ընդամենը	38	-	16	65.8

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ				
1-ին	5	-	1	80.0
2-րդ	30	5	4	83.3
3-րդ	24	-	14	95.8
Հաշվ. հաշվառում				
1-ին	5	-	2	80.0
2-րդ	9	-	4	88.9
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին				
2-րդ	6	-	1	83.3
3-րդ	12	-	4	66.7
	11	-	9	81.8
Ընդամենը	102	5	39	84.3
Մագիստրատուրա				
Ֆինանսներ				
1-ին	6	-	1	50.0
Հաշվ. հաշվառում				
1-ին	-	-	-	-
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	4	-	1	50.0
Ընդամենը	10	-	2	50.0

2015/2016 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	1	1	37	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Զարոյան Հրայրա Սամվելի,*
 փնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Հերգնյան Մարիամ Նորիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. Խաչատրյան Գայանե Արտիկի - տնտեսագիտության թեկնածու
3. Մուրադյան Գուրգեն Գևորգի - ասիստենտ
4. Բագոյան Սոնա Սահակի - ասիստենտ
5. Հովեյան Աստղիկ Գագիկի - դասախոս
6. Քալոյան Մանվել Խաչիկի - դասախոս
7. Ավետիսյան Աստղիկ Սիմոնի - դասախոս
8. Թադևոսյան Նարինե Հակոբի - դասախոս
9. Բաղինյան Արա Պավելի - դասախոս
10. Մարտիրոսյան Ռշտուն Հովակիմի - դասախոս
11. Ասատրյան Ռուզաննա Կարապետի - լաբորանտ, դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Բայադյան Աշոտ Հակոբի - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2. Սահակյան Արմեն Կոյայի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր
3. Հարությունյան Հարություն Սարգսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
4. Խաչատրյան Հակոբ Հայկի - տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
5. Նալչաջյան Վահրամ Թորգոմի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
6. Դավթյան Գագիկ Հայկարամի - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
7. Բաղդասարյան Արեգ Մերուժանի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
8. Մարդոյան Աշոտ Վարդանի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
9. Ղազարյան Արմեն Յուրիկի - տնտեսագիտության թեկնածու
10. Թորոսյան Դավիթ Լևոնի - դասախոս

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- ա) Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման հնարավորությունները ՀՀ-ում:
- բ) Աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հնարավորությունները ՀՀ մարզերում:
- գ) Տեղական և տարածքային տնտեսական զարգացման հիմնախնդիրներ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	1	33	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Բայադյան Ա. Հ., Ամիրխանյան Ս.Գ.,** ՀՀ պետական ծախսային քաղաքականությունը որպես ֆինանսական կայունության ապահովման հիմնական ուղղություն// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015թ., էջ 218-226:
2. **Բայադյան Ա. Հ., Մարկոսյան Հ.,** Պետական պարտքի գնահատման ցուցանիշները և դրանց ժամանակագրական վերլուծությունը //ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտ. ինստ., Երևան ,Գիտություն’ հրատարակչություն 2015 թ. էջ 32-37:
3. **Բայադյան Ա. Հ.,** ՀՀ-ում համայնքների կայացման և զարգացման հիմնական միտումները// Հայաստանի Ազգային Ազրարային Համալսարանի գիտական տեղեկագիր, 2015, N3, էջ 6:
4. **Բայադյան Ա. Հ., Հակոբյան Ե.,** Գյուղատնտեսության մեջ վարկիր օգտագործման գնահատման մեթոդաբանական մոտեցումներ //ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ.տնտ. ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, 2015թ, 5 էջ (175-179):
5. **Բայադյան Ա. Հ., Հովհաննիսյան Լ.,** Գյուղատնտեսության գործընթացների ֆինանսավորման բարելավման հիմնահարցերը ՀՀ-ում //ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ.տնտ. ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, 2015թ, 6 էջ (169-174):
6. **Բայադյան Ա. Հ., Մարկոսյան Հ.,** Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում// ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտ. ինստ., Երևան ‘Գիտություն’ հրատարակչություն 2015 թ., 204 էջ:
7. **Բայադյան Ա. Հ., Մարկոսյան Հ.Ա.,** Զարգացման ժամանակակից մարտահրավերներ// ՀՊՏՀ 24-րդ գիտաժողով (2014թ. հոկտեմբեր 29-31) նյութեր, 2015, էջ 32-37:
8. **Բայադյան Ա. Հ., Բայադյան Ա.Ա.**ՀՀ-ում ապրանքաշրջանա-ռության և ՀՆԱ-ի ժամանակագրական փոփոխություններն քվ. կարգավորման ուղիները// Սոցիալ տնտեսական

- արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում Գիտական հոդվածների ժողովածու 2016, էջ 221-228:
9. **Բայադյան Ա. Հ., Կոստանյան Շ.Ս.,** ՀՀ ագրովերամշակող արդյունաբերական մթերքների արտադրության բարելավումը, որպես դրանց արտահանման ծավալների ավելացման կարևորագույն պայման // Սոցիալ տնտեսական արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում Գիտական հոդվածների ժողովածու 2016, էջ 228-234:
 10. **Բայադյան Ա. Հ.,** Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում //ՀՀ ԳԱԱ Մ, Երևան «Գիտություն» հրատարակչություն 2016, էջ 184:
 11. **Հերգնյան Մ. Ն., Աբրահամյան Շ. Ս.,** Պետական բյուջեի եկամուտների համալրման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015թ., էջ 240-247:
 12. **Խաչատրյան Գ. Ա., Մուրադյան Գ.Գ.** Հարկային բեռի տնտեսական բովանդակությունը և տեսական մոտեցումները //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015թ., էջ 248-252:
 13. **Խաչատրյան Գ. Ա., Մուրադյան Գ. Գ.,** Համայնքային բյուջեների ֆինանսական ապահովվածության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015թ.:
 14. **Մարդոյան Ա. Վ.,** ՀՀ ընդերքօգտագործման բնապահպանական հիմնախնդիրները //«Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրը» խորագրով հանրապետական գիտաժողովի նյութեր, 2015 թ., էջ 268-276:
 15. **Ղազարյան Ա. Յու.,** Ապահովագրական հատուցումների ադրիտիվ մոդելի կառուցումը //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015թ., էջ 286-292:
 16. **Քալոյան Մ. Խ.,** «Թաքնված» վճարներ //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015թ., էջ 259-260:
 17. **Ասատրյան Ռ. Կ.,** Պետություն-բիզնես փոխհարաբերությունների բարելավման հնարավորությունները ՀՀ Գեղարքունիքի մարզի օրինակով //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015թ., էջ 279-285:
 18. **Баядян А. А.,** Основные проблемы улучшения главного баланса Республики Армении // Сборник материалов X. Международной конференции в г. Геленджик, 14-17 2015.
 19. **Баядян А. А., Арутюнян В. Л.** Характерные особенности стратегии государст-вен-ного долга республики Армения// “Наукови праці НАУП” Юридичні науки, экон-омичні науки, выпуск 45 “2-2015” Киев, ДП “Видавничі дим персонал”, 2015, 4 ст.(46-50).
 20. **Баядян А. А.,** Основные тенденции становления и развития общин в Республике Армении// Уралский государственный экономической университет Формирование Евразийского экономического союза:финансово-правовой аспект Сборник статей Всероссийский научно-практической конференции г. Екатеринбург, 6-7 октября 2015, 6 ст(70-75).
 21. **Баядян А. А.,** Багдасарян А.М., Проблемы развития рынка ценных бумаг ЕАЭС// Вестник междуна-родных организаций 2016.
 22. **Տաակյան Ա. Կ.,** "Геноцид армян и холокост " //Հայագիտության հարցեր հանդես 1(4), Երևան ԵՊՀ հրատարակչություն-2015թ.:

23. **Саакян А. К., Давтян С.С.** Антикризисное управление внутренними и внешними коммуникациями. // Научный журнал «Кризисное управление и технологии, №9. Изд-во ВАРД ГРАТ, Ереван 2015.
24. **Саакян А.К.** Правда и ложь о великом Сталине. // Совместный сборник научных трудов между ЕГУ и СПбУИЭ «Современные глобальные проблемы социальных и гуманитарных наук СПб.: Изд-во СПбУИЭ, 2015.
25. **Саакян. А. К** Ценности и социальные установки в экономическом поведении. // Научно-методический журнал <<Научная мысль>>, г.Череповец, Изд-во СПбГЭУ, 2015 .
26. **Мардоян А. В.** Законодательные реформы недропользования в Республике Армения // Проблемы экономики и менеджмента, Научно-практический журнал, N4 (44)-2015, стр. 3-6.
27. **Мардоян А. В.** Тенденции развития недропользования в Республике Армения // Проблемы экономики и менеджмента, Научно-практический журнал, N4 (44)-2015, стр. 46-50.
28. **Арутюнян А. С., Лалаян А. С.,** НЕОБХОДИМОСТЬ СУБСИДИРОВАНИЯ И ОКАЗАНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ СЕЛЬСКОМУ ХОЗЯЙСТВУ // «Аграрное образование и наука» #3, Международный научный журнал При содействии Университета науки и техники штата Айова, 2015, стр. 3-9.
29. **Арутюнян А. С.,** НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ЗАКОНОДАТЕЛЬНОГО ПОЛЯ АГРАРНОГО СЕКТОРА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ // «Российская экономическая модель-5, настоящее и будущее аграрного, индустриального и постиндустриального секторов» Сборник статей Куб ГАУ, Краснодар 2015 г., стр. 25-29.
30. **Bayadyan. A. H.,** New approaches towards the assessment of the activities of commercial banks on the basis of interrelationship of the main indicators // Bulletin of National Agrarian University of Armenia 2015, 5 pg.
31. **Harutyunyan H. S., Amir Farhadian , Aliakbar Naji Meidani.,** Using Structural Equation Modeling to assess the relationship between identifying indicators of worn-out tissue and sustainability indicators // Journal of Urban Economics and Management Vol. 44, No. 1, 2015. – p. 540-554.
32. **Խաչատրյան Հ. Հ., Բախտավորյան Ռ. Գ., Թելունց Ս. Ս., Սարգսյան Գ.,** CONSUMER WELFARE ANALYSIS OF GAS PRICE INCREASE IN THE REPUBLIC OF ARMENIA // Известия НАУА , 2015г. стр. 6.
33. **Tadevosyan N. H.,** The role of rural non-farm sector in poverty reduction in Armenia // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015թ., էջ 270-278:
34. **Խաչատրյան Գ. Ա.,** «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման մեթոդական ուղեցույց, Երևան, Լիմնուշ հրատ., 2016 թ.:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲՈՆ

Ամբիոնի վարիչ՝ **Ղուլոյան Հակոբ Մելսիկի**
 Կոնսուլտացիոն ծախսերի թեկնածու,
 դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ամիրխանյան Սամվել Գրիգորի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Մարգարյան Հասմիկ Անդրանիկի - ասիստենտ
3. Եղիազարյան Սամվել Ռադիկի - դասախոս
4. Հակոբյան Անահիտ Ալեքսանի - դասախոս
5. Ղաջոյան Կարինե Համլետի - դասախոս
6. Բաղայան Անի Սամվելի - լաբորանտ, դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Այրումյան Իրինա Գագիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Առաքելյան Վալերի Հովհաննեսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. Մարկոսյան Սևակ Մեսրոպի - տնտեսագիտության թեկնածու

ԱՄԲՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակում և կատարելագործման հիմնախնդիրները:
- բ) Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդոլոգիայի և կազմակերպման կատարելագործման հիմնահարցերը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	1	-	4	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Խլղաթյան Ի. Ե., Ամիրխանյան Ս. Գ.** Գլոբալացման ազդեցությունը միջազգային տնտեսական հարաբերությունների վրա: //ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 2, 2015թ., էջ 227-230:

2. **Ամիրխանյան Ս. Գ., Թանգյան Ս. Գ.** Բանկային համակարգի ձևավորման առանձնահատկությունները ՀՀ-ում: //ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 2, 2015թ., էջ 231-239:
3. **Առաքելյան Վ. Հ., Մկրտչյան Ա. Ֆ.** Նորամուծական գործընթացի և ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատումը: //ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 2, 2015թ., էջ 261-269:
4. **Առաքելյան Վ. Հ., Մկրտչյան Ա. Ֆ.** Նորամուծական գործունեության վերլուծությունը ՀՀ տնտեսությունում: //ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 2, 2015թ., էջ 297-304:
5. **Առաքելյան Վ. Հ.,** Մարքեթինգային ռազմավարության վերլուծության մեթոդները, ուսումնական ձեռնարկ, Երևան «Պրինտոգրաֆ» հրատ., 2015թ.:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատասխանատու՝ Կուրուզյան Նելլի Ալբերդի,
 ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
030400	Պատմություն
020400	Աշխարհագրություն
051100	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/
030500	Իրավագիտություն
081500	Հաշվապահական հաշվառում
020200	Կենսաբանություն
020800	Բնապահպանություն և բնօգտագործում
230100	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա
100100	Սերվիս
020500	Քարտեզագրություն և կադաստրային գործ
021000	Դեղագործական քիմիա

Մասնագիտացումներ՝	
	Բանասիրության բակալավր
	Բանասիրության բակալավր
	Պատմության բակալավր
	Աշխարհագրության բակալավր
	Մանկավարժության բակալավր, ուսուցիչ
	Իրավագիտության բակալավր
	Ֆինանսների բակալավր
	Կենսաբանության բակալավր
	Բնապահպանության բակալավր
	Ճարտարագիտության բակալավր
	Սերվիսի բակալավր
	Քարտեզագրության բակալավր
	Դեղագործական քիմիայի բակալավր

Ուսանողների թիվը՝ 857
Շրջանավարտների թիվը՝ 189

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2016թ. ՈՒՍՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
2017թ. ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2016 թվականի ուսումնական տարում Հեռակա ուսուցման ֆակուլտետում կրթական գործընթացն իրականացվել է բակալավրիատի 13 մասնագիտությունների գծով: Սահմանված կարգով կազմակերպվել են ընդունելության քննությունները, բուհ դիմած 155 դիմորդից ընդունվեց 150-ը: Ապահովվել են երկրորդ բարձրագույն, ինչպես նաև շարունակական կրթություն ստացողների համար սահմանված մուտքի պահանջներն ու հետագայում հաշվի են առնվել նրանց կրթական կարիքները: Շարունակվել է ուշադրության կենտրոնում մնալ կրթության որակի ապահովման ու մրցունակ մասնագետների պատրաստման խնդիրը: Հաշվետու ուսումնական տարում հեռակա ուսուցման ֆակուլտետում սովորողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշը նվազել է, ինչը պայմանավորված է ուսանողների աշխատանքային զբաղվածությամբ, ուսման վարձի ուշ վճարումներով, միջկիսամյակային ժամանակահատվածում նրանց մի մասի երկրում չլինելու հանգամանքներով:

Տարեսկզբին հեռակա ուսուցման համակարգում սովորողների թիվը կազմում էր 857 (նախորդ ուստարվա նույն ժամանակահատվածում՝ 838):

Հաշվետու ուստարում բուհն ավարտեց հեռակա ուսուցման բակալավրիատի թվով 185 շրջանավարտ: Նախորդ տարիներին բուհը չավարտած 34 նախկին ուսանողի և վեցամյա կրթության համակարգում ուսանած թվով 4 անձանց թույլատրվեց մասնակցելու ամփոփիչ ատեստավորմանը, նրանցից դրական գնահատական ստացան 25-ը (ընդհանուր թվով՝ 189 շրջանավարտ), իսկ 23 ուսանող անբավարար գնահատական ստանալու և չներկայանալու պատճառով չավարտեց համալսարանը, այսինքն՝ բուհն ավարտեց ուսանողների թվի 89.1%-ը (2015թ. ուստարում՝ 83.7%-ը):

Գերազանցության դիպլոմ շնորհվեց Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/, Իրավագիտություն և Հաշվապահական հաշվառում բաժինների 3 ուսանողի:

Հաշվետու ուսումնական տարում բարձր առաջադիմություն ունեցող թվով 7 շրջանավարտներ ընդունվեցին ԳՀՀ մագիստրատուրայի համապատասխան բաժիններ:

2016թ. ուսումնական տարում ֆակուլտետի 2 ուսանող սովորել են արտերկրում՝ իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանող Արտեմ Սամվելի Հակոբյանը՝ Գերմանիայի Հանրապետության Ֆրանկֆուրտի Վիադրինա եվրոպական համալսարանում /10 ամիս/ և Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Մերի Համլետի Վարդանյանը՝ Բուլղարիայի Հանրապետության Ռուսեի Անգել Կանչևի անվան համալսարանում /6ամիս/: Նշված փաստը հաստատում է, որ հեռակա ուսուցման համակարգում ուսանողի ստացած կրեդիտները և ձեռքբերած ու գնահատված ուսման առողջանքային վերջնարդյունքները ճանաչվել և ընդունվել են մեկ այլ հաստատության կողմից, բավարարել առաջարկվող ծրագրի պահանջներին:

Ուսանողների շրջանում կարևորելով բուհում ընդունված ներքին կարգապահական կանոնները՝ անհարգելի բացակայելու համար 476 ուսանող ստացել է նկատողություն,

խիստ նկատողություն՝ 356 ուսանող: Դասերից անհարգելի բացակայելու, ակադեմիական և ֆինանսական պարտքեր ունենալու պատճառով համալսարանից հեռացվել է՝ 115, ժամանակավոր կցագրումից՝ 25 ուսանող, բուհից ազատվել՝ 7 ուսանող, իսկ համապատասխան հիմքով տրամադրված տարկետման ժամկետը լրանալու պատճառով՝ 11 ուսանող:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ՀՀ բարձրագույն ուսումնական այլ հաստատություններից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 9 ուսանող, երկրորդ մասնագիտություն ստանալու համար դիմել և սահմանված կարգով ընդունվել է 4 ուսանող, քոլեջն ավարտելուց հետո շարունակական կրթության սկզբունքով՝ 19 ուսանող, ԳՊՀ առկա ուսուցման համակարգից ֆակուլտետ է տեղափոխվել 12 ուսանող, ուսանողական իրավունքները վերականգնել են 72 ուսանող, Հեռակա ուսուցման ֆակուլտետից ԳՊՀ այլ ֆակուլտետներ են տեղափոխվել 10 ուսանող, ֆակուլտետի տարբեր բաժիններ՝ 4 ուսանող, տարկետում տրամադրվել է 46 ուսանողի, իսկ այլ բուհ տեղափոխվողներ չեն եղել:

Շարունակվել են ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների նորացման, կրթական ելքային արդյունքների վերանայման, ակնկալվող արդի մասնագիտական իրազեկությունների սահմանման, աշխատաշուկայի պահանջներին դրանց համապատասխանեցման աշխատանքները՝ համադրելով համալսարանի առկա ուսուցման կրթական ծրագրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մասնագիտությունների հաստատված նոր ցանկի հետ: Հեռակա ուսուցման համակարգում իրականացվող Հայոց լեզու և գրականություն, Ռուսաց լեզու և գրականություն, Պատմություն, Աշխարհագրություն, Կենսաբանություն մասնագիտությունների ուսումնական պլաններում նախատեսվել են հոգեբանամանկավարժական կրթամասի կրեդիտներ, ճշգրտվել պրակտիկաներին հատկացվող կիսամյակներն ու կրեդիտները:

Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ հեռակա ուսուցման համակարգում սովորողների համար ևս ամփոփիչ ատեստավորման արդյունքում համաեվրոպական նմուշի երկլեզու դիպլոմների հավելվածների տրամադրման ուղղությամբ, մշակվել են ուսանողների ակադեմիական տեղեկագրերը՝ ըստ կիսամյակների, ուստարիների նրանց ունեցած ակադեմիական առաջընթացի:

Մշտադիտարկվել են «E-learning.GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի առարկայական տիրույթներում տեղակայված ուսումնական նյութերի առկայությունն ու բովանդակությունը, իրականացվել են բացթողումների վերացման ուղղությամբ կատարվել են որոշակի աշխատանքներ:

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի օբյեկտիվության ու թափանցիկության ապահովման խնդիրները մշտապես եղել են ֆակուլտետում իրականացվող աշխատանքների կենտրոնում:

Կարևորվել է կրթության որակի ապահովման գործընթացում ուսանողների դերակատարումը, մշտապես ուսումնասիրվել են նրանց կրթական կարիքները, առաջարկությունները քննարկվել ֆակուլտետի խորհրդում, ապա նաև գիտխորհրդում:

2016 թվականի ուսումնական տարում ֆակուլտետի ուսանողներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել հայրենիքի սահմաններն անառիկ պահելու գործում: Ապրիլյան Քառօրյա պատերազմի ընթացքում շուրջ երկու տասնյակ ուսանողներ արիության

և խիզախության համար ՀՀ Պաշտպանության նախարարության, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի հրամանատարի կողմից արժանացել են պատվոգրերի և շնորհակալագրերի, նրանց ցուցաբերած արիության, խիզախության և կազմակերպչական հմտություններ դրսևորելու համար շնորհվել են «Անդրանիկ Օզանյան», «Գարեգին Նժդեհ», «Մարշալ Բաղրամյան» մեդալներ: Ուսանողները ցուցաբերել են նաև հասարակական ակտիվություն՝ տարբեր ոլորտներում գրանցելով ձեռքբերումներ, մասնավորապես, Իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ատոմ Հակոբյանը, ով նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի տնօրենն է, միաժամանակ ՀՀ նախագահին կից Հանրային խորհրդի անդամ, ճանաչվել է ԳՊՀ-ում հայտարարված ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված էսսեների՝ ակնարկների, խոհագրությունների մրցույթի հաղթող, ֆակուլտետի շրջանավարտ, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Արարատ Մովսեսյանը ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից անցկացված մրցույթի արդյունքում ճանաչվել է 2016 թվականի ՀՀ լավագույն ուսուցիչ և արժանացել է պարգևի: Պատմության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Խաչիկ Վրույրի Գևորգյանը՝ որպես ՀՀ Գեղարքունիքի մարզի Պրոֆեսիոնալ Արմֆայթինգի ֆեդերացիայի նախագահ, ՀՀ «Ընդհանուր մենամարտերի» գլխավոր մրցավարի նախաձեռնությամբ կազմակերպել է սպորտային միջոցառում՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին, ներգրավելով համալսարանականների:

Արդեն ավանդույթ է դարձել Հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողների ջանքերով ստեղծված «Վերնատուն» խորագրով միջոցառումների շարքի ամենամյա անցկացումը: Հաշվետու ուստարում «Վերնատուն 2ե-ի շրջանակներում կազմակերված ցերեկույթին հրավիրված էին մարզում հայտնի ստեղծագործողներ, երգահաններ, մշակութային գործիչներ, ովքեր իրենց փորձով կիսվեցին ուսանողների հետ, փոխներգործուն մեթոդով կազմակերպված միջոցառմանը ներկայացրեցին իրենց կարծիքներն ու դիրքորոշումը քննարկվող հարցերի շուրջ: Ուսանողները և հյուրերը հանդես եկան իրենց հեղինակած գրական-գեղարվեստական համարներով:

Իրականացվել են աշխատանքներ նոր ընդունված ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, տնտեսական աշխատակազմի արագ ինտեգրման ուղղությամբ՝ ներառյալ բուհում ընդունված բարեվարքության սկզբունքների, ակադեմիական ազնվության վարքականոնների արմատավորումը: առաջին կուրսեցիներին տրամադրվել են «E-learning GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգից օգտվելու վերաբերյալ խորհրդատվություններ, տեխնիկական և մեթոդական ցուցումներ:

Մշտապես աջակցություն է ցուցաբերվել ուսանողներին ֆինանսական տարբեր ծրագրերում ընդգրկվելու նպատակով, որի արդյունքում «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության միջոցներից օգտվում են 7 ուսանող, ԱՄՔՈՐ Հայաստան բարեգործական հասարակական կազմակերպության կողմից հայտարարված «Ուսանողների ուսման վճարների փոխհատուցման ծրագրի միջոցներից՝ 18 ուսանող, Թրփանճեան ընտանեկան և Ագեան հիմնադրամներից՝ 2 ուսանող: Ընտանիքների սոցիալական անապահվության «Փարոս» համակարգում ընդգրկված 43 ուսանողների՝ ըստ անապահովության միավորների, սահմանված չափով պետական բյուջեից տրամադրվեց ֆինանսական աջակցություն, իսկ համալսարանի կողմից ուսման վարձերը զեղչվեցին 41 ուսանողի համար: 2016թ. ՀՀ պետական ուսումնական հաստատություններում սովորողների համար ՀՀ օրենսդրությամբ

նախատեսված արտոնություններից օգտվելու կարգի համաձայն՝ ֆակուլտետում անվճար սովորում է 6 ուսանող:

Աշխատանքներ են ծավալվել ֆակուլտետում ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման, պատշաճ գործավարության, թափանցիկ հաշվետվողականության ապահովման ուղղությամբ՝ նպաստելով բուհի ենթակառուցվածքային հավատարմագրման աշխատանքներին:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2017 թվականի ուսումնական տարվա զարգացման հայեցակարգ

ԳՊՀ 2016-2021թթ Ռազմավարական ծրագրի նպատակներից էլնելով՝ 2017 թվականին նախանշվում են ֆակուլտետի զարգացման հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

1. Վերանայել Աշխարհագրություն, Կենսաբանություն, Պատմություն, Հայոց լեզու և գրականություն, Ռուսաց լեզու և գրականություն, Համակարգչային ճարտարագիտություն մասնագիտությունների կրթական ծրագրերի կառուցվածքը՝ համապատասխանեցնելով ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների նոր ցանկին, որակավորումներին, մշակել առանձին մասնագիտությունների գծով հոգեբանամանկավարժական կրթամասին, մանկավարժական պրակտիկաներին հատկացվող կրեդիտների շնորհման մեթոդաբանություն:
2. Ուսումնասիրել առկա ուսումնամեթոդական, կադրային ռեսուրսները, ընտրել կրթական ծրագրեր, ծավալել հետևողական աշխատանքներ՝ հեռահար ուսուցում կազմակերպելու ուղղությամբ:
3. Ուսանողների շրջանում կրթական կարիքների բացահայտմանը միտված, դասատվության որակից սովորողների բավարարվածության գնահատման հարցումների իրականացում, արդյունքների վերլուծության եզրահանգումների կատարում, լրացուցիչ կրթական ծառայությունների, խորհրդատվությունների և այլ աջակցման ծրագրերի իրականացում:
4. Իրականացվող կրթական ծրագրերի տեղեկագրքերում հեռակա ուսուցման ժամկետների, սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման բազմագործոն համակարգի, գործոնների կշիռների ներառում:
5. Համակերպական նմուշի դիպլոմի հավելվածի մշակում, 2017թ. շրջանավարտներին երկլեզու հավելվածի տրամադրում:
6. Հեռակա ուսուցման համակարգում իրականացվող կրթական ծրագրերի էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների մշտադիտարկում, էլեկտրոնային ռեսուրսների համալրում:
7. Համալսարանի ՈՒԽ, ՈՒԳԸ աշխատանքներում հեռակայող ուսանողների մասնակցության ակտիվացում, հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների խրախուսում:
8. Ակադեմիական շարժունության ծրագրերում ուսանողների մասնակցության, նրանց շրջանում ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացում:
9. Պրակտիկաների ծրագրերի վերանայում՝ ուսումնական պլաններում ավելացնելով մասնագիտության գործնական գիտելիքների ու կարողությունների ձեռքբերմանը մտված մոդուլները: Ընդլայնել ուսանողների պրակտիկաների անցկացման բազան, կնքել նոր պայմանագրեր:

10. Նոր ընդունված և վերականգնված ուսանողներին էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների բազաներին մուտքերի հնարավորությունների ընձեռում, տեխնիկական աջակցման ծրագրերի իրականացում:
11. Շրջանավարտների տվյալների գրանցման դինամիկ համակարգի արդյունավետության բարձրացում, նրանց աշխատանքային ուղու դիտարկում և հնարավորության դեպքում աջակցության ցուցաբերում:

**Ն. Ա. Կուրուզյան՝
ԳՀՊ ուսումնագիտական գծով պրոռեկտոր**

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2016-2017
ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2015-2016 ուսումնական տարում ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության (այսուհետ՝ ԱՔՎ) աշխատանքները կազմակերպվել են՝ հաշվի առնելով այն բոլոր պահանջներն ու զարգացման ուղղությունները, որոնք տեղ են գտել ԳՊՀ ռազմավարական և հակակոռուպցիոն ծրագրերում, ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներում և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունում: Հաշվետու ուստարում շարունակվել են աշխատանքները կրթական ծրագրերի ու դասընթացների որակի և արդյունավետության գնահատման ուղղություններով, կազմակերպվել հարցումներ, դասալսումներ, կատարվել են աշխատանքներ կրթական ծրագրերի բարելավման (ելքային արդյունքների ձևակերպումներ, գնահատման մեթոդներ, գրականության ցանկեր, հարցաշարեր և այլն), ծրագրերի փաստաթղթային փաթեթների ստուգման և մասնագիտական եզրակացությունների տրամադրման (արտաքին փորձաքննություն, հանձնաժողովների նախագահների և այլ արտաքին շահառուների կարծիքներ) ուղղություններով:

Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում և բարելավում

2015-2016 ուսումնական տարում կարևորվել են ուսումնական գործընթացի պլանավորման, կառավարման և կատարողականի վերահսկման աշխատանքները:

Իրականացվել են աշխատանքներ բազային ուսումնական պլաններից աշխատանքային պլանների ածանցման ուղղությամբ, որոնց հիման վրա կազմվել են ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածությունները:

Մասնագիտական որակավորումների փոփոխությունների հետ կապված՝ վերանայվել և փոփոխությունների են ենթարկվել 6 մասնագիտությունների ուսումնական պլանները:

Կրթական ծրագրերի բարելավման նպատակով բակալավրիատում և մագիստրատուրայում անցկացվել են հարցումներ կամընտրական դասընթացների ընտրության վերաբերյալ:

Շարունակվել են աշխատանքները ֆակուլտետների դեկանատների հետ՝ քննաշրջանի և փոխատեղման արդյունքները ուսանողների համար առավել հասանելի ու թափանցիկ դարձնելու ուղղությամբ:

Ուսումնական անխաթար գործընթաց ապահովելու նպատակով վերանայվել են դասացուցակները, հաշվառվել է լսարանային ֆոնդը, դասերը կանոնավոր կազմակերպվել են:

Ուսանողների թվաքանակի հետ կապված՝ դեկանատների հետ միասին շարունակվել են ուսանող-դասախոս հարաբերակցության ճշգրտման և օպտիմալացման աշխատանքները, ինչի շնորհիվ կատարվել է համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատաձևավալների օպտիմալացում:

Ինքնավերլուծության և հավատարմագրման գործընթացների, ինչպես նաև Գավառի պետական համալսարանի հիմնադրամի կարգավիճակի պահանջներից ելնելով՝ վերանայվել են ԳՊՀ կանոնակարգերը:

Հաշվետու ուստարում շարունակվել են ուսանողների և դասախոսների տվյալների բազաների ստեղծման և լրացման աշխատանքները: Այդ բազաների հիման վրա յուրաքանչյուր եռամսյակը մեկ հաշվապահություն է ներկայացվում ուսանողների թիվը:

ԱԲՎ-ի կողմից համակարգվել և կազմակերպվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների՝ ԳՊՀ-ում կրթությունը շարունակելու, ինչպես նաև երկրորդ մասնագիտություն ստացողների փաստաթղթերի ընդունման, առարկայական տարբերությունների հանձման գործընթացի վերահսկման աշխատանքները: Միաժամանակ, կազմակերպվել ու վերահսկվել է ներբուհական տեղափոխությունների արդյունքում առաջացած առարկայական տարբերությունների հանձնումը:

ԱԲՎ-ի կողմից նախապատրաստվել և հաշվառվել են ԳՊՀ ուսանողների շարժի՝ տարկետման, վերականգման, հեռացման, ազատման, տեղափոխությունների փաստաթղթային հիմքերը:

2015-2016 ուսումնական տարում գրանցվել է ԳՊՀ ուսանողների հետևյալ շարժը 2014-2015 ուսումնական տարվա հետ համեմատությամբ.

		2014-2015 ուստարի	2015-2016 ուստարի
1	Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել	15	11
2	ԳՊՀ-ից այլ բուհ են տեղափոխվել	0	0
3	Երկրորդ մասնագիտություն ստացողներ	19	12
4	Քոլեջից ԳՊՀ են ընդունվել/ուսուցիչներ	25/9	23/5
5	Ներբուհական տեղափոխություններ	66	36
	➢ Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա	25	13
	➢ Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա	20	10
	➢ Ներֆակուլտետային տեղափոխություններ	21	12
6	Տարկետում են ստացել	55	51
	➢ առողջական վիճակի պատճառով	5	4
	➢ զինծառայության մեկնելու հիմքով	50	47
7	ԳՊՀ-ից հեռացվել են	153	161
8	ԳՊՀ-ից ազատվել են	29	17
9	Վերականգնվել են ԳՊՀ՝	123	143
	➢ զորացումից հետո	59	66
	➢ հեռացումից հետո	23	37
	➢ տարկետումից հետո	10	4
	➢ ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլատրվածներ	31	36
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐՃ		494	458

Նախորդ՝ 2014-2015 ուսումնական տարվա ընդհանուր շարժի 494-ի դիմաց հաշվետու տարում արձանագրվել է 458-ը:

Շարժի մի մասն էլ կապված է ԳՊՀ ուսանողների և դասախոսների կողմից փոխանակման ծրագրերի շրջանակներում եվրոպական տարբեր բուհերում ուսումնառության ու վերապատրաստումների հետ: Հաշվետու ուստարում արտերկրյա տարբեր բուհերում իրենց ուսումնառությունն են շարունակել ԳՊՀ 14 ուսանողներ, 1 օտարերկրացի ուսանող իր ուսումնառության մի մասը անցել է ԳՊՀ-ում, ԳՊՀ 2 դասախոսներ վերապատրաստումներ են անցել, իսկ 4-ը՝ դասախոսել են եվրոպական առաջատար բուհերում:

2015-2016 ուսումնական տարում ընդունելության արդյունքներով Գավառի պետական համալսարանի առաջին կուրսեր են ընդունվել՝ առկա բակալավրիատում 75 սովորող, որից 71-ը՝ հրամանագրված, 4-ը՝ ժամանակավոր կցագրված, հեռակա բակալավրիատում՝ 150 սովորող, որից 115-ը՝ հրամանագրված, 35-ը՝ ժամանակավոր կցագրված:

2015-2016 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի մագիստրատուրա են ընդունվել 45 ուսանող:

ԱԲՎ-ի կողմից համակարգվել են ուսանողների պրակտիկաների անցկացման գործընթացները:

2015-2016 ուսումնական տարում պրակտիկաներին մասնակցած ուսանողների տվյալները.

Առկա բակալավրիատ	Ուսումնական	61
	Ուսումնամանկավարժական	10
	Մանկավարժական	54
	Արտադրական	92
	Նախաավարտական	64
Մագիստրատուրա	Գիտամանկավարժական	81
	Գիտահետազոտական	81
Հեռակա բակալավրիատ	Ուսումնական	81
	Արտադրական	19
	Նախաավարտական	84
Ընդամենը		627

Շարունակելով նախորդ տարիների քաղաքականությանը՝ բուհը կատարել է ուսման վարձավճարների զեղչեր սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ունեցող, ինչպես նաև մարտական հերթապահություն իրականացնող և Արցախում ապրիլյան քառօրյա պատերազմին մասնակցած և բանակից զորացրված ուսանողների համար:

Գավառի պետական համալսարանը համագործակցում է տարբեր անհատների, կազմակերպությունների և հիմնադրամների հետ, ինչի արդյունքում հաշվետու ուստարում նույնպես այդ անհատների և կազմակերպությունների կողմից մասնակի կամ լրիվ փոխհատուցվել են ԳՊՀ ուսանողների ուսման վարձավճարները:

2015-2016 ուսումնական տարում անվանական կրթաթոշակներ ստացած ուսանողների թիվը հետևյալն է.

Հ/Հ	Հովանավոր կազմակերպություն	ուսանողների
1.	«Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	77
2.	Թրփանճեան ընտանեկան հիմնադրամ	5
3.	Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	24
4.	«Ամբոր Հայաստան» բարեգործական հիմնադրամ	29
5.	«ՎիվաՍեյ-ՄՏՍ» կրթական ֆոնդ	42
6.	Հայ կրթական հիմնարկություն	12
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		189

2014-2015 ուսումնական տարվա 190-ի փոխարեն 2015-2016 ուսումնական տարում կրթաթոշակ ստացողների թիվը կազմում է 189-ը:

Բողոքարկման գործընթացների օբյեկտիվությունն ապահովելու նպատակով հաշվետու տարում նույնպես ամփոփիչ ատեստավորման քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակ քննական լսարաններում տեղադրվել են ձայնագրող սարքեր:

Ամփոփիչ քննությունների արդյունքներն ամփոփվել և ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների հետ ներկայացվել են ՀՀ ԿԳ նախարարություն՝ համաձայն սահմանված կարգի:

ԱԲՎ մասնագետների կողմից շարունակվել են շրջանավարտների դիպլոմների հավելվածների ստուգման աշխատանքները:

2015-2016 ուսումնական տարում պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 441 դիպլոմ:

2015-2016 ուսումնական տարվա ԳՊՀ շրջանավարտների թիվը.

Ֆակուլտետ		ոչ գերազանցության	գերազանցության	ընդամենը
Բանասիրական	բակալավր	29	15	44
	մագիստրոս	3	18	21
Բնագիտական	բակալավր	21	12	33
	մագիստրոս	1	8	9
Հումանիտար մասնագիտությունների	բակալավր	31	18	49
	մագիստրոս	10	14	24
Տնտեսագիտական	բակալավր	25	26	51

	մագիստրոս	6	15	21
ԸՆԴԱՄԵՆԸ	բակալավր	106	71	177
	մագիստրոս	20	55	75
Հեռակա	բակալավր	182	3	189
	դիպլ. մասն.	4	-	
ԸՆԴԱՄԵՆԸ		312	129	441

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել «1-ԳՄ» և «3-ԳՄ» ձևաչափերով ամենամյա վիճակագրական հաշվետվությունները:

Ուսումնական տարվա վերջում ՀՀ ԿԳՆ են ներկայացվել դիպլոմների ստացման և բաշխման հաշվետվությունն ու շրջանավարտների ցուցակները՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով, տեղափոխությունների և երկրորդ մասնագիտություն ստացողների վերաբերյալ հաշվետվությունները, ինչպես նաև՝ կիսամյակային քննաշրջանների առաջադիմության արդյունքները՝ սահմանված ձևաչափերով:

ԱԲՎ-ն վերանայել է նաև ամբիոնների գործունեության փաստաթղթային հիմքերը և իրականացրել է ամբիոններում առկա անհատական, կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի արխիվացման գործընթացը:

ԱԲՎ-ն իր ամենօրյա գործառույթների շրջանակում սերտորեն համագործակցում է դեկանատների, ամբիոնների, կադրերի ու հանրության և լրատվության բաժինների, արխիվի, հաշվապահության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի և ԳՊՀ մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Համագործակցություն.

Գավառի պետական համալսարանը, ինչպես հանրապետության մյուս բուհերը, վերջին տարիներին դիմորդների թվի նվազման խնդիր ունի: Բուհ-դպրոց փոխադարձ կապերի ամրապնդման նպատակով ԱԲՎ-ն հանրության և լրատվության բաժնի հետ համագործակցելով՝ հաշվետու տարում շարունակել է իրականացնել աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստող մի շարք միջոցառումներ.

- Կազմակերպվել են եվրոպական փոխանակման ծրագրում ներգրավված ԳՊՀ ուսանողների ու դասախոսների այցելությունները ավագ դպրոցներ՝ աշակերտներին տրամադրելով դիմորդի ուղեցույցեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների օրինակներ:
- Անցկացվել են հարցումներ, որոնց մասնակցել են մարզի 12 դպրոցների շուրջ 363 աշակերտներ, որոնցից 206 աշակերտ ցանկացել է ստանալ բարձրագույն մասնագիտական կրթություն, իսկ նրանցից 83-ը ցանկացել է իր ուսումը շարունակել Գավառի պետական համալսարանում:
- Կազմակերպվել են 5 դպրոցների աշակերտների և ուսուցիչների ճանաչողական այցեր համալսարան՝ ծանոթանալու համալսարանի թանգարանին, լաբորատորիաներին, ամբիոններին, մասնագիտություններին:

2015-2016 ուսումնական տարում համագործակցության հուշագրեր են կնքվել ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների և գիտահետազոտական հաստատությունների հետ.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,
- Գեղարքունիքի տարածաշրջանի պետական քոլեջ,
- Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոց,
- «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ:

Որակի ապահովում.

ԱԲՎ-ի կազմում գործող որակի ապահովման բաժնի աշխատանքները ուղղված են ԳՊՀ-ում կրթության որակի ապահովմանն ու շարունակական զարգացմանը: Այդ իմաստով 2015-2016 ուսումնական տարին կարևորվում է նրանով, որ վերանայվեց այն կանոնակարգային հենքը, որը կոչված է նպաստելու ուսումնառության որակի և կրթական միջավայրի բարելավմանը: Որակի բաժնի կողմից կազմակերպված հարցումները կատարվել են թղթային և էլեկտրոնային եղանակներով, առկա և հեռակա կրթական համակարգերում: Բովանդակային առումով հարցերը ենթարկվել են փոփոխությունների և լրամշակումների: Հարցումներին մասնակցել են ԳՊՀ ուսանողները, շրջանավարտները, ինչպես նաև ԳՊՀ 71 դասախոսներ: Ընդհանուր հաշվով հարցումներին 2 կիսամյակների արդյունքներով մասնակցել են 1110 ուսանող, նախորդ տարվա 1168-ի փոխարեն, 227 շրջանավարտ, նախորդ տարվա 127-ի փոխարեն: Ընդհանուր առմամբ, պատկերն այսպիսին է.

2015-2016 ուսումնական տարում հարցումներին մասնակցած ուսանողներ և դասախոսներ

Հարցումներ	Ֆակուլտետներ	Ուսանողների/ դասախոսների թիվ
Ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրի իրականացման ընթացքից	ԲՖ,ԲԼՖ, ՀՄՖ,ՏՖ	345
1-ին կիսամյակ (էլեկտրոնային հարցում) Տեղեկատվական համակարգերի, համալսարանի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվության համապատասխանության, ուսանողների ուսումնառության, ուսումնական ռեսուրսների վերաբերյալ ուսանողների գնահատման հարցաթերթ	ԲՖ,ԲԼՖ, ՀՄՖ,ՏՖ, ՀՈւՖ	281

<p>2-րդ կիսամյակ (էլեկտրոնային հարցում) Տեղեկատվական համակարգերի, համալսարանի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվության համապատասխանության, ուսանողների ուսումնառության, ուսումնական ռեսուրսների վերաբերյալ ուսանողների գնահատման հարցաթերթ</p>	<p>ԲՖ,ԲՆՖ, ՀՄՖ,ՏՖ</p>	<p>257</p>
<p>Գավառի պետական համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման վերաբերյալ</p>	<p>ԲՖ,ԲՆՖ, ՀՄՖ,ՏՖ, ՀՈւՖ</p>	<p>227</p>
<p>Գավառի պետական համալսարանում կրթական միջավայրից դասախոսների բավարարվածության վերաբերյալ</p>		<p>71</p>
<p>Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը</p>		<p>1181</p>

Հաշվետու ուստարում ԱԲՎ-ի ձեռքբերումներից պիտի համարել վարչության և որակի բաժնի մասնագետների ակտիվ մասնակցությունը միջազգային տարբեր ծրագրերին, դրանց շրջանակներում կազմակերպված աշխատաժողովներին, վերապատրաստումներին ու գիտաժողովներին, ինչը նպաստում է նրանց մասնագիտական որակների զարգացմանը և առաջավոր փորձի ձեռքբերմանը:

ԳՊՀ ուսանողների և դասախոսների համակազմը.

2015-2016 ուսումնական տարվա սեպտեմբեր ամսին ԳՊՀ ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 1392, ապրիլ ամսին՝ 1475 սովորող, որոնցից՝

- առկա բակալվրիատում՝ 503 սովորող, որից 93-ը՝ անվճար ուսուցման համակարգում,
- մագիստրատուրայում՝ 115 սովորող, որից 27-ը՝ անվճար ուսուցման համակարգում,
- հեռակա ուսուցման համակարգում՝ 857 սովորող,

օտարերկրյա քաղաքացիություն են ունեցել 4 ուսանողներ:

2015-2016 ուսումնական տարում ԳՊՀ-ում աշխատող դասախոսների ընդհանուր թիվը 139 է՝

դոկտորներ՝ 15, որոնցից 7-ը ունեն պրոֆեսորի կոչում,
գիտությունների թեկնածու՝ 59-ը, որոնցից 29-ը ունեն դոցենտի կոչում,
ասիստենտ, դասախոս՝ համապատասխանաբար՝ 22, 43:

ԱՔՎ 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հիմնական ուղղությունները.

ԱՔՎ-ն պետք է շարունակի և գործուն մասնակցություն ապահովի ԳՊՀ 2016-2021թթ. ռազմավարական ծրագրից բխող 2016-2017թթ. գործողությունների ծրագրի իրականացմանը, համալսարանի հավատարմագրման գործընթացներից բխող խնդիրների լուծմանը:

Գործունեության նշված առաջնահերթությունները հաշվի առնելով՝ ԱՔՎ-ն 2016-2017 ուսումնական տարում նախատեսում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Կրթական համակարգին ներկայացվող արդի պահանջներից ելնելով՝ ամբիոնների հետ միասին շարունակել դասալսումները և դրանց շուրջ քննարկումները՝ դասընթացների ծրագրերն ու դասավանդման մեթոդները բարելավելու նպատակով:
2. Կազմակերպել բաց դասախոսություններ, հատկապես հայագիտության վերաբերյալ, այդ դասախոսությունները ներբեռնել ԳՊՀ կայքէջ՝ նաև հանրային հասանելիություն ապահովելու նպատակով:
3. Ամբիոնների հետ համագործակցելով՝ փորձել անհատական և կուրսային աշխատանքների թեմաները շաղկապել մարզի տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին:
4. Ակտիվացնել բուհ-դպրոց փոխայցելությունները, օգտագործել ԳՊՀ դասախոսների ուժերը՝ դպրոցներում խորհրդատվություններ անցկացնելու ու դասեր վարելու նպատակով:
5. Իրականացնել «Բաց դռների օր՝ մասնագիտությունների ցուցահանդես» միջոցառումը՝ մարզի դպրոցների և քոլեջների սովորողներին ներկայացնելով ԳՊՀ կրթական միջավայրը, ԳՊՀ մասնագիտություններն իրենց որակավորումներով:
6. Կազմակերպել օլիմպիադաներ հատկապես այն առարկաների գծով, որոնց համապատասխան մասնագիտություններով սովորող ուսանողների թիվը բուհում նվազում է:
7. Մշակել նոր բովանդակությամբ հարցաթերթիկներ՝ արտաքին շահառուների շրջանում հարցումներ անցկացնելու նպատակով:
8. Ուսխորհրդի ուժերով շարունակել մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպումը՝ ակտիվորեն ներգրավելով քոլեջների ուսանողներին:
9. Ինքնավերլուծության և հավատարմագրման գործընթացներից ելնելով՝ հետամուտ լինել կրթական գործընթացներն ապահովող փաստաթղթային հիմքերի ապահովմանը:
10. Ուսումնական կառավարումն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, համագործակցելով ՏՏ բաժնի հետ, ստեղծել տեղեկատվության հավաքագրման և պահպանման ճկուն համակարգ:

11. ԳՊՀ դասախոսների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ:
12. Դասախոսների և ուսանողների համար իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր, շարունակել անգլերեն լեզվի ուսուցումը:
13. Շարունակել առարկայական ծրագրերը արտաքին փորձաքննության ենթարկելու գործընթացը:
14. ԳՊՀ և միջազգային փորձի արդյունքները համադրելով՝ շարունակաբար վերանայել մասնագիտությունների կրթական ծրագրերի ելքային արդյունքներն ու գնահատման մեթոդները:

Ա. Ա. Ղարիբյան՝
ԳՊՀ ակադեմիական քաղաքականության
վարչության պետ

**ԳՎԱՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2016-2017 ՈՒՍՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գավառի պետական համալսարանի գրադարանը և ընթերցասրահները, որոնք տեղակայված են Համալսարանի կենտրոնական և Բնագիտական մասնաշենքերում: ԳՊՀ կենտրոնական մասնաշենքում տեղակայված գրադարանը համալրված է հումանիտար ուղղվածության մասնագիտական գրականությամբ, իսկ Բնագիտական ֆակուլտետի մասնաշենքի գրադարանը՝ բնագիտական մասնագիտական գրականությամբ: Երկու գրադարանները միասին սպասարկում են Համալսարանի ուսանողներին, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմին, այլ ընթերցողներին:

ԳՊՀ գրադարանի առաքելությունն է՝ գրադարանային գործառույթների և պարտականությունների բարեխիղճ կատարումը՝ ապահովելով սովորողներին անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ, տեղեկատվական աղբյուրներով:

Գրադարանի նպատակն է նպաստել ուսումնական գործընթացին՝ համալրելով գրքաֆոնդը, կազմակերպել և ընթերցողներին տրամադրել մասնագիտական գրականություն և շտեմարաններ, սովորողների մոտ ձևավորել տեղեկատվության հետ ինքնուրույն աշխատելու կարողություն և հմտություններ, զարգացնել ընթերցանության մշակույթ: Այս նպատակներն իրագործելու համար գրադարանը մատուցում է հետևյալ ծառայությունները.

• Ընթերցողների գրանցում, որն իրավունք է տալիս ուսումնառության տարիներին օգտվելու գրադարանից՝ սպասարկման սահմանված ձևերով,

• Ընթերցասրահում և գրադարանում ընթերցողների սպասարկում՝ ավանդական և էլեկտրոնային եղանակներով,

• Տեղեկատվական-մատենագիտական սպասարկում, անհատական և խմբակային աշխատանքի տարբեր ձևերի և մեթոդների կիրառում,

• Գրականության ցուցադրում (մատենագիտական ցանկեր, գրքերի ցուցահանդեսներ, գրապահոցի «Բաց դռների օրեր»-ի անցկացում և այլն),

• Անմիջական օգնություն ընթերցողին՝ տեղեկատվություն որոնելու, ընտրելու, գրադարանի կայքից օգտվելու, նորություններին իրազեկ դառնալու գործընթացներում:

ԳՊՀ գրադարանում աշխատանքներ են իրականացվել նաև հետևյալ ուղղություններով.

- Գրադարանային ֆոնդի համալրում,
- Մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում,
- Համալրումների ցուցադրում և դրանց մասին տեղեկատվության ապահովում,
- Գրքային ֆոնդի մշակում,
- Գրքերի շրջանառում,
- Վնասված գրքերի վերանորոգում,
- Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների մշակում,
- Մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում,
- ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Գրադարան» հատվածամասի լրամշակում:

Գրադարանային ֆոնդի համալրում

Հաշվետու ուսումնական տարում գրադարանը համալրվել է թվով 1870 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, որից 140 կտոր գրականությունը ձեռք է բերվել համալսարանի ֆինանսական միջոցներով, ԳՊՀ ռեկտորատի և պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ:

Գրադարանի համալրման գործում մշտական աջակից է ՀՀ Սփյուռքի նախարար, ԳՊՀ կառավարման խորհրդի նախագահ տիկին Հրանուշ Հակոբյանը, ում կողմից ստացել ենք հայագիտական և գեղարվեստական նոր հրատարակություններ:

Գրադարանին ամենամյա նվիրատվություն է կատարում նաև ՀՀ Գեղարքունիքի մարզային գրադարանը, որը հաշվետու տարում տրամադրել է 130 գեղարվեստական և հայագիտական գրքեր:

Մշակույթի նախարարության կողմից նվիրատվության կարգով համալսարանին տրամադրվել է գեղարվեստական և հայագիտական 105 գիրք:

Հաշվետու ուստարում խոշոր չափի՝ 1390 կտոր գրականության նվիրատվություն է կատարել Բարեշնորհ Գևորգ սարկավազ Գևորգյանը: Համալրված գրականությունը հայերեն, ռուսերեն, լատիներեն, ֆրանսերեն և անգլերեն գեղարվեստական, հայագիտական, ինչպես նաև փիլիսոփայական, բարոյագիտական, լեզվաբանական, մանկավարժական մասնագիտական գրքեր են:

«Կենաց տուն» մշակութային հասարակական կազմակերպության մշակութային պատասխանատու Լալա Մնեյանի կողմից ստացել ենք 80 օրինակ մասնագիտական և գեղարվեստական, իսկ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից՝ 14 օրինակ /1 անուն/ իրավաբանական գրքեր:

Մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում

Համալրված 1870 միավոր գրքերը մուտքագրվել, նկարագրվել և դասակարգվել են: Արդյունքում համալրվել են.

- 40 մասնագիտական դասագիրք,
- 77 ուսումնական ձեռնարկ,
- 370 ուսումնաօժանդակ նյութեր,
- 23 գիտական հանդեսներ և հոդվածների ժողովածուներ,
- 15 սեղմագիր,
- 790 գեղարվեստական գրականություն,
- 455 այլ նյութեր:

Այսպիսով, ԳՊՀ գրադարանն իր գրքային ֆոնդում ունի 43.170 գրադարանային միավոր, որից.

- հայերեն են՝ 20. 020 գիրք,
- ռուսերեն են՝ 16. 977 գիրք,
- այլ լեզուներով՝ 6. 173 գիրք:

Գրքեր	2013-2014		2014-2015		2015-2016	
	համալրման քանակ	գրքերի ընդհանուր քանակ	համալրման քանակ	գրքերի ընդհանուր քանակ	համալրման քանակ	գրքերի ընդհանուր քանակ
Հայերեն	445	18800	380	19180	840	20020
Ռուսերեն	50	16350	50	16400	577	16977
Այլ լեզուներով	150	5650	70	5720	453	6173
Ընդամենը	40. 800		41. 300		43. 170	

Գրքաֆոնդի դասավորման արդյունքում դուրս է բերվել արդիականությունը կորցրած, ֆիզիկապես և բարոյապես մաշված գրականություն, որը ենթակա է գտման:

Գրքերի շրջանառում և վնասված գրքերի վերանորոգում

Հաշվետու ուստարում ակտիվ շրջանառվել են ինչպես մասնագիտական /ուսումնական գործընթացի և հանձնարարականների պահանջներից ելնելով/, այնպես էլ գեղարվեստական գրականություն: Ուսանողների շրջանում գեղարվեստական գրականության լայն շրջանառություն է նկատվել. ակտիվություն են ցուցաբերել ոչ միայն բանասեր ուսանողները, այլև մյուս ֆակուլտետների սովորողները: Գրքատացքին նպաստում են համալրված գրականության ցուցադրությունը գրադարանում և ընթերցասրահներում, համալրումների մասին տեղեկատվության տարածումը:

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում՝ սեպտեմբեր-հոկտեմբեր և փետրվար-մարտ ամիսներին կազմակերպվում են «Գրադարանի բաց դռների օրեր», որի ընթացքում ուսանողները, հատկապես՝ առաջին կուրսեցիները ծանոթանում են համապատասխան մասնագիտական գրքապաշարին:

Հետևողական աշխատանքներ են կատարվել ողջ գրքաֆոնդի ֆիզիկական պահպանման, վնասված գրքերի վերանորոգման ուղղությամբ: Հաշվետու ուստարում վերանորոգվել է շուրջ 400 գիրք:

Աշխատանքներ են կատարվել նաև գրքի հանձնումն ուշացնող, հեռացված կամ տարեկետման մեջ գտնվող ուսանողների հետ՝ գրքի վերադարձման ժամկետների հիշեցման, գրքային պարտքերի վերադարձման ուղղությամբ: Գրադարանում մեծ պատասխանատվությամբ են կատարվել նաև պատվիրած և պահանջ ներկայացրած ընթերցողներին գրականության առկայության մասին տեղեկատվության ապահովումը:


Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների մշակում

Կատարվել է 43.170 գրքերից կազմված գրքաֆոնդի մասնագիտական գրացուցակների մշակում: Արդյունքում ստացել ենք յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխան մասնագիտական գրքերի հետևյալ քանակը.

- Հայոց լեզու և գրականություն՝ 2480
- Ռուսաց լեզու և գրականություն՝ 2240
- Անգլերեն լեզու և գրականություն՝ 2090
- Պատմություն՝ 1521
- Իրավագիտություն՝ 1561
- Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա՝ 1271
- Կառավարում և ֆինանսներ՝ 2231
- Հաշվապահական հաշվառում՝ 2231

- Կենսաբանություն՝ 2434
- Դեղագործական քիմիա՝ 232
- Աշխարհագրություն՝ 933
- Բնապահպանություն և բնօգտագործում՝ 101
- Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա՝ 2508
- Քարտեզագրություն և կադաստրային գործ՝ 60
- Սերվիս՝ 42:

Տարեցտարի Համալսարանի կողմից իրականացվում է մասնագիտական գրականության համալրման գործընթաց: Չորս տարվա ընթացքում մասնագիտական գրականության համալրման ցուցանիշները ներկայացված են գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1

Մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում

Մասնագիտական տեղեկատվական բազան իրենից ներկայացնում է մասնագիտական հոդվածների մատենագիտական ցանկեր: Գրադարանում համալրվում և լրամշակվում են թեմատիկ հանձնարարականների մատենագիտական ցանկը, որտեղ ներառված են տարբեր հանդեսների, գիտական նյութերի ժողովածուների մեջ ներառված հոդվածների վերնագրեր /պարունակում է 3938 հոդված/, և ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկը՝ 12 մասնագիտական ուղղություններով /պարունակում է 1297 հոդված/:

Այս ցանկերը, բացի գրադարանում առկա թղթային տարբերակից, տեղադրված են նաև ԳՊՀ www.gsu.am պաշտոնական կայքի «Գրադարան» հատվածամասում՝ պարբերաբար լրամշակումներով:

ԳՊՀ գրադարանի համագործակցությունը

ԳՊՀ գրադարանը Հայաստանի գրադարանային ասոցիացիայի անդամ է, համագործակցում է Հայաստանի ազգային գրադարանի հետ, որի շրջանակներում ԳՊՀ գրադարանն ամեն տարի ներկայացնում է հաշվետվություն գրադարանային հազեցվածության մասին: Գրադարանի հազեցվածության մասին ցուցանիշները հրատարակվում են Հայաստանի ազգային գրադարանի «Հայաստանի գրադարանները» մատենաշարում:

ԳՊՀ հրատարակությունների օրինակներ են տրամադրվում Հայաստանի ազգային գրադարանին, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի ու Արցախի պետական համալսարանի գրադարաններին:

Սերտ է ԳՊՀ գրադարանի համագործակցությունը Գեղարքունիքի մարզային և Գավառի քաղաքային գրադարանների հետ, որի արդյունքում Համալսարանի գրքերի նվիրատվություններով վերոնշյալ գրադարաններում տարեցտարի համալրվում է ԳՊՀ հրատարակությունների ֆոնդը: ԳՊՀ հրատարակություններով են համալրվել նաև Գեղարքունիքի մարզի դպրոցների գրադարանները: Մարզային գրադարանի հետ համագործակցության շրջանակում անցկացվում է գրքերի փոխադարձ նվիրատվություն, որը վերաձվել է գեղեցիկ ավանդույթի և շարունակական բնույթ է կրում:

ԳՊՀ գրադարանի զարգացման հիմնական ուղղությունները

2016-2017 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում են ԳՊՀ գրադարանի զարգացման հետևյալ ուղղությունները.

- ընդլայնել ԳՊՀ գրադարանի համագործակցությունների շրջանակը (կապեր հաստատել ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի, ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների գրադարանների հետ),
- աշխատանքներ իրականացնել գրադարանի գրքաֆոնդի համալրման ուղղությամբ՝ ելնելով դասընթացների ծրագրերում ներկայացվող գրականության ցանկերից և գրադարանում հաճախ պատվիրվող և մերժվող գրականությունից,
- «E-Library. GSU» էլեկտրոնային գրադարանի շարունակական համալրում՝ անհրաժեշտ, սակայն, «E-learning-Gsu» համակարգում բացակայող գրականությամբ,
- համագործակցել ԳՊՀ կառուցվածքային ստորբաժանումների հետ և ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Գրադարան» հատվածամասում տեղադրել «Համալրված գրականություն» բաժինը, որտեղ պարբերաբար տեղեկություններ կհաղորդվեն գրքաֆոնդը համալրած գրականության մասին,
- հետազոտող ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար աշխատանքային ավելի հարմար պայմանների ապահովման ուղղությամբ ընթերցասրահում ակտիվացնել համակարգչային-տեղեկատվական սպասարկումը,
- գրքաֆոնդն անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ համալրելու, ուսումնամեթոդական կարիքների վերհանման նպատակով իրականացնել հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում,
- Արցախի տարբեր համայնքներին և ուսումնական հաստատություններին նվիրաբերել գեղարվեստական գրականություն,
- շարունակական աշխատանքներ իրականացնել՝ ուսանողների շրջանում ընթերցանությունը խթանելու նպատակով:

**Ն. Ֆ. Պեքրոսյան՝
ԳՊՀ գրադարանի վարիչ**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանրության հետ տարվող աշխատանքները Գավառի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի կարևորագույն ուղղություններից են:

Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից հաշվետու ուստարվա ընթացքում կազմակերպվել են տարաբնույթ ճանաչողական, տեղեկատվական, գովազդային արշավներ ու ակցիաներ, կատարվել է Համալսարանի գիտահետազոտական, կրթադաստիարակչական գործունեության լուսաբանում, ապահովվել է գործընկեր կազմակերպությունների, շահակիցների հետ սերտ համագործակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում առանձնահատուկ ուշադրության են արժանացել Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակի նվիրված ծրագրերին և միջոցառումներին առնչվող գործընթացները: ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված ԳՊՀ միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը տեղադրվել է ԳՊՀ պաշտոնական համացանցային կայքում:

Կազմակերպվել է «Իմ անկախ հայրենիքը 25 տարեկան է» խորագրով ուսանողների ձեռարվեստի աշխատանքների, պաստառների, նկարների, լուսանկարների ցուցահանդես:

2015-2016 ուսումնական տարվա ընթացքում Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի գործառույթների իրականացման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

✓ Շարունակվել է ակտիվ համագործակցությունը մարզային և հանրապետական լրատվամիջոցների հետ:

✓ «Գեղամա» հեռուստաընկերության եթերում պարբերաբար ցուցադրվել են «Լուրեր» լրատվական, «Համալսարանական ժամ» հաղորդաշարերը, հեռարձակվել են ԳՊՀ-ին վերաբերող հայտարարություններ: Բոլոր տեսագրությունները տեղադրվել են ԳՊՀ համացանցային պաշտոնական վիդեոբլոգում:

✓ ԳՊՀ միջոցառումների և բազմաբնույթ իրադարձությունների վերաբերյալ նկարված լուսանկարներն արխիվացվել են էլեկտրոնային տարբերակով:

✓ Պատրաստվել են ԳՊՀ-ին վերաբերող, հանրային նշանակություն ունեցող, լայն տարածման ենթակա նյութերի (բուկլետներ, ուղեցույցեր, տեղեկատվական թերթիկներ, օրացույցեր և այլն), ինչպես նաև էլեկտրոնային նյութեր:

✓ Հայաստանյան տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում տեղ գտած բուհին վերաբերող տեղեկատվությունն առանձնացվել և խմբավորվել է «Մամուլը ԳՊՀ-ի մասին» ալբոմ-ժողովածուում:

✓ Գավառի պետական համալսարանի և ՀՀ պաշտպանության նախարարության, մասնավորապես, 2-րդ բանակային կորպուսի համագործակցության արդյունքում կազմակերպվել են փոխայցելություններ զորամասեր և Գավառի պետական համալսարան,

բուհում անցկացվել են ռազմահայրենասիրական դասեր կորպուսի զորահրամանատարական կազմի բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից:

✓ Հավաքագրվել ու Գնահատման և թեստավորման կենտրոն են ներկայացվել ԳՊՀ 11 ուսանողի տվյալներ, ովքեր որպես կազմակերպիչներ մասնակցել են 2016 թվականի կենտրոնացված միասնական քննություններին:

✓ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման ամենամյա ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի ուսանողները հաշվետու տարվա հուլիս և օգոստոս ամիսներին Հանքավանի «Հասմիկ» ճամբարում աշխատել են որպես ջոկատավարներ:

✓ Շարունակվել է համագործակցությունը Գեղարքունյաց թեմի առաջնորդարանի Երիտասարդական թևի հետ: Մեռնօրհներ արարողության նախօրեին Գավառի հոգևոր հովիվ Տեր Գնել քահանա Մարտիրոսյանը ԳՊՀ ուսանողներին ներկայացրեց «Մյուռոն. սրբալույս զորություն . . .» խորագրով դասախոսություն: 2015թ. սեպտեմբերի 27-ին համալսարանի պատվիրակությունը՝ դասախոսներ և շուրջ երեք տասնյակ ուսանողներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակցել են Մյուռնօրհների սուրբ արարողությանը:

✓ Դպրոց-բուհ համագործակցության ծրագրի շրջանակում կազմակերպվել են փոխադարձ այցելություններ և շրջայցեր ՀՀ դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ և Գավառի պետական համալսարան: Այցերի շրջանակներում կրթական հիշյալ հաստատություններ են առաքվել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հարցաթերթեր, տեղեկատվական թերթիկներ:

✓ Վերախմբագրվել են ԳՊՀ Բակալավրիատի առաջին կուրսեցու, Մագիստրատուրայի ուսանողի ուղեցույցերը և տեղադրվել կայքի համապատասխան բաժիններում:

✓ Թարմացվել և տպագրության են ներկայացվել ԳՊՀ այցեքարտերը, թղթապանակները, գրիչները, ժամացույցեր, բաժակներ, շապիկներ և այլ քարոզչական նյութեր:

✓ Ամենօրյա աշխատանքներ են կատարվել բուհում սովորող սոցիալապես անապահով, բազմանդամ ընտանքների և ծնողազուրկ ուսանողների հետ: Թարմացվել է վերոնշյալ ուսանողների տվյալների բազան, որի հիման վրա համապատասխան կարգավիճակ ունեցող ուսանողները ներգրավվել են մի շարք կրթաթոշակային ծրագրերում և ստացել ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում: Ապահովվել է Գավառի պետական համալսարանի ներկայացվածությունը համացանցային տիրույթում՝ հետևյալ կայքերի միջոցով.

- ԳՊՀ պաշտոնական կայք - www.gsu.am,
- ԳՊՀ ուսանողական պորտալ - www.student.gsu.am,
- ԳՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոն - www.career.gsu.am,
- ԳՊՀ հեռախոսահամարների տեղեկատու - www.phone.gsu.am,
- ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգ - www.elearning.gsu.am,
- ԳՊՀ էլեկտրոնային գրադարան - www.library.gsu.am,
- ԳՊՀ ֆեյսբուքյան էջ - <https://www.facebook.com/pages/Gavar-State-University>,
- Թվիթեր - <https://twitter.com/UniversityGSU>,

- Լինկդին - https://www.linkedin.com/home?trk=nav_responsive_tab_home
- ԳՊՀ հակակոռուպցիոն բլոգ - <http://gphhakakorupcion.blogspot.com/>

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի 2016-2017 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները

2016-2017 ուսումնական տարում Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից նախատեսված է իրականացնել հետևյալ գործողությունները.

- ✓ Լրամշակել և ԳՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի նոր կանոնակարգի նախագիծը:
- ✓ Հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումն ապահովելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ, մշակել ԳՊՀ հանրային կապերի հայեցակարգի նախագիծը:
- ✓ Հետևողական աշխատանք կատարել բուհի օրհներգի ստեղծման և տարածման ուղղությամբ:
- ✓ Մշակել և ԳՊՀ գիտական խորհրդին ներկայացնել «ԳՊՀ մեդալ»-ի օրինակը:
- ✓ Արդիականացնել ԳՊՀ պաշտոնական ինտերնետային կայքը:
- ✓ Մշակել և ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնին ներկայացնել էլեկտրոնային զեկուցագրերի www.report.gsu.am կայքէջը:
- ✓ Մշակել և ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնին ներկայացնել «Իրազեկման հայտի» էլեկտրոնային տարբերակը:
- ✓ ԳՊՀ ինտերնետային պորտալում առկա կայքերի միջև ձևավորել փոխկապակցվածություն:
- ✓ ԳՊՀ պաշտոնական կայքի տիրույթում ստեղծել «ԳՊՀ օրացույց» հատվածամասը, որտեղ պարբերաբար կտեղադրվեն միջոցառումների, կայանալիք հանդիպումների և այլ նախաձեռնությունների վերաբերյալ մանրամասներ:
- ✓ Ակտիվորեն համագործակցել «Գեղամա աշխարհ» թերթի հետ: Թերթում ունենալ «Գավառի պետական համալսարան» խորագիր, որտեղ պարբերաբար կտպագրվեն համալսարանական նորությունները:
- ✓ Ուսումնասիրել բուհերի ազգային և միջազգային վարկանիշավորման համակարգերը և սահմանված չափանիշերին համապատասխան քաղաքականություն մշակել և իրականացնել:
- ✓ Մշտադիտարկման ենթարկել համացանցային տիրույթում ԳՊՀ-ին վերաբերող տեղեկատվությունը և անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար համագործակցել համապատասխան խմբագրությունների հետ:
- ✓ «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանում պարբերաբար տեղադրել ԳՊՀ-ին ու անվանի համալսարանականներին վերաբերող տեղեկատվություն ու լուսանկարներ:

- ✓ Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ԳՀԸ կրթաշնորհառու ուսանողների հետ, քննարկել ուսանողներին մտահոգող հարցերը և նրանց ներգրավել կամավորական աշխատանքներում:
- ✓ Կազմակերպել Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից նկարահանված լուսանկարների ցուցահանդես:
- ✓ ԳՀԸ-ի մասին պատրաստել տեսանյութեր և ապահովել դրանց տարածումը:

ԳՀԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Գործունեության ոլորտները	2014-2015 ուստարի	2015-2016 ուստարի
<i>www.gsu.am կայքի նորություններ</i>	224	197
<i>Իրազեկման հայտերի քանակը</i>	24	38
<i>www.gsu.am կայքի այցելուների քանակը (այցելություններ, դիտումներ)</i>	74612/ 232313	67970/195250
<i>infogsu@mail.ru, info@gsu.am (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հարցերի քանակը (բոլոր հարցերին տրվել են պատասխաններ)</i>	1992	2065
<i>Տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում ԳՀԸ-ին վերաբերող հրապարակված նյութերի քանակը</i>	108	119
<i>Լուսանկարահանված միջոցառումներ/ Լուսանկարների քանակը</i>	235/12024	234/13600
<i>«Գեղամա» հեռուստաընկերության «Լուրեր» լրատվական ծրագրով եթեր հեռարձակված ԳՀԸ-ին վերաբերող տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)</i>	13/47.21	6/23.83
<i>«Գեղամա» հեռուստաընկերությամբ «Համալսարանական ժամ» հաղորդաշարի շրջանակում եթեր հեռարձակված տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)</i>	2/20.39	2/21.18

**Պ. Օ. Մուրադյան՝
ԳՀԸ հանրության հետ կապերի և
լրատվության բաժնի վարիչ**

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2016-2017 ՈՒՍՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում մշակվել է <http://armenia.gsu.am> ենթադոմենային կայքէջը, որտեղ տեղադրվել են «Իմ անկախ հայրենիքը 25 տարեկան է» խորագրով մրցույթի պաստառների, նկարների և լուսանկարների էլեկտրոնային տարբերակները, ապահովվել է առցանց քվեարկության հնարավորություն:
- ✓ Մշակվել է ԳՊՀ լրագրողների ակումբի <http://journalist.gsu.am/> կայքը: Կայքն իրենից ներկայացնում է պորտալ, որն ունի սահմանափակ մուտքի հասանելիություն, թույլ է տալիս օգտատետերին հրապարակել նորություններ, հարցազրույցներ, ինչպես նաև տրամադրում է առցանց հաղորդագրությունների փոխանակման հնարավորություն:
- ✓ Ամբողջությամբ խմբագրվել է www.student.gsu.am ուսանողական կայքը, մշակվել են Ուսանողական խորհրդի էջերը:
- ✓ Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի հետ համատեղ մշակվել է ԳՊՀ պաշտոնական մոբայլ Android «GSU Mobile» հավելվածը: Հավելվածը հնարավորություն է տալիս մոբայլ պատՖորմի (հարթակի) միջոցով ծանոթանալ համալսարանական նորություններին, հայտարարություններին, դասացուցակներին, ժամանակացույցերին, ինչպես նաև օգտվել այլ էլեկտրոնային ռեսուրսներից:
- ✓ Բացվել է տիրույթ Google Play Market-ում, որտեղ տեղադրվել է «GSU Mobile» հավելվածը, ինչպես նաև մշակվել և հրապարակվել է հավելվածի երկլեզու նկարագրությունը (<https://play.google.com/store/apps/details?id=com.gsu.haykdanoyan.gavarstateuniversity&hl=en>):
- ✓ Մշակվել և հրապարակվել են «GSU Mobile» հավելվածը ներկայացնող տեսանյութ և ցուցապաստառ (<https://www.youtube.com/watch?v=qo77xoB65ZE>):
- ✓ Մշակվել է ԳՊՀ պաշտոնական կայքի՝ Եվրոպական միության «Erasmus +» <http://gsu.am/index.php?go=erasmusplus>) էջը: «Tempus.Govern» (<http://gsu.am/index.php?go=govern>) և «Tempus.Veritas» (<http://gsu.am/index.php?go=veritas>) էջերում տեղադրվել են նորությունների հղումներ, վերապատրաստումների շնորհանդեսներ և այլ էլեկտրոնային ֆայլեր:
- ✓ Կատարվել են ԳՊՀ պաշտոնական կայքում հայտարարությունների, լուսանկարների և էջերի օպերատիվ թարմացումներ, տեղադրվել են դասացուցակները, պարբերաբար հրապարակվել են քննաշրջանների ժամանակացույցերը, «Գնումներ» (<http://gsu.am/?go=menu57n>) էջում մշտապես հրապարակվել են գնումների վերաբերյալ հայտարարությունները:

- ✓ Կատարվել են տեսանյութերի ֆայլերի ձևաչափերի ձևափոխություններ և տեղադրում ԳՊՀ պաշտոնական Youtube տեսահարթակում (համալրվել է 11 տեսանյութ), (<https://www.youtube.com/user/gsuadmin/featured>):
- ✓ Կազմակերպվել են ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի էլեկտրոնային էկրանին ցուցադրվող նյութերի համակարգչային մշակումներ և թարմացումներ, ապահովվել է պաշտոնական հանդիպումների, միջոցառումների համակարգչային սպասարկում:
- ✓ Կազմակերպվել են Եվրոպական Միության «TEMPUS.HEN-GEAR» ծրագրի շրջանակներում էլեկտրոնային հարթակում շրջանավարտների գրանցման վերաբերյալ սեմինար-խորհրդատվություններ, ապահովվել են առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսանողների խորհրդատվության տրամադրման և հաշվառման գործընթացները (սպասարկվել է շուրջ 400 ուսանող):
- ✓ «TEMPUS.HEN-GEAR» ծրագրի շրջանակում շրջանավարտների տվյալների բազայում վարչական տվյալների մուտքագրման գործընթացի կազմակերպման նպատակով համապատասխան համակարգը տեղադրվել է սերվերի վրա, կատարվել են սերվերի ծրագրային ապահովման և ցանցի կարգաբերման աշխատանքներ, մշակվել է վերոնշյալ գործընթացի կազմակերպման ընթացակարգ, բաժնի աշխատանքներում կամավոր հիմունքներով ներգրավված ուսանողի անմիջական մասնակցությամբ ապահովվել է վարչական տվյալների մուտքագրումը, ինչպես նաև կազմակերպվել է մուտքագրված վարչական տվյալների ամբողջացման և վավերացման գործընթացը:
- ✓ Մշակվել է «E-Learning. GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի նոր տարբերակը: Այս տարբերակում փոփոխվել է դիզայնը, գլխավոր էջում ավելացվել են մի շարք բաժիններ: Ավելացվել են նոր ֆունկցիոնալ հնարավորություններ՝ դասախոսի կողմից փաթեթի նոր բաժինների ավելացում, առաջադրանքներ հանձնարարում, առցանց թեստերի կազմում, հարցումների մշակում և այլն:
- ✓ «E-Learning. GSU» համակարգում ինտեգրվել է BigBlue Button տեսակոնֆերանսի համակարգը, որը հնարավորություն է տալիս առցանց տեսադաս և քննարկում իրականացնել:
- ✓ Իրականացվել են «E-Learning. GSU» համակարգի՝ սերվերային համակարգչից «elearning.gsuam.com» հոսթինգային առցանց տիրույթ տեղափոխման, տեղակայման, կարգաբերման աշխատանքները՝ համակարգի հուսալի անվտանգության, ինչպես նաև մշտական հասանելիության մակարդակի բարձրացման նպատակով:
- ✓ «E-Learning. GSU» համակարգում ստեղծվել է հետադարձ կապի նոր ենթահամակարգ, որը թույլ է տալիս օգտատերերի կողմից անմիջապես առցանց տիրույթում ուղարկել հարցումներ, առաջարկություններ և ստանալ պատասխաններ:
- ✓ Մշակվել և հրապարակվել են «E-Learning. GSU» համակարգի դասախոսի և ուսանողի տեսաուղեցույցերի նոր տարբերակները:
- ✓ Ներդրվել է «elearning.gsuam.com» դոմեյնով էլեկտրոնային փոստերի ծառայություն, որն անվճար հիմունքներով տրամադրվում է ուսանողներին: Հայտագրումն իրականացվում է առցանց ռեժիմում: Ներկայումս գործում է նշված ծառայությամբ 30 էլ. փոստ:

- ✓ Կազմակերպվել է 2015-2016 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի «E-Learning. GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Ըստ ուսումնական պլանների՝ «E-Learning. GSU» համակարգում համալրվել են խմբերի, դասախոսների անվանական և առարկաների ուսուցման տիրույթները, տպված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկները:
- ✓ Կազմակերպվել է 2016թ. ուսումնական տարվա հեռակա ուսուցման ֆակուլտետում «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Բոլոր խմբերի համար ստեղծվել են «Ուսանող» օգտատերի անվանական և խմբի վիրտուալ տիրույթները: Տեղադրվել են բոլոր խմբերի ուսումնական պլանները, ուսանողների ցանկերը: Համակարգի միջավայրում ստեղծվել են առարկայական ուսուցման փաթեթներ: Տպված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկները:
- ✓ Շարունակական բնույթ է կրել «E-Learning. GSU» համակարգի վերաբերյալ դասախոսներին և ուսանողներին խորհրդատվությունների տրամադրումը, առարկաների փաթեթների խմբագրման գործում աջակցության ապահովումը:
- ✓ Մշակվել է համակարգի առարկաների տիրույթների բովանդակության ստուգման և մշտադիտարկման ընթացակարգ: Պարբերաբար ստուգվել են ըստ խմբերի առարկայական տիրույթներում դասախոսությունների առկայությունը, արդյունքների մասին պարբերաբար տեղեկացվել է ամբիոններին, և տրամադրվել են հաշվետվություններ:
- ✓ «Examination-GSU» համակարգի միջոցով նախապատրաստվել և կազմակերպվել են միջանկյալ և ամփոփիչ քննություններ: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 13 թեստային քննություն, համալրվել է առարկաների 9 նոր թեստերի բազա:
- ✓ Իրականացվել է «Office365» էլեկտրոնային փոստերի ծառայությունների համակարգի սպասարկում:
- ✓ Կազմակերպվել են համացանցի հասանելիության, ցանցի կառավարման «MikroTik» համակարգի սպասարկման և մշտադիտարկման աշխատանքները:
- ✓ Իրականացվել են համակարգչային գույքի տեղաբաշխման, ծրագրային ապահովումների տեղադրման, գույքագրման աշխատանքները:
- ✓ Կատարվել է համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում, խորհրդատվությունների տրամադրում:
- ✓ Իրականացվել է տպիչների սպասարկում՝ լիցքավորում, վերանորոգում:
- ✓ Քննարկվել և մշակվել են համակարգչային գույքի գնումների ցուցակները:

ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2016-2017 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները

- ✓ Web տեխնոլոգիական ժամանակակից լուծումներով ԳՊՀ պաշտոնական www.gsu.am կայքի նոր տարբերակի նախագծում և մշակում, կայքի «CMS» ադմինիստրատորի բովանդակության կառավարման համակարգերի կատարելագործում:

- ✓ ԳՀՊ միջազգային համագործակցության ենթադրմենային կայքի նախագծում և մշակում:
- ✓ ԳՀՊ բոլոր կայքերի և տեղեկատվական համակարգերի՝ www.gsu.am, www.student.gsu.am, www.career.gsu.am, www.elearning.gsu.am, www.library.gsu.am, www.phone.gsu.am սպասարկում, անզլերեն և ռուսերեն էջերի պարբերական համալրումներ, ԳՀՊ «Youtube» տեսահարթակի համալրում և սպասարկում:
- ✓ ԳՀՊ մոբայլ հավելվածի զարգացում:
- ✓ «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացի պարբերաբար իրականացում (ուսումնական պլանների հիման վրա թարմացումների, փոփոխությունների կազմակերպում):
- ✓ «Examination. GSU» համակարգով քննությունների նախապատրաստում և կազմակերպում:
- ✓ «TEMPUS.Govern» ծրագրի շրջանակում համալսարանում «Էլեկտրոնային դեկանատ», «Koha Էլեկտրոնային գրադարան» տեղեկատվական համակարգերի ներդրման, գործարկման, կիրառման, սպասարկման աշխատանքներին աջակցություն:
- ✓ «Office 365» փաթեթի ծառայությունների նոր տարբերակի ներդրում, պրոֆեսորադասախոսական և ուսանողական անձնակազմի բոլոր անդամներին էլեկտրոնային փոստերի տրամադրում «gsu.am» դոմենային հասցեով:
- ✓ Սերվերային կենտրոնի հիմնում, սերվերների գործարկում և սպասարկում:
- ✓ Համացանցի կապի տրամադրման, համակարգչային ցանցի, բաժանորդային համակարգիչների ծրագրային և տեխնիկական սպասարկման, վերահսկման աշխատանքների իրականացում:
- ✓ Համակարգչային լսարանների մշտադիտարկման, պարբերաբար ծրագրային վերազինման, դասաբաշխման աշխատանքների կազմակերպում:
- ✓ Նորացվող համակարգչային գույքի տեղադրման, համակարգչային լսարանների գույքի վերաբաշխման աշխատանքների իրականացում:
- ✓ Համակարգչային գույքի գույքագրման, համարակալման, կնիքման, տեխնիկական անձնագրերի կազմման, տվյալների բազայի հավաքագրման աշխատանքների կազմակերպում:

**Թվային տվյալներ www.gsu.am կայքի այցելությունների վերաբերյալ
(ըստ HotLog.ru ծառայության)**

Ամիս	Այցելություններ (2013-2014)	Դիտումներ (2013-2014)	Այցելություններ (2014-2015)	Դիտումներ (2014-2015)	Այցելություններ (2015-2016)	Դիտումներ (2015-2016)
Սեպտեմբեր	7232	28285	3268	29931	3685	24403
Հոկտեմբեր	5456	19287	2614	20636	2686	14272
Նոյեմբեր	4915	16448	2361	17061	2273	11818

Դեկտեմբեր	4537	16188	2421	16112	2453	10767
Հունվար	7457	28314	3774	30217	3699	23614
Փետրվար	6342	20528	4054	24390	3464	18288
Մարտ	4739	14218	2943	16334	3147	16916
Ապրիլ	4565	14154	2758	15679	2710	14881
Մայիս	5222	18206	2748	18157	2713	16236
Հունիս	6551	21998	3179	21028	3460	21269
Հուլիս	2830	10160	1678	9057	1774	8716
Օգոստոս	2544	8941	1987	11854	2239	12217

«E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման վերաբերյալ տվյալներ

«E-Learning. GSU» տիրույթ	Ժամանակահատվածը			
	31.08.2013թ.	31.08.2014թ.	31.09.2015թ.	31.09.2016թ.
«Ուսանող» օգտատերի անվանական տիրույթ	99	150	156	162
«Դասախոս» օգտատերի անվանական տիրույթ	150	163	176	179
«Առարկա» ուսուցման փաթեթների տիրույթ	842	1960	2191	2300

«E-Learning. GSU» համակարգի ուղեցույցերի դիտումներ

	(31.08.2013-31.08.2014թթ.)	(01.09.2014-31.08.2015թթ.)	(01.09.2015-31.08.2016թթ.)
Դասախոսի տեսաուղեցույց	395	104	186
Ուսանողի տեսաուղեցույց	1156	1044	286

**Վ. Կ. Ավերիսյան՝
ԳՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ**

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով շարունակում է նախորդ տարիներից ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության ծրագրերի իրականացումը համալսարանի աշխատողների և ուսանողների համար:

Համալսարանի աշխատակիցների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով արհեստակցական կազմակերպության և համալսարանի ռեկտորի միջև կնքվել է համալսարանի կոլեկտիվ պայմանագիր:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի արհեստակցական կազմակերպությունն ուշադրություն է դարձրել համալսարանի աշխատակիցների և ուսանողների սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ձեռնարկների իրականացմանը: Այդ նպատակով արհեստակցական կազմակերպությունը իր միջոցներից օգնության կարգով համալսարանի աշխատակիցներին հատկացրել է 1 միլիոն 871 հազար դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը և ուսանողական խորհուրդը դասախոսների և բուհի վարչական աշխատակազմի հետ միասին իրականացրել են ուսանողական կյանքի ակտիվացմանը, ուսանողների սոցիալ-մշակութային, ինտելեկտուալ զարգացմանը ուղղված ծրագրեր:

2016 թվականի գարնանը կազմակերպվել են ֆակուլտետային սպորտային միջոցառումներ, ինչպես նաև համալսարանի մինի ֆուտբոլի և ձեռքի գնդակի առաջնություններ:

ԳՀՊ արհեստակցական կազմակերպությունը շարունակում է ակտիվ համագործակցությունը ՀՀ պետական բուհերի արհկոմիտեների հետ:

Արհեստակցական կազմակերպությունը իր կանոնադրական գործառույթներին համապատասխան այսուհետ ևս հետամուտ կլինի համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին աջակցության ցուցաբերմանը, իր առջև դրված խնդիրների պատշաճ լուծմանը:

**Լ. Գ. Սիրունյան՝
ԳՊՀ արհեստակցական կազմակերպության
նախագահ**

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2016-2017 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի ուսանողական ինքնակառավարման մարմինները՝ Ուսանողական խորհուրդը և Ուսանողական գիտական ընկերությունը, համակարգել են ուսանողների համար իրականացվող ծրագրերը, նպաստել ուսանողների ընդհանուր ախարհայացքային, ստեղծագործական և մասնագիտական զարգացմանը, կազմակերպել են ուսուցողական, ճանաչողական և դաստիարակչական ուղղվածություն ունեցող բազմաթիվ միջոցառումներ, ուսանողական ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, բաց դասեր, գրական-գեղարվեստական ցերեկույթներ, սպորտային և ինտելեկտուալ միջոցառումներ, բանավեճեր, ակտիվորեն համագործակցել ՀՀ այլ բուհերի ուսանողական կառույցների, դպրոցների, քոլեջների և այլ կազմակերպությունների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը հանդես են եկել հետևյալ նախաձեռնություններով.

- 2015թ. սեպտեմբերին կազմակերպվել է ճանաչողական հանդիպում ԳՊՀ ֆակուլտետների առաջին կուրսեցիների հետ: Նրանց ծանոթացրել են ԳՊՀ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության գործունեության առաքելությանը և նպատակներին:
- 2015թ. սեպտեմբերի 27-ին ԳՊՀ ուսանողները մասնակցություն են ունեցել Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում Մյուռնոօրհների արարողակարգին:
- 2015թ. հոկտեմբերի 14-ին կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված առաջին կուրսեցիներին, «ԲԱՐԵՎ, ԵՍ ԵՄ» խորագրով, որը նպատակ էր հետապնդում ծանոթացնել ուսանողներին համալսարանական կյանքի հետ, և նրանց ներգրավել ուսանողական խորհրդի գործունեության մեջ:
- 2015թ. հոկտեմբերի 10-18-ը ԳՊՀ ուսանողները մասնակցել են Երևանում և Դիլիջանում կազմակերպված «Էկոտուրիզմի հիմնախնդիրներն ու զարգացման միտումները» ծրագրին:
- 2015թ. հոկտեմբերի 27-ին ԳՊՀ ՈւԽ-ի և ՀԵՀ Գեղարքունիքի մարզային կենտրոնի նախաձեռնությամբ ԳՊՀ-ի ուսանողուհիները Գավառի մանկատան 15 սաների համար անցկացրել են անզլերեն լեզվի դասընթացներ:
- 2015թ. հոկտեմբերի 28-ին ԳՊՀ-ում մեկնարկել է սեղանի թենիսի մրցաշարը:
- 2015թ. հոկտեմբերի 28-30-ը Վրաստանի Հանրապետության Դավիթ Տվիլիդիանիի անվան պետական բժշկական համալսարանում ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահը մասնակցել է ԵՄ «TEMPUS. PACT» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովին:

- 2015թ. նոյեմբերի 16-17-ը ԳՊՀ ուսանողները մասնակցություն են ունեցել Ծաղկաձոր քաղաքում կայացած «Բարեվարքության ամրապնդում բարձրագույն ուսումնական համակարգում» խորագրով համաժողովին:
- 2015թ. նոյեմբերի 18-23-ը ԳՊՀ ուսանողները մասնակցել են Երևանի պետական համալսարանում կայացած «Երիտասարդների մասնակցությունը ուսանողական ինքնակառավարման գործընթացում» խորագիրը կրող երկրորդ համաժողովին:
- 2015թ. նոյեմբերի 21-ին տնտեսագիտական ֆակուլտետի աջակցությամբ կազմակերպել է սեմինար-քննարկում՝ նվիրված Եվրասիական տնտեսական միությանը, Հայաստանի Հանրապետության անդամակցության հեռանկարներին:
- 2015թ. նոյեմբերի 27-ից 29-ը ԳՊՀ ուսանողները մասնակցություն են ունեցել ՀՀ Սփյուռքի նախարարության կազմակերպած համահայկական երկրորդ երիտասարդական համաժողովին՝ «Ապագա» խորագրով:
- 2015թ. դեկտեմբերի 2-ին կազմակերպվել է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ծրագրերի շնորհանդես:
- 2015թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպվել է սեղանի թենիսի քաղաքային առաջնություն:
- 2015թ. դեկտեմբերի 16-ին ԳՊՀ ուսանողական գիտական ընկերությանը կից գործող Ստեղծագործողների ակումբը կազմակերպել է «27-ամյա խավարն ու ներկան» խորագիրը կրող հուշ-ցերեկույթ՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի 27-րդ տարելիցին:
- 2015թ. դեկտեմբերի 17-ին կազմակերպել է հուշ-ցերեկույթ՝ նվիրված ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 88-ամյակին: Ցերեկույթի ընթացքում անցկացվել են 2014-2015 ուստարվա մրցանակաբաշխություններ՝ «Լավագույն ուսանող» և «Լավագույն կուրս» անվանակարգերում:
- 2016թ. մարտի 6-ին, ՈՒԳԸ տարեկան համալսարանական գիտաժողովին ընդառաջ, կազմակերպել է սեմինար՝ «Ինչպե՞ս գրել գիտական հոդված» թեմայով:
- 2016թ. մարտի 13-ին ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել է սեմինար-քննարկում՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի զբոսաշրջային ներուժի և դրա օգտագործման արդի հիմնախնդիրների վերլուծությունը» թեմայով:
- 2016թ. մարտի 19-ին կայացել է ՈՒԽ-ի կողմից կազմակերպված «Եղի՛ր առողջ երիտասարդ» խորագիրը կրող սպորտային միջոցառումը՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ քաղաքների ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:
- 2016թ. մարտի 26-ին ուսանողական խորհրդի հետ համատեղ ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպվել է Սուրբ Զատիկի տոնակատարություն:
- 2016թ. ապրիլի 1-ին կազմակերպվել է սեմինար-քննարկում «Բուհ-Գործատու համագործակցությունը՝ ժամանակի պահանջ» խորագրով:

- 2016թ. ապրիլի 3-ից կազմակերպվել է դրամի և իրերի հավաքագրում՝ Արցախի զինվորներին և բնակչությանը ուղարկելու նպատակով:
- 2016թ. ապրիլի 9-ին կայացել է ուսանողական ֆակուլտետային գիտաժողով ԳՀՈ բնագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության և Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի համատեղ ջանքերով:
- 2016թ. ապրիլի 9-ին անցկացվել է «Առաջին բուժօգնություն հրազենային վնասվածքների դեպքում» թեմայով սեմինար:
- 2016թ. ապրիլի 21-ին Գավառի ավագ դպրոցում կազմակերպել է սեմինար՝ «Ֆորում թատոն» թեմայով:
- 2016թ. ապրիլի 22-ին կազմակերպվել է սեմինար՝ «Գրչի և տեսախցիկի զորությունը» թեմայով՝ նվիրված հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հիմնախնդիրների լուսաբանման հարցերին:
- 2016թ. ապրիլի 27-ին ԳՀՈ ուսանողները մասնակցել են ԵՊՀ տարեկան հանրապետական ուսանողական գիտաժողովին:
- 2016թ. ապրիլի 28-ին կազմակերպել է Հայոց Մեծ Եղեռնի 101-րդ տարելիցին նվիրված ցերեկույթ՝ «Անցյալի մեկ գարուն» խորագրով:
- 2016թ. ապրիլի 29-ին ԳՀՈ բակում հիմնվել է Ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված պուրակ:
- 2016թ. մայիսի 5 կազմակերպվել է միջոցառում՝ «Անկախության ծնունդ, ի՛մ ԳՀՈ» խորագրով:
- 2016թ. մայիսի 6-ին Գավառի քաղաքային գրադարանում, ԳՀՈ ուսանողական գիտական ընկերության և գրադարանի աշխատակիցների նախաձեռնությամբ կազմակերպվել է հանդիպում Երկրապահ Կամավորականների Միության Գավառի տարածքային բաժանմունքի անդամների հետ:
- 2016թ. մայիսի 7-ին Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել է սեմինար-քննարկում «Հայ-իրանական հարաբերությունների զարգացման նախադրյալներն ու հեռանկարները» թեմայով:
- 2016թ. մայիսի 8-ից ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության հետ համագործակցության շրջանակներում կազմակերպել է «Հոետորական արվեստի գաղտնիքները» խորագրով դասընթաց:
- 2016թ. մայիսի 11-ին կայացել է ուսանողական ներբուհական գիտաժողով՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին: Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվել են չորս մասնագիտական բաժանմունքներում:
- 2016թ. մայիսի 13 կազմակերպվել է ցերեկույթ՝ նվիրված Մայիսյան եռատոնին:
- 2016թ. մայիսի 26-ին կազմակերպվել է Գարեգին Նժդեհի հիշատակին նվիրված ցերեկույթ:
- 2016թ. մայիսի 28-ին Գավառի պետական համալսարանում ամփոփվել են ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված պաստառների մրցույթի արդյունքները: Հաղթողները պարգևատրվել են:

- 2016թ. մայիսին ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության և Զինիշյան հիշատակի հիմնադրամի համատեղ ջանքերով կազմակերպվել են ֆակուլտետային և միջֆակուլտետային բանավեճեր:

- 2016թ. հուլիսի 5-ին կայացել է ԳՊՀ շրջանավարտների 19-րդ սերնդին դիպլոմների շնորհման հանդիսավոր արարողությունը, որի կազմակերպմանն ակտիվորեն մասնակցել են ՈւԽ անդամները:

- 2016թ. օգոստոսի 15-21-ը ԳՊՀ-ն ներկայացնող ջոկատը մասնակցել է «Բազե» համահայկական երիտասարդական հավաքի ներճակատային «Բռեյն-Ռինգ» մրցույթին և զբաղեցրել 3-րդ տեղը: Ջոկատը արժանացել է նաև 2 արծաթե մեդալների՝ Վոլեյբոլ և Ֆուտբոլ մարզաձևերում տարած հաղթանակի համար:

2016-2017 ուսումնական տարում ԳՊՀ ինքնակառավարման մարմինները ծրագրել են կազմակերպել.

- Ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովներ, բազմաբնույթ ցերեկույթներ, ուսուցողական և դաստիարակչական միջոցառումներ.

- Բանավեճեր, դերային խաղեր, սեմինարներ, ֆիլմերի դիտում-քննարկումներ, գրական քննարկումներ.

- Ինտելեկտուալ խաղեր, մրցույթներ.

- Գիտաճանաչողական էքսկուրսիաներ.

- Այցելություններ դպրոցներ և քոլեջներ: Աշխատանք դիմորդների հետ.

- Հանդիպումներ ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցականների, մանկատան և հատուկ դպրոցի սաների հետ.

- Համագործակցություն ՀՀ այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:

Ա. Ս. Մինանյան՝

ԳՊՀ Ուսանողական խորհրդի նախագահ,

Ն. Ա. Միրիբյան՝

ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության

նախագահ

ԳՊՀ ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2016-2017 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՈՒՆՆԵՐԸ

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի Զարգացման հայեցակարգի համաձայն՝ Համալսարանի հիմնական նպատակն է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը և կրթության որակի բարձրացումը, ինչը պահանջում է բուհի նյութատեխնիկական ռեսուրսների շարունակական համալրում, լաբորատոր բազայի արդիականացում, ուսումնական տարածքի բարեկարգում, գրադարանային-տեղեկատվական անհրաժեշտ պաշարների ապահովում:

Համալսարանը սովորողների կրթական կարիքների բավարարման և ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման համար ունի անհրաժեշտ տարածքներ: Ուսումնական գործունեությունը ծավալվում է Համալսարանի 3 մասնաշենքերում:

Գավառի պետական համալսարանի տնտեսատեխնիկական անձնակազմը հաշվետու՝ 2015-2016 ուսումնական տարում գործունեություն է իրականացրել Համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների, տեխնիկական, անվտանգության ապահովման, տնտեսական, սպասարկման և այլ ուղղություններով:

Համալսարանի տնտեսատեխնիկական անձնակազմը աշխատում է հետևյալ բաժիններում.

✓ **տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին** (տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրերի, համակարգերի, համակարգչային տեխնիկայի շահագործման և սպասարկման մասնագետներ և այլն),

✓ **տեխնիկական և անվտանգության ապահովման բաժին** (ճարտարագետ, էլեկտրիկ, հյուսն, ատաղձագործ, հնոցապաններ, սանտեխնիկ, բուժքույր և այլն),

✓ **տնտեսատեխնիկական բաժին** (պահեստապետ, գնորդ, պարետներ, տնտեսուհիներ, բանվոր),

✓ **սպասարկման բաժին** (հսկիչներ, վարորդներ):

2015թ. սեպտեմբերին հաստատվեց Համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանը, որը ներառում էր 2015-2016 ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների ժամանակացույցը: Ըստ պլանի՝ կազմակերպվել է ավելի քան 12 աշխատանքային հանդիպում տնտեսատեխնիկական աշխատակիցների հետ, քննարկվել են աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները, ծագած խնդիրները, դրանց օպերատիվ լուծման միջոցները, ինչպես նաև պատասխանատվության և կատարվող աշխատանքների որակի բարձրացման խնդիրները:

2015-2016 ուսումնական տարվա ընթացքում բոլոր աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսման միջոցներ: Բազմաթիվ աշխատակիցներ դրամական աջակցություն են ստացել նաև ԳՊՀ արհմիությունից՝ բուժման, հանգստի կազմակերպման և այլ նպատակներով:

Համալսարանի նյութական ռեսուրսները և դրանց բարելավումը հաշվետու ժամանակահատվածում, գնումների կազմակերպումը.

Ուսումնագիտական գործընթացն անխափան ապահովելու նպատակով անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով ապահովվել են Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները՝ համաձայն ԳՊՀ գնումների պլանի:

Հաշվետու ժամանակաշրջանում էապես բարելավվել է Համալսարանի նյութատեխնիկական բազան: Սահմանված կարգով ձեռք են բերվել գրենական պիտույքներ, ԳՊՀ գրադարանը համալրվել է նոր գրքերով:

Գավառի պետական համալսարանի Եվրոպական Միության Տեմպուս «Ռեթիինք», «Լիագուա» և այլ ծրագրերով համալրվել է Համալսարանի համակարգչային սարքավորումների բազան, նորագույն բոլորը մեկում համակարգիչներով ապահովվել են Համալսարանի բոլոր դեկանատները, ամբիոնները և այլ ստորաբաժանումներ:

Ձեռք են բերվել համակարգչային համալրող սարքեր, պահեստամասեր, տպիչներ, գրատախտակներ, մարզական գույք, ուսումնասօժանդակ նյութեր: Գնվել է նաև շինանյութ, տնտեսական ապրանքներ:

Հիմնական միջոցների՝ մասնաշենքերի հիմնանորոգումներ և հարակից տարածքների բարեկարգումը հաշվետու ժամանակահատվածում.

Հետևողական աշխատանքներ են իրականացվել շենքերի ու շինությունների վերանորոգման ուղղությամբ:

Ավարտվել են ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի նորաբաց բնագիտության լաբորատորիայում ստացվել են քիմիայի, աշխարհագրության և ֆիզիկայի լաբորատոր սարքավորումներ և նյութեր:

Ներքին հարդարման մասնակի աշխատանքներ են կատարվել ԳՊՀ բոլոր մասնաշենքերում:

Հիմնանորոգվել են Համալսարանի ուսանողական խորհրդի, կադրերի բաժնի աշխատասենյակները, ինչպես նաև բացվել է Գավառի պետական համալսարանի Տուրիզմի կենտրոն՝ համալրվելով անհրաժեշտ համակարգչային տեխնիկայով և սարքավորումներով:

Հիմնանորոգվել է ԳՊՀ տնտեսագիտական և բանասիրական ֆակուլտետների երկու լսարան:

Մասնակի վերանորոգվել են Համալսարանի գլխավոր, բնագիտական և հումանիտար մասնագիտությունների մասնաշենքերի տանիքները:

Աշխատանքներ են կատարվել Համալսարանի կանաչ տարածքներում ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման ուղղությամբ:

Սպասարկման աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում.

ԳՊՀ տրանսպորտային միջոցներով իրականացվել են ուղերթներ, միաժամանակ, ուսանողների ուսումնասարտադրական պրակտիկայի, գիտաճանաչողական էքսկուրսիաների կազմակերպման, ռազմահայրենասիրական և մշակութային միջոցառումների, ինչպես նաև արտասահմանյան հյուրերի սպասարկման և գիտաժողովների կազմակերպման համար օգտագործվել են այլ կազմակերպություններից վարձված տրանսպորտային միջոցները:

ԳՊՀ մասնաշենքերում ամենօրյա աշխատանքներ են կատարվել սանիտարական մաքրության պահպանման առումով: Հետևողական աշխատանքների արդյունքում սանիտարական մաքրության վիճակը Համալսարանի մասնաշենքերում հասցվել է պատշաճ մակարդակի:

Համալսարանի տնտեսատեխնիկական ծառայությունների ուժերով իրականացվել են նաև մասնաշենքերի ջեռուցման ցանցերի և ջրագծերի մասնակի վերանորոգումներ, վերանորոգվել են բազմաթիվ հանգույցներ՝ ինչպես ջեռուցման, այնպես էլ ջրամատակարարման ցանցերում:

Համալսարանի կաթսայատան միջոցով ջեռուցվում են բոլոր մասնաշենքերը, այդ թվում՝ հանրակացարանը: Ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ են կատարվել բոլոր մասնաշենքերում և կաթսայատանը:

Կատարվել են մեծ ծավալի աշխատանքներ Համալսարանի էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումն ապահովելու համար, միջոցներ են ձեռնարկվել մասնաշենքերում՝ լսարաններում, լաբորատորիաներում ու միջանցքներում նորմալ լուսավորություն ապահովելու և լաբորատոր դասընթացների անցկացման համար անհրաժեշտ սարքերն աշխատանքային բնականոն վիճակում պահելու նպատակով:

Համալսարանի բոլոր մասնաշենքերում տեղադրվել են անլար համացանցի WiFi ապահովման սարքավորումներ: Գործել են նաև «Վիվասել» և «Յուքում» ընկերությունների անվճար տրամադրած WiFi անկյունները:

2016-2017 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի տնտեսատեխնիկական գործունեության հիմնական ուղղություններն են.

1. Համալսարանի գլխավոր մասնաշենքում հիմնանորոգել առնվազն 200 հոգանոց նոր դահլիճ, որը զինված կլինի տեղեկատվական նորագույն տեխնալոգիաներով:
2. Համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում բացել համակարգչային լսարան:
3. Հիմնանորոգել և կահավորել Համալսարանի առնվազն 4 լսարան:
4. Օգտագործել արտաքին հնարավորությունները՝ Համալսարանի մարզական բացօթյա բազայի վերանորոգման համար:
5. Վերանորոգել և գործարկել ԳՊՀ ջերմոցը:
6. Ապահովել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորում՝ այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նոր կրթական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ ընձեռող տեխնիկայով ու սարքավորումներով:
7. Մշակել ու գործարկել Համալսարանի եռալեզու համացանցային կայքէջի նոր տարբերակը:
8. Զարգացնել Համալսարանի տեխնոլոգիական կարողությունները, ապահովել հեռաուսուցման լսարանների համալսարանական ցանցի ստեղծման, շարունակական ընդլայնման և տեխնիկական կատարելագործման գործընթաց՝ հեռաուսուցման կազմակերպման համար:

Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ և դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու միջոցով հնարավորություն ստեղծել կատարելու լայնածավալ աշխատանքներ.

1. Հիմնանորոգել համալսարանի գրադարանները և ընթերցասրահները:
2. Պահպանության ծառայության աշխատանքների արդյունավետության բարձրացման և տեսահսկման ցանցի ընդլայնման նպատակով Համալսարանի բոլոր մասնաշենքերը և հարակից տարածքները հսկել տեսախցիկներով:

3. Կազմակերպել գործող կաթսայատան արդիականացման փուլային գործընթացը՝ նպատակ ունենալով խնայողական նոր ջրատաքացուցիչ կաթսաների տեղադրումը:

4. Բարենորոգել և արդիականացնել Համալսարանի բոլոր ֆակուլտետների լսարանները:

5. Բարեկարգման և կահավորման աշխատանքներ իրականացնել Համալսարանի հանրակացարանում:

6. Առողջ ապրելակերպի մշակույթի արմատավորման նպատակով Համալսարանի կենտրոնական մասնաշենքում կառուցել ժամանակակից մարզագույքով ապահովված մարզասրահ:

Նախատեսված ռազմավարական խնդիրների լուծումը հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել կրթական գործընթացը, ապահովել անհրաժեշտ կրթական միջավայր Համալսարանի բոլոր մասնաշենքերում և ստորաբաժանումներում:

**Ա. Հ. Ապրոյան՝
ԳՀՊ Կենտրոնական գծով պրոռեկտոր**

**2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ**

01.09.2015թ. ԲԱՐԻ ԳԱԼՈ՛ՒՍ, 23-ՐԴ ՍԵՐՈՒՆԴ

Սեպտեմբերմեկյան տոնական տրամադրությունը վաղ առավոտից թևածում էր ԳՊՀ-ում:

Բուիում կազմակերպվել էր տոնական միջոցառում՝ նվիրված Գիտելիքի, գրի և դպրության օրվան, համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական համակազմի մասնակցությամբ:

Տոնական միջոցառմանը հաջորդեց բուհի ուսանողների համար կազմակերպված հայրենասիրության և արիության դասը, որը վարեց Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Պողոս Պողոսյանը:

**02.09.2015թ. ԵՄ «ՏԵՄՊՈՒՍ» ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Օգոստոսի 29-ից 30-ը Հանրային քաղաքականության ինստիտուտի նախաձեռնությամբ Դիլիջանում տեղի ունեցավ «Հայաստանում և Վրաստանում Եվրոպական Միության «Տեմպուս» ծրագրերի որակական ազդեցությունը» խորագրով աշխատաժողով, որին մասնակցեցին ԳՊՀ Ակադեմիական քաղաքականության վարչության մեթոդիստներ Լիլիթ Թոռչյանը և Կարինե Մարուխյանը:

ԳՊՀ պատվիրակները ներկայացրին բուհի ձեռքբերումները 15 միջազգային ծրագրերի իրականացման համատեքստում:

19.09.2015թ. «ՄՅՈՒՌՈՆ». ՍՐԲԱԼՈՒՅՍ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ...

ԳՊՀ ուսանողներին հյուրընկալվել էր Գավառի հոգևոր հովիվ Տեր Գնելը:

Հանդիպման նպատակն էր ուսանողներին ներկայացնելու Սրբալույս Մյուռնի պատրաստման կարգը:

Ներկաները դիտեցին Մյուռնի մասին կարճ տեսաֆիլմ, որին հաջորդեց հետաքրքիր և ուսուցողական հարցուպատասխան:

**23.09.2015թ. ԵՄ «TEMPUS-ATHENA» ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ**

Ս. թ. սեպտեմբերի 15-ից 17-ը Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS-ATHENA» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովը:

Ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում բուհական ինքնավարությունը և կայունությունը ապահովող օրենսդրական, վարչական, կազմակերպական փոփոխությունների խրախուսմանը, համապատասխան ճանապարհային քարտեզի մշակմանը և առաջարկմանը:

ԳՊՀ-ից աշխատաժողովին մասնակցեցին բուհի ղեկավար Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը:

25.09.2015թ. ԱՎԱՆԴՈՒՅԹԻՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ . . .

ԳՊՀ-ում ձևավորված ավանդույթի համաձայն՝ ներկայացվեց հերթական շնորհանդես հաշվետվությունը՝ ԳՊՀ միջազգային ծրագրերի շրջանակում եվրոպական առաջատար բուհերում համալսարանի ուսանողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ:

ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտության բաժնի ուսանողներ Ռադիկ Սարուխանյանը և Նարեկ Ենոքյանը բովանդակալից շնորհանդեսների և տեսանյութերի միջոցով ներկայացրին Լեհաստանի Ադամ Միսկևիչի անվան Պոզնանի համալսարանում ԵՄ «ERASMUS MUNDUS. EUROEAST» ծրագրի շրջանակում 10 ամիս ժամկետով ուսումնառության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն՝ մասնավորապես, անդրադառնալով սովյալ բուհի հիմնադրման պատմությանը, կրթական համակարգի առանձնահատկություններին, առկա կրթական ծրագրերին, ուսումնասիրած առարկայացանկին, անցած պրակտիկաներին, սեփական նախաձեռնությամբ կազմակերպված արտալսարանային միջոցառումներին և ակցիաներին, եվրոպական մի շարք պատմամշակութային վայրեր կատարած էքսկուրսիաներին:

30.09.2015թ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կազմակերպվել էր խորհրդաժողով՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաները կրթության ոլորտում» խորագրով, որին մասնակցեց նաև ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:

Խորհրդաժողովին ներկայացվեցին Եվրոպական Միության «Tempus» 12 ծրագրերը, որոնցից 6-ին /Hen Gear, Pact, Veritas, Ararat, Athena, Picasa/ անդամակցում է նաև Գավառի պետական համալսարանը:

30.09.2015թ. ԿԱՏԱՐՎԵՑ

3-ՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԵՐՐՈՐԴ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆԵՔԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ա.Օ.Տ.Տ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի ձեռամբ կատարվեց Հայ առաքելական եկեղեցու տոնացույցում առաձնակի կարևորվող եկեղեցական ծիսակարգ՝ Սրբալույս Մյուռոնի օրհնության արարողություն:

Հիշյալ նվիրական իրադարձությանը Հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի երիտասարդական թևի հետ միասին մասնակցեցին նաև ԳՊՀ դասախոսներ և ուսանողներ:

01.10.2015թ. ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ԵՄ «TEMPUS. HEN-GEAR» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Եվրոպական Միության «TEMPUS. HEN-GEAR - Բարձրագույն կրթության ցանցը՝ Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների աշխատունակության համար» ծրագրի շրջանակում Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ հերթական աշխատանքային հանդիպումը:

Քննարկվեցին և պարզաբանվեցին ծրագրի վերաբերյալ մի շարք հարցեր, որին հաջորդեց հետագա անելիքների հստակեցումը: Հանդիպմանը մասնակցեցին նաև ԳՊՀ ներկայացուցիչները:

01.10.2015թ. ԸՆՏՐՎԵՑ ԳՊՀ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմնի ընտրական հանձնաժողովի կողմից, կազմակերպվեց Ուես նախագահի ընտրություն: Բուհի առկա ուսուցման ֆակուլտետների բոլոր կուրսերի ավագները և ֆակուլտետային Ուես անդամները փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրեցին ուսանողական խորհրդի ղեկավար:

Ուես նախագահի պաշտոնում ձայների գերակշիռ մեծամասնությամբ ընտրվեց Տնտեսագիտական ֆակուլտետի Ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման բաժնի 4-րդ կուրսի ուսանող Արեգ Սինանյանը:

08.10.2015թ. ԶԱՐԳԱՑՆԵԼՈՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՀՀ Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի և ֆակուլտետի դասախոս Համիկ Մարգարյանի նախաձեռնությամբ բուհի Հաշվապահական հաշվառման, Ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման բաժինների ուսանողների համար կազմակերպվել էր մեկօրյա արտադրական պրակտիկա Արենիի գինու գործարանում:

Ուսանողները մեծ հետաքրքրությամբ շրջեցին Սինոնյան ընտանիքի ջանքերով 23 տարի առաջ հիմնադրված գործարանում, ծանոթացան կազմակերպության անցած տարիների ֆինանսական պատմությանը՝ որպես Հայաստանում փոքր բիզնեսի հաջողված օրինակ:

**09.10.2015թ. «ԵՐԲԵՔ ՄԻ ԴԱԴԱՐԵՔ ՍՈՎՈՐԵԼ,
ՔԱՆԶԻ ԿՅԱՆՔԸ ԵՐԲԵՔ ԶԻ ԴԱԴԱՐՈՒՄ ԴԱՍԵՐ ՏԱԼ»**

Ս. թ. հոկտեմբերի 3-ից 8-ը տեղի ունեցավ աշխատաժողով՝ Եվրոպական Միության «TEMPUS.LeAGUe-Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրի հրավերով և ֆինանսավորմամբ:

Աշխատաժողովին ներկայացվեց ԳՀՀ-ի փորձը երեք ոչ ֆորմալ կրթական ծրագրի իրականացման՝ «Մարդու իրավունքների», «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքների» և «Անգլերենի» ուսուցման ոլորտում:

**10.10.2015թ. «ԱՄԵՐԻԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ - 2015»-Ը
ԳՊՀ-ՈՒՄ**

Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան աջակցությամբ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին անցկացվում է «Ամերիկյան մշակութային շրջագայություն-2015» միջոցառումների շարքը, որի շրջանակում Հայաստանի տարբեր քաղաքներում կազմակերպվում են համերգային ծրագրեր, պարային բեմադրություններ և ֆիլմի դիտումներ: Նախաձեռնությունից անմասն չմնաց ԳՀՀ-ն:

Ուսանողներին ցուցադրվեցին «Ինչպես անցնել (Ջիլիզից Ջիլիզ)» (ռեժիսորներ՝ Սոնա և

Մարինե Քոչարյաններ), «Իմ տնից սկսվող հայրենիքը» (Ավետիս Ավետիսյան), «Գեղեցիկ մարդիկ» (Արամ Կիրակոսյան), «Քանդելով պատերը» (Լուսինե Խանգելյան), «Հիշողություններ» (Մերի Սարգսյան) կարճամետրաժ ֆիլմերը, որին հաջորդեց ակտիվ քննարկում:

14.10.2015թ. ԲԱՐԵՎ, Ե՛Ս ԵՄ...

ԳՀՀ-ի 23-ամյա պատմության ընթացքում բուհում ձևավորվել են բազում գեղեցիկ և հետաքրքիր ավանդույթներ: Դրանց շարքում կարելի է հիշատակել «Բարի գալուստ, սիրելի՛ առաջին կուրսեցիներ» խորագիրը կրող միջոցառումը:

2015-2016 ուստարում առաջին կուրսեցիները կազմակերպեցին «Բարև, ե՛ս եմ...» ցերեկույթը:

Բոլոր ֆակուլտետների առաջին կուրսեցիներից յուրաքանչյուրը ներկայանալու հետաքրքիր և յուրօրինակ տարբերակ էր ընտրել: Իրենց գեղեցիկ կատարումներով՝ ազգային ոգեշնչող երգ ու պարերով, հոգեթով բանաստեղծություններով, դաշնամուրի և քանոնի անզուգական նվագակցությամբ, ուսանողները մեծ բավականություն և ժպիտներ պարզեցին ներկաներին՝ փոխարենն արժանանալով բուռն ծափողջույնների:

**16.10.2015թ. ԳՊՀ-ՈւՄ ՄԵԿՆԱՐԿԱԾ
ԵՄ «ERASMUS +» ԾՐԱԳՐԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ**

ԳՊՀ-ն անդամակցում է Եվրոպական Միության 15 միջազգային ծրագրերի, որոնց շրջանակում բուհում պարբերաբար կազմակերպվում են տեղեկատվական օրեր:

ԳՊՀ պրոռեկտոր պարոն Արսեն Ապրոյանի կողմից ներկայացվեց հերթական շնորհանդեսը բուհի նոր՝ Եվրոպական Միության «Էրասմուս +» միջազգային փոխանակման ծրագրի վերաբերյալ:

**16.10.2015թ. ԵՎՐՈՊԱՆ ՍԿՍՎՈՒՄ Է
ԳՊՀ-ԻՑ**

Ներկայվեց շնորհանդես հաշվետվություն ԳՊՀ միջազգային ծրագրերի շրջանակում Եվրոպական առաջատար բուհերում համալսարանի ուսանողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ:

ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի Հաշվապահական հաշվառման բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Գևորգ Սարգսյանը և Բնագիտական ֆակուլտետի Սերվիսի բաժնի 3-րդ կուրսի ուսանող Շիրազ Սարգսյանը հետաքրքիր և բովանդակալից շնորհանդեսների ու տեսանյութերի միջոցով լսարանին ներկայացրին համապատասխանաբար Իսպանիայի Թագավորության Ալիկանտեի և Լա Կոռունայի համալսարաններում 10-ից 23 ամիս ժամկետներով ուսումնառության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, խոսեցին տվյալ բուհի պատմության, գործող ֆակուլտետների, կրթական համակարգի առանձնահատկությունների, առկա կրթական ծրագրերի, ուսումնասիրած դասընթացների, ուսումնառությանը զուգահեռ կազմակերպված պրակտիկաների և պատմամշակութային վայրեր այցելությունների մասին:

**28.10.2015թ. ԳՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ
ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՄՐՑԱՇԱՐԸ**

ԳՊՀ մարզադահլիճում անցկացվեց արդեն ավանդական դարձած սեղանի թենիսի համահամալսարանական ամենամյա մրցաշարը:

Խաղը կազմակերպվել էր ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի 4-րդ կուրսի ուսանող Գառնիկ Թոռչյանի նախաձեռնությամբ և բուհի ուսանողական խորհրդի աջակցությամբ:

**29.10.2015թ. ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «TEMPUS. HEN-GEAR» ԾՐԱԳՐԻ
ԱՄՓՈՓԻՉ ԱՇԽԱՏԱԺՈՂՎԸ**

Երեք տարի շարունակ Հայաստանի Հանրապետության ութ բուհեր, այդ թվում՝ Գավառի պետական համալսարանը, ՀՀ կրթության և գիտության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությունը անդամակցում են Եվրոպական Միության «TEMPUS. HEN-GEAR – Բարձրագույն կրթական ցանց՝ ուղղված Հայաստանում մարդկային կապիտալի գնահատմանն ու շրջանավարտների աշխատունակությանը» ծրագրին: Երևանում կայացավ ծրագրի աշխատաժողովը, որին մասնակցեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը:

01.11.2015թ. ԱՎԱՐՏՎԵՑ ԵՄ «TEMPUS. PACT» ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի Հանրապետության Դավիթ Տվիղիանիի անվան պետական բժշկական համալսարանում Եվրոպական Միության «TEMPUS. PACT - Project Actors Capacity Training

in Caucasus – Կովկասյան տարածաշրջանում գիտական ներուժի (գիտահետազոտական նախագծերի մասնակիցների) վերապատրաստում» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ ամփոփիչ աշխատաժողովը:

ԳՊՀ-ն ներկայացնում էին բուհի վարչատնտեսական գծով պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, Ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի մասնագետ Մարիամ Նախրատյանը, միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը, Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Անահիտ Մարգարյանը, լաբորանտ Մարինե Հովհաննիսյանը, Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Նոնա Մուրադյանը, Ուսանողական խորհրդի նախագահ Արեգ Սինանյանը:

**04.11.2015թ. ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԵՍԱՆԵԼԻ ԱՂՈԹՔ.
ԱՐԺԵՎՈՐԵԼՈՎ ՈՒՆԵՑԱԾԸ. . .**

Կարևորելով երիտասարդների հոգևոր-մշակութային դաստիարակությունը՝ ԳՊՀ-ն սերտորեն համագործակցում է Հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի, Գևորգյան ճեմարանի և Վազգենյան դպրանոցի հետ:

Համագործակցության շրջանակում ԳՊՀ-ում կայացավ հետաքրքիր և ուսանելի բաց դասախոսություն: Թեման «Հայկական մշակույթը և հայ-ռուսական մանրանկարչությունն» էր, իսկ դասախոսը՝ Բարեշնորի Գևորգ Վահան սարկավագ Գևորգյանը:

**08.11.2015թ. ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «TEMPUS. ARMENQA» ԾՐԱԳՐԻ
Յ-ՐԴ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ**

Գերմանիայի Հանրապետության Օսնաբրուկի բարձրագույն դպրոց-կիրառական գիտությունների համալսարանում տեղի ունեցավ ԵՄ «TEMPUS. ARMENQA – Ազգային և սեկտորիալ որակավորումների շրջանակների իրականացում Հայաստանում (ճանաչում ազգային և միջազգային աշխատանքային շուկայում)» ծրագրի երրորդ աշխատաժողովը:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և Ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը:

**11.11.2015թ. ԵՄ՝ «TEMPUS. RETHINK» ԾՐԱԳՐԻ
ՇԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ ԳՊՀ-ՈՒՄ**

ԳՊՀ-ն հյուրընկալել էր Եվրոպական Միության «TEMPUS. RETHINK – Կրթության բարեփոխում՝ գիտելիքների միջազգային փոխանակման միջոցով» ծրագրի գործընկերներին՝ կազմակերպելով ծրագրի հերթական աշխատաժողովը:

Ժամանել էին պատվիրակություններ Պորտուգալիայի, Իսպանիայի, Գերմանիայի, Ուկրաինայի, Բելոռուսի, Մոլդովայի և Վրաստանի բուհերից: Բոլորը նշեցին ԳՊՀ-ում կազմակերպված աշխատաժողովի արդյունավետությունը:

**18.11.2015թ. ԲՈՒՀԵՐՈՒՄ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ**

Ծաղկաձոր քաղաքում կայացավ «Բարեվարքության ամրապնդում բարձրագույն ուսումնական համակարգում» խորագրով համաժողով, որի աշխատանքներին մասնակցեցին ԳՊՀ բանասիրական և տնտեսագիտական ֆակուլտետների դեկաններ Թաթուլ Ասոյանը և Սամվել Ամիրխանյանը, Ուսանողական խորհրդի նախագահ Արեգ Սինանյանը:

Գավառի պետական համալսարանի պատվիրակները բարձրաձայնեցին բուհի հակակոռուպցիոն փորձի մասին՝ նշելով, որ ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը ներկայացվել է ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային հարթակներում:

18.11.2015թ. «Մի՛ շտապիր, չէ՛ որ քեզ սպասում են տանը»

Բնագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ և ֆակուլտետի դեկանատի աջակցությամբ բուհում կազմակերպվել էր ճանապարհային երթևեկության կանոններին նվիրված սեմինար-քննարկում:

Ավագ սերնդի ներկայացուցիչները երիտասարդներին խորհուրդ տվեցին իմանալ սեփական իրավունքներն ու պարտականությունները, լինել հնարավորինս հանդուրժող և հիշել, որ «Մեր կյանքը մեր իսկ ձեռքերում է»:

21.11.2015թ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԵՌԱԳԱԳԱԹ ՊՈՆԶԻԱՅԻ ՇՆՉՈՎ

ԳՊՀ Բանասիրական ֆակուլտետի նախաձեռնությամբ պարբերաբար կազմակերպվում են գրական ցերեկոյթներ՝ նվիրված հայ գրականությանը: Այսօր ապագա բանասերների ուսումնասիրության կենտրոնում էր խորհրդահայ պոեզիան, մասնավորապես, Հովհաննես Շիրազի, Համո Սահյանի և Պարույր Սևակի անցած ստեղծագործական ուղին ու սերունդներին ժառանգած գրական հարուստ ժառանգությունը:

Ուսանողներն ասմունքեցին Շիրազ-Սահյան-Սևակ վարպետների բանաստեղծական գոհարներից, կատարեցին նրանց խոսքերով գրված երգեր:

21.11.2015թ. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների և դեկանատի համատեղ ջանքերով կազմակերպվել էր սեմինար-քննարկում՝ նվիրված Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հեռանկարներին:

Հանդիպման ընթացքում ԳՊՀ դասախոս-փորձագետները ներկայացրին սեփական դիտարկումները քննարկվող հարցի վերաբերյալ՝ անդրադառնալով ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցության առավելություններին և բացթողումներին: Ծավալվեց հետաքրքիր քննարկում:

22.11.2015թ. ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԲՈՒՀԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՊՀ ՓՈՐՁԸ

Երևանի պետական համալսարանում «TEMPUS. PICASA - Բուհերի միջազգայնացման խթանում արևելյան հարևանության երկրներում՝ մշակութային և կառուցվածքային փոփոխությունների միջոցով» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ աշխատաժողով՝ «Բարձրագույն կրթության ոլորտում միջազգայնացման փորձի փոխանակում» խորագրով:

Շնորհանդեսով հանդես եկավ նաև ԳՊՀ պատվիրակությունը՝ ներկայացնելով միջազգայնացման որորտում բուհի արձանագրած հաջողությունները:

25.11.2015թ. ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ Արեգ Սինանյանը մասնակցեց Երևանի պետական համալսարանում կայացած «Երիտասարդների մասնակցությունը ուսանողական ինքնակառավարման գործընթացում» խորագիրը կրող երկրորդ համաժողովին:

ԳՊՀ ՌԻԽ նախագահ Արեգ Սինանյանը ներկայացրեց շնորհանդես բուհի ուսանողական խորհրդի գործառույթների, իրականացրած և պլանավորված ծրագրերի, ուսանողների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ:

28.11.2015թ. ՄԵՆՔ ՀԱՎԵՐԺ ԵՆՔ ՄԵՐ ԼԵՌՆԵՐԻ ՊԵՍ

Հայոց ծիրանափողի թախծոտ հնչյունների ներքո մեկնարկեց Բանասիրական ֆակուլտետի ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպված ցերեկույթը՝ նվիրված հայ ֆիդայական շարժմանը:

Ցերեկույթը կազմակերպվել էր Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում:

Ուսանողները ներկայացրին ֆիդայական շարժման սկզբնավորումը, ինքնապաշտպանական մարտերի ընթացքը, անդրադարձան քաջորդիներ Աղբյուր Սերոբի, Գևորգ Չաուշի, Անդրանիկ Զորավարի, Արաբոյի, Հրայր Դժոխքի և այլոց փառավոր կենսագրություններին:

29.11.2015թ. ԿԱՅԱՑԱՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Ս. թ. նոյեմբերի 27-ից 28-ը կայացավ երիտասարդական համահայկական երկրորդ համաժողովը՝ «Ապագա» խորագրով:

Համաժողովը կազմակերպվել էր ՀՀ սփյուռքի նախարարության, Ռուսաստանի հայերի միության, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության և Նիժնի Նովգորոդի «Իմաստ» երիտասարդական ընկերակցության կողմից:

Համաժողովին Գավառի պետական համալսարանից մասնակցեցին բուհի ուսանողական խորհրդի նախագահ Արեգ Սինանյանը և Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանող Գագիկ Համբարձումյանը:

02.12.2015թ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

ԳՊՀ Ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի /ՀԵՀ/ Գեղարքունիքի մարզային կենտրոնի համագործակցության արդյունքում պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ, սեմինար-քննարկումներ, իրականացվում տարաբնույթ ծրագրեր:

ԳՊՀ-ում անցկացվեցին տարբեր մարզաձևերում մրցաշարեր, որոնց մասնակցեցին Գեղարքունիքի մարզի տարբեր համայնքներ ներկայացնող երիտասարդներ:

02.12.2015թ. ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐ ԵՄ «TEMPUS. VERITAS» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ս. թ. նոյեմբերի 14-ից 29-ը Եվրոպական Միության «Tempus. Veritas - Զայցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում» ծրագրի շրջանակում գործընկերների համար կազմակերպվել էր ճանաչողական այց դեպի եվրոպական առաջատար բուհեր:

ԳՊՀ-ից շրջայցերին մասնակցեցին բուհի Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Հրաչյա Զաքոյանը և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը:

10.12.2015թ. ԿԱՐԵՎՈՐԵԼՈՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԸ

ԳՊՀ մարզադահլիճում պարբերաբար կազմակերպվում են սեղանի թենիսի մրցաշարեր:

Խաղը կազմակերպվել էր ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի 4-րդ կուրսի ուսանող Գառնիկ Թոռչյանի նախաձեռնությամբ և բուհի ուսանողական խորհրդի աջակցությամբ:

16.12.2015թ. 27-ԱՄՅԱ ԽԱՎԱՐՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

1988 թվական... Դեկտեմբերի 7... 11:41 րոպե... Ճակատագրական ակնթարթներ, որոնք մի քանի վայրկյանում կաթվածահար արեցին մի ողջ ժողովուրդ:

ԳՎՀ Ուսանողական գիտական ընկերությանը կից գործող Ստեղծագործողների ակումբի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հուշ-ցերեկույթ՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի 27-րդ տարելիցին:

16.12.2015թ. ԲՈՒՀԱԿԱՆ ՕՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳՎՀ-ն հյուրընկալել էր Գանձակի թիվ երկու միջնակարգ դպրոցի ավարտական դասարանի աշակերտներին՝ դպրոց-բուհ կապի ամրապնդման ծրագրի շրջանակում:

Բուհի և դպրոցի միջև նախապես ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ աշակերտների համար մշակվել էր հատուկ ծրագիր, որի շրջանակում բուհի Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը վարեց դաս՝ մասնագիտության ճիշտ ընտրության վերաբերյալ:

17.12.2015թ. ՀՐԱՆՏ ՀԱԿՈՐՅԱՆ. ՃԱՄՓՈՐԴ ԴԱՐԵՐԻ

«Դարերով հաստատված ճշմարտություն է, որ նշանավոր մարդիկ իրենց ազգանվեր գործունեությամբ, իրենց մարդկային առաքինի նկարագրով կարևորագույն դերակատարում են ունենում ներկա ու գալիք սերունդների դաստիարակության և կրթության գործում: Այդպիսին էր երջանկահիշատակ Հրանտ Խաչատուրի Հակոբյանը»,- ահա այս տողերով ազդարարվեց փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ, Երևանի պետական համալսարանի կրոնի պատմության և տեսության ամբիոնի հիմնադիր վարիչ, ԳՎՀ հիմնադիր ռեկտոր, Գավառի պատվավոր քաղաքացի Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 88-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթի մեկնարկը:

Ուսանողները երախտագիտությամբ ներկայացրին մեծ հայրորդու անցած ուղին՝ մասնավորապես, անդրադառնալով նրա գիտական և մանկավարժական գործունեությանը:

18.12.2015թ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

ԳՎՀ Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատի և առաջին կուրսի ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված ամենազոր, գեղեցիկ ու բուժիչ արվեստին:

Ընթերցվեցին Գաբրիել Գաբրիա Մարկեսի հրաժեշտի և Չարլի Չապլինի՝ դստերը հասցեագրված նամակները: Առաջին կուրսեցիները միաձայն փաստեցին, որ արվեստի հոգին անկեղծությունն է:

25.12.2015թ. ԳՎՀ ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄ՝

«ԻՐԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ, ՀԱՋՈՂՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԽՈՐԱԳՐՈՎ

ԳՎՀ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի և ուսանողական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կազմակերպվել էր գեղեցիկ և բազմաբովանդակ միջոցառում՝ նվիրված ամենասպասված և հեքիաթային տոնին՝ Ամանորին:

ԳՎՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանը վերածվել էր հեռուստատեսային յուրօրինակ տաղավարի. եթերում էր «Իրական մարդիկ, հաջողված պատմություններ» ամանորյա հաղորդումը:

29.01.2016թ. ՎԵՐՆԱՏԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

«Մեկն ապրում է, մյուսն սպասում, թասդ բեր...»,- լցնելով հայոց կենարար գինու բաժակները՝ միջոցառման հաղորդավարներ, Հեռակա ուսուցման ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողներ Սիրուշ Սարգսյանը և Հովհաննես Օհանյանը ողջունեցին ցերեկույթի մասնակիցներին:

Մասնակիցները նշեցին, որ «Վերնատան» առաջին հանդիպումը նվիրված է հիշյալ արժեքներից բարձրագույնին՝ Հայրենիքին ու հայրենասիրությանը, մասնավորապես, Հայաստանի անկախության 25 և մեծ հայրենասեր, ազգային ազատագրական շարժման գործիչ, հայ ժողովրդի արժանավոր զավակ Գարեգին Նժդեհի ծննդյան 130-ամյակներին:

11.02.2016թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում ամփոփվեցին «Լավագույն ուսանող-2015» հանրապետական մրցույթի արդյունքները: Մրցույթին մասնակցել են Հայաստանի գրեթե բոլոր բուհերում սովորող բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողները: Մրցանակների արժանացած 39 հաղթողներից երեքը ԳՊՀ-ի ուսանողներ են:

Հայագիտության ոլորտում 2-րդ կարգի մրցանակի արժանացավ ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Նունե Միրիբյանը:

Հումանիտար գիտությունների ոլորտում ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Ավետիսյանը ստացավ 3-րդ կարգի մրցանակ:

Բնագիտական ոլորտի 3-րդ կարգի մրցանակի արժանացավ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Մեդիկո Շահինյանը:

16.02.2016թ. ԿԱՅԱՑԱՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «PACT» ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

2016 թվականի փետրվարի 10-15-ը Վրաստանի Հանրապետության Դավիթ Տվիլդիանիի անվան պետական բժշկական համալսարանի կողմից համակարգվող Եվրոպական Միության «TEMPUS. PACT - Project Actors Capacity Training in Caucasus – Կովկասյան տարածաշրջանում գիտական ներուժի (գիտահետազոտական նախագծերի մասնակիցների) վերապատրաստում» ծրագրի շրջանակում Լեհաստանի Հանրապետության Սոցիալական գիտությունների ակադեմիայում (ք. Լոդզ) տեղի ունեցավ ծրագրի աշխատանքային ամփոփիչ հանդիպումը:

Աշխատաժողովին մասնակցեց ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, ով ներկայացրեց շնորհանդես ծրագրի երկու տարիների ընթացքում Գավառի պետական համալսարանում իրականացված գործողությունների, ձեռքբերումների և հետագա ծրագրերի վերաբերալ:

20.2.2016թ. ԳՊՀ-Ն՝ ԵՄ «ERASMUS+DOCMEN» ԾՐԱԳՐԻ ԱՆԴԱՄ

Լեհաստանի Հանրապետության Կրակով քաղաքի տեխնոլոգիաների համալսարանում կայացավ ծրագրի «ERASMUS+DOCMEN» մեկնարկային աշխատաժողովը:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին ծրագրի հիմնական նպատակները, խնդիրները, իրագործման սկզբունքները, կառուցակարգերն ու ժամկետները, բյուջեն, աշխատանքային փաթեթները, քննարկվեցին կազմակերպական հարցեր:

Աշխատաժողովին մասնակցեցին ԳՊՀ ներկայացուցիչներ:

06.03.2016թ. ԶԱՐԳԱՑՆԵՆՔ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ...

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել էր սեմինար «Ինչպե՞ս գրել գիտական հոդված» թեմայով:

Սեմինարի ընթացքում ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Մելսիդա Թովմայանը և Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 1-ին կուրսի ուսանող Կորյուն Սարգսյանը ներկայացրին գիտական հոդված գրելու կարգը, սկզբունքները, մեթոդները և համապատասխան աղբյուրներից օգտվելու կանոնները:

09.03.2016թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Տնտեսագիտական ֆակուլտետում ձևավորված գեղեցիկ ավանդույթի համաձայն՝ գարնանային օրը մեկնարկեց ուսանողուհիներին և աշխատակցուհիներին ծաղիկներ և քաղցրավենիք նվիրելով:

«Ջերմորեն շնորհավորում եմ բոլոր տատիկներին, մայրերին և քույրերին գարնանային հրաշալի տոնի՝ մարտի 8-ի, ինչպես նաև մայրության ու գեղեցկության միամսյակի մեկնարկի առթիվ, մաղթում քաջ առողջություն, հաջողություններ ու նորանոր ձեռքբերումներ»,- բարեմաղթեց պարոն Ամիրխանյանը և ուսանողներին ուղեկցեց լսարաններ:

12.03.2016թ. ՄԱՅՐՆ ՈՒ ԳԱՐՈՒՆԸ

ԳՊՀ-ում կայացավ «Մայրն ու գարունը» խորագիրը կրող ցերեկույթը, որը կազմակերպել էին Բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի անդամները:

Միջոցառման սկզբում ներկայացվեցին Կանանց միջազգային տոնի առաջացման պատմությունը և տարբեր երկրներում այն նշելու առանձնահատկությունները, ապա անդրադարձ կատարվեց ընտանիքում և հասարակության մեջ կանանց դերակատարությանը, և իհարկե, կնոջ աստվածընծա առաքելությանը՝ մայրանալու հրաշքին:

13.03.2016թ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի և Երևանի պետական համալսարանների ուսանողական գիտական ընկերությունների նախաձեռնությամբ ԳՊՀ-ում կայացավ սեմինար-քննարկում՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի զբոսաշրջային ներուժի և դրա օգտագործման արդի հիմնախնդիրների վերլուծությունը» թեմայով:

ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի 1-ին կուրսի ուսանող Գարիկ Ներսիսյանը, նույն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհիներ Թամարա Շանոյանը և Զարուհի Ղամարյանը անդրադարձան զբոսաշրջությանը, որպես մարզի տնտեսության զարգացման կարևոր գործոն և ներկայացրին մարզում զբոսաշրջության զարգացման խոչընդոտները:

18.03.2016թ. ՄԵԾ ՄԱՐԴ, ԱՆՁՆՎԵՐ ՀԱՅ՝ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ

Ֆրանկոֆոնիային նվիրված երկամսյակի շրջանակում ԳՊՀ Բանասիրական ֆակուլտետի ղեկանատի և ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել էր միջոցառում՝ «Մեծ մարդու և անձնվեր հայի կերպարը. Շառլ Ազնավուր» խորագրով: Միջոցառման նպատակն էր ներկայացնել համաշխարհային հռչակ վայելող հայորդու՝ Շառլ Ազնավուրի կերպարը, նրա մարդասիրությունն ու հայրենասիրությունը:

19.03.2016թ. ՀԱՄԱԽՄԲԵԼՈՎ ՄԱՐԶԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԳՊՀ-ում կայացավ բուհի ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված «Եղի՛ր առողջ երիտասարդ» խորագիրը կրող սպորտային միջոցառումը:

Միջոցառումն իրականացվեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Մրցաշարին մասնակցում էին Գավառի պետական համալսարանի, Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան գյուղատնտեսական քոլեջի, Սևանի, Վարդենիսի, Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջների և Ճաբարակի թիմերը:

**26.03.2016թ. ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ**

ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներն ավանդույթի համաձայն Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցում մասնակցեցին Սուրբ Հարության տոնի նախօրեին մատուցվող ճրագալույցի պատարագին:

Այս տարի ևս Սուրբ Զատիկի տոնն ուսանողները պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ միասին նշեցին համալսարանական մեծ ընտանիքում: Միջոցառումը հազեցած էր Սուրբ Զատիկի տոնի խորհուրդը կրող երգերով, պարերով և ասմունքներով:

**31.03.2016թ. ԿԱՅԱՑԵԼ Է ԵՄ «ՏԵՄՊՈՒՍ ԱՐԱՐԱՏ» ԾՐԱԳՐԻ
ԱՄՓՈՓԻՉ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կայացավ Եվրոպական Միության «ՏԵՄՊՈՒՍ ԱՐԱՐԱՏ-Համալսարան-գործատու հայկական համակարգող գործակալություն» ծրագրի ամփոփիչ համաժողովը:

Համաժողովին մասնակցեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, Ակադեմիական քաղաքականության վարչության աշխատակից, Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի պատասխանատու Լիլիթ Թոռչյանը և ԳՊՀ դասախոս, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարագդատ Ավետիսյանը:

**03.04.2016թ.-10.04.2016թ.
ՕԳՆԵՆՔ ԱՐՑԱԽԻՆ**

Արցախում սանձազերծված Ապրիլյան Քառօրյա պատերազմի հետ կապված ԳՊՀ Ուես-ն ձեռնարկեց «Օգնենք Արցախին» ակցիան, որի շրջանակներում կազմակերպվեց դրամահավաք, ինչպես նաև տաք հագուստի, դեղորայքի, սննդի, առաջին անհարաժեշտության պարագաների հավաք: ԳՊՀ ռեկտորատի որոշմամբ բուհի կարիքների համար ձեռք բերված 250մ ապակին և հանրակացարանի համար նախատեսված ծածկոցները ուղարկվեց Արցախի Մարտակերտի շրջան՝ ռմբակոծությունից տուժած դպրոցների և այլ շենքերի ապակիները նորոգելու նպատակով:

Բուհի ուսանողները գրեցին և Արցախի առաջնագիծ ուղարկեցին բազմաթիվ նամակներ՝ «Նամակ հայրենիքիս պաշտպանին» խորագրով:

03.04.2016թ. ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՄԱՆՐԵՆԵՐՆ ԱՄԵՆՈՒՐԵՔ» ԽՈՐԱԳՐՈՎ

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետում կազմակերպվել էր ուսանողական գիտաժողով՝ «Մանրէներն ամենուրեք» խորագրով, նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին:

Զեկուցումներն ուղեկցվեցին բովանդակալից շնորհանդեսներով:

**06.04.2016թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «ԵՂԻՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ»
ՄՐՑՈՒՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ**

ԳՊՀ Խաղաղության կորպուսի կամավոր Փոլ Ուիթնի և միջազգային ծրագրերի գծով որակի ապահովման մասնագետ Սիրանուշ Խաչատրյանի նախաձեռնությամբ ԳՊՀ ուսանողները մասնակցեցին «Եղի՛ր ստեղծագործ» շարադրությունների մրցույթին:

Մրցույթի համալսարանական փուլին մասնակցած ԳՊՀ 21 ուսանողներից հաղթեցին հինգ ուսանողներ, որոնց շարադրությունները ուղարկվեցին Երևան՝ մասնակցելու հանրապետական փուլին:

Մրցույթի հանրապետական փուլի ամփոփման արդյունքում ԳՊՀ Անգլերեն լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհիներ Լիանա Ստեփանյանը և Լիլիթ Յավրյանը զբաղեցրին համապատասխանաբար առաջին և երկրորդ մրցանակային տեղերը՝ չորրորդ կուրսի ուսանողների, իսկ Սերինե Պիպոյանը զբաղեցրեց առաջին տեղը՝ երրորդ կուրսի ուսանողների շարքում:

**09.04.2016թ. ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳԵՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՋԵՆԱՅԻՆ ՎՆԱՍՎԱԾՆՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ**

ԳՊՀ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ անցկացվեց «Առաջին բուժօգնություն հրագենային վնասվածքների դեպքում» թեմայով սեմինար, որը վարում էր ԳՊՀ դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիտ Մարգարյանը:

Սեմինարին մասնակցում էին ԳՊՀ տարբեր բաժինների և կուրսերի ուսանողներ, ինչպես նաև Գավառի Գեորգի Մնացականյանի անվան թիվ յոթ միջնակարգ դպրոցի աշակերտներ:

09.04.2016թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության և Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի համատեղ ջանքերով անցկացվեց ուսանողական գիտաժողով:

Բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի 4-րդ կուրսի ուսանողները ներկայացրին իրենց զեկուցումները:

13.04.2016թ. ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵՄԻՆԱՐ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ սեմինար-քննարկում ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՄԻԱՎ-ՁԻԱՀ) վերաբերյալ:

Սեմինարը նախաձեռնել էր «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան գրասենյակը, որը ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացնում է «Սոցիալական արձագանքն աշխատանքային միգրացիային, սփյուռքի բաղադրիչ» ծրագիրը՝ միտված Հայաստանի Հանրապետության Լոռի, Տավուշ, Շիրակ և Գեղարքունիք մարզերի համայնքների զարգացման գործին սփյուռքի ներկայացուցիչների ներգրավմանը:

**21.04.2016թ. ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ
ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ**

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ բնագիտությաննոր լաբորատորիայի բացման հանդիսավոր արարողությունը: Լաբորատորիան հիմնադրվեց Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ:

Նորաբաց լաբորատորիայում առկա են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարագրության գերժամանակակից սարքավորումներ, որոնք հնարավորություն են տալիս կատարելու ինչպես ցուցադրական, այնպես էլ բարդ հետազոտական փորձեր:

22.4.2016թ. ԳՊՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐԵՐԻՆ

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի Բնագիտության լաբորատորիան հյուրընկալել էր Գավառի թիվ 5 դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներին և ուսուցչուհի Իրանուհի Խաչիկյանին:

Աշակերտները կենսաբանություն առարկայի գործնական դասընթաց անցկացրին լաբորատորիայում: Մինչ գործնական պարապմունքին անցնելը, ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մարտին Ավագյանը բնապահպանական հիմնահարցերի վերաբերյալ դասախոսություն կարդաց աշակերտների համար:

23.04.2016թ. ԳՐԶԻ ԵՎ ՏԵՍԱԽՑԻԿԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել էր սեմինար՝ «Գրչի և տեսախցիկի գորությունը» թեմայով, նվիրված հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հիմնախնդիրների լուսաբանման հարցերին:

Սեմինարը վարեց «Ունիսոն» հասարակական կազմակերպության հանրային կապերի ղեկավար Մարինա Չալիկյանը՝ հիմնական շեշտը դնելով զբաղվածության միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավման հիմնահարցերի և դրանց լուսաբանման վրա:

23.04.2016թ. ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՊՈՒՐԱԿ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ի բակում հիմնվեց Արցախում ապրիլյան Քառօրյա պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված պուրակ:

Ավանդույթի համաձայն՝ յուրաքանչյուր զարնանանմուտին Համալսարանի բակն հարստանում է նոր տնկիներով, սակայն ուսանողների հավաստմամբ այս պուրակն առանձնահատուկ նշանակություն և խորհուրդ ունի: Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ միացել էին նաև ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ:

23.04.2016թ. ՎԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԳՊՀ Բանասիրական ֆակուլտետի Անգլերեն լեզու և գրականություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողների և ԳՊՀ դասախոս Աննա Բալագոզյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր միջոցառում՝ «Շեքսպիրի հետքերով» (“To the trace of W. Shakespeare”) խորագրով:

Միջոցառման ընթացքում ներկայացվեց Շեքսպիրի կյանքն ու ստեղծագործական ուղին, ինչպես նաև նրա լավագույն սոնետները հնչեցին անգլերեն և հայերեն լեզուներով:

28.04.2016թ. ԱՆՑՅԱԼԻ ՄԵԿ ԳԱՐՈՒՆ

ԳՊՀ Հրայր Աճառյանի անվան լսարանում ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել էր Հայոց Մեծ Եղեռնի 101-րդ տարելիցին նվիրված ցերեկույթ՝ «Անցյալի մեկ գարուն» խորագրով:

ԳՊՀ ուսանողները ևս մեկ անգամ դատապարտեցին ոճրագործներին և փաստեցին, որ թեև հայ ժողովուրդը եղեռնազարկ է եղել, սակայն անհնար է նրան ծնկի բերել. հայը շարունակում է ապրել ու արարել:

30.04.2016թ. ԲԱՑ ԴԱՍ՝

ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԾԱԳՄԱՆԸ

ԳՊՀ Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողների և ԳՊՀ դասախոս Վարսիկ Ներսիսյանի նախաձեռնությամբ կազմակերպվել

էր հայոց լեզվի ծագմանը նվիրված բաց դաս՝ «Սրբոց թարգմանչաց» տոնին նվիրված միջոցառումների շրջանակում:

**30.4.2016 ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ
ԱՆԿԱԽ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՄԱՐԶԵՐՈՎ**

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետում անկացվեց «Ճանապարհորդություն անկախ հայրենիքիս մարզերով» խորագիրը կրող ուսանողական գիտաժողով՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին: Գիտաժողովը կազմակերպել էին Սերվիս, Քարտեզագրություն և կադաստրային գործ բաժինների ուսանողները:

Ձեկուցողները ներկայացրին Գեղարքունիքի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Վայոց Ձորի, Շիրակի մարզերում գտնվող բնական ու պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև անդրադարձ կատարվեց յուրաքանչյուր մարզին բնորոշ ավանդույթներին, սովորույթներին:

**30.04.2016թ. ԲԱՑ ԴԱՍ՝ ՆՎԻՐՎԱԾ
ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ**

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետում կազմակերպվել էր ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված բաց դաս՝ «Հայաստանը 20-21-րդ դարերի սահմանագծին, մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով:

Դասի նպատակն էր ուսանողներին ներկայացնել 20-21-րդ դարերի սահմանագծին հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած բեկումնային իրադարձությունները, դրանց հաղթահարման ուղիները և ապագայի տեսլականը:

**05.05.2016թ. ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ,
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴ ԻՄ ԳՊՀ**

ԳՊՀ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել էր միջոցառում՝ «Անկախության ծնունդ իմ ԳՊՀ» խորագրով: Միջոցառումը նվիրված էր բուհի հիմնադրման 23-ամյակին:

Ուսանողներն անդրադարձան ԳՊՀ հիմնադրման պատմությանը և գործունեության ընթացքում արձանագրած ձեռքբերումներին, բուհի ֆակուլտետներին, գիտական, ուսումնական գործունեությանը: Ուսանողների կատարմամբ հնչեցին գեղեցիկ երաժշտական ստեղծագործություններ, հեղինակային բանաստեղծություններ՝ նվիրված մայր բուհին:

06.05.2016թ. ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄՈԳԱԿԱՆ ՈՒԺԸ

ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում կազմակերպվել էր «Խոսում են երաժշտական գործիքները» խորագրով երաժշտական ցերեկույթ:

Միջոցառումը կազմակերպվել էր ԳՊՀ երաժշտության տեսության և մեթոդիկա դասընթացի դասախոս, Գավառի Հ. Թալալյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն տիկին Արփինե Զարգարյանի նախաձեռնությամբ:

Միջոցառումն ուղեկցվեց ծիրանափողի, քանոնի, դհոլի, ակորդեոնի, կիթառի, շվիի, դաշնամուրի, կլառնետի հոգեթովիչ և կախարդիչ հնչյուններով:

07.05.2016թ. ԶԵԿՈՒՑՈՒՄ ԵՆ ԱՊԱԳԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ

ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Հասարակական գիտությունների ամբիոնը՝ Բանասիրական և Բնագիտական ֆակուլտետների ուսանողական գիտական ընկերությունների համատեղ նախաձեռնությամբ, կազմակերպել էր Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված ուսանողական գիտաժողով:

Գիտաժողովը վարում էր Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսիկ Քուրքյանը:

**07.05.2016թ. ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

ԳՊՀ Հրայր Աճառյանի անվան լսարանում Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել էր սեմինար-քննարկում «Հայ-իրանական հարաբերությունների զարգացման նախադրյալներն ու հեռանկարները» թեմայով: Քննարկման նպատակն էր ներկայացնել հայ-իրանական հարաբերությունները ներկայիս աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում:

**12.05.2016թ. ԵՐԱՆՈՍԻ ԹԻՎ 2 ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ
ԳՊՀ-ՈՒՄ**

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի բնագիտության լաբորատորիան հյուրընկալել էր Երանոսի թիվ 2 դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներին, կենսաբանության ուսուցիչ Նարեկ Ղազարյանին՝ դպրոցի տնօրեն, ԳՊՀ շրջանավարտ Գառնիկ Ղազարյանի ղեկավարությամբ:

Այցելության նպատակը ֆիզիկա և կենսաբանություն առարկաների գործնական աշխատանքների կազմակերպումն էր ԳՊՀ բնագիտության լաբորատորիայում:

13.05.2016թ. ՀԱՂԹԱԿԱՆ ՄԱՅԻՍ

ԳՊՀ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել էր ցերեկույթ՝ նվիրված մայիսյան եռատոնին:

Ուսանողները խորին խոնարհումով հնչեցրին Արցախյան Քառօրյա պատերազմի բոլոր զոհերի անունները, և ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին նրանց սուրբ հիշատակը:

Հաղթական եռատոնին նվիրված միջոցառումը ուղեկցվեց ուսանողների հայրենասիրական, խրոխտ երգերով ու բանաստեղծություններով:

**18.05.2016թ. ԻՍՊԱՆԻԱՅԻ ԿՈՌՈՒՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԳՊՀ-ՈՒՄ**

ԳՊՀ-ում տեղի ունեցավ հանդիպում Եվրոպական Միության «TEMPUS. RETHINK-Կրթության բարեփոխում՝ գիտելիքների միջազգային փոխանակման միջոցով» ծրագրի գործընկեր բուհի՝ Իսպանիայի Կոռունայի համալսարանի բնագիտական ֆակուլտետի դասախոս, պրոֆեսոր Անտոնիո Պաս Գոնսալեսի հետ:

Պարոն Անտոնիո Գոնսալեսն անդրադարձավ դասընթացների կազմակերպմանը, պայմանագրում հաստատված առարկաների ցանկին, դրանց ելքային արդյունքներին ու գնահատման չափանիշներին: Հանդիպման ավարտին բանախոսը պատասխանեց ներկաների հարցերին:

**19.05.2016թ. ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «TEMPUS. New LeAGUe» ԾՐԱԳՐԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ**

Ուկրաինայի Հանրապետության Կիև քաղաքում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS. New LeAGUe-Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրի հերթական աշխատաժողովը: Աշխատաժողովին մասնակցեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և Ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լիլիթ Թոռչյանը:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեց շնորհանդես-հաշվետվություն ԳՀ-ում իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերի, դրանց մոդուլների, դասավանդման մեթոդների և տեխնոլոգիաների, գնահատման չափանիշների վերաբերյալ:

26.05.2016թ. ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՍԿԻՉԲ

ԳՀ-ում «Առողջ ապրելակերպի հիմունքներ» դասընթացի շրջանակում դասընթացավար Նոնա Մուրադյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Նոր կյանքի սկիզբ» խորագիրը կրող սեմինար՝ նվիրված հղիությանը, հղիների սննդակարգին:

Սեմինարը կազմակերպվել էր դասընթացի մասնակիցներ, «Կենսաբանություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհիներ Մարիամ Ղարիբյանի և Մերի Բաղդասարյանի նախաձեռնությամբ, ուսանողուհիների շրջանում թեմայի վերաբերյալ տեղեկատվության տարածման նպատակով:

26.05.2016թ. ՆԺՏԵՀԻ ՈԳՈՎ՝ ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂԸ

ԳՀ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Նժդեհի ոգով՝ այսօր և վաղը» խորագիրը կրող ցերեկույթ՝ նվիրված մեծ հայրենասեր Գարեգին Նժդեհի ծննդյան 130-ամյակին:

Ուսանողները ներկայացրին հայ ժողովրդի ականավոր զավակ, մեծ փիլիսոփա, ռազմական և քաղաքական գործիչ Գարեգին Նժդեհի կյանքն ու գործունեությունը, խրոխտ կերպով հնչեցրին ցեղակրոն գաղափարախոսության հիմնադրի միշտ արդիական և խորիմաստ պատգամները, կատարեցին Նժդեհին ձոնված երգեր: Ցուցադրվեց հատված «Նժդեհ» ֆիլմից:

**03.06.2016թ. ԴՊՐՈՑ-ԲՈՒՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է**

«Վորլդ Վիժն-Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության Գավառի տարածքային զարգացման ծրագրի նախաձեռնությամբ ԳՀ-ում հյուրընկալվել էին Ծովազարդ և Գեղարքունիք համայնքների դպրոցների 8-11-րդ դասարանների աշակերտները:

Հանդիպման սկզբում աշակերտները դիտեցին ԳՀ-ի մասին պատմող կարճ տեսաֆիլմ: Այնուհետև ԳՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը աշակերտներին ծանոթացրեց կրթության արդի հիմնախնդիրներին և զարգացման միտումներին, աշխատաշուկայի առանձնահատկություններին և գործատուների պահանջներին՝ կարևորելով ճիշտ մասնագիտական ընտրություն կատարելու անհրաժեշտությունը:

**11.06.2016թ. ԳՀ «ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»
ԴԱՍԸՆԹԱՅԸ 10 ՏԱՐԵԿԱՆ Է**

ԳՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ ցերեկույթ՝ նվիրված «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացի հիմնադրման 10-ամյակին:

Դասընթացի տարբեր տարիների շրջանավարտները համախմբվել և յուրօրինակ անակնկալ էին պատրաստել համալսարանականների համար:

**25.06.2016թ. ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «TEMPUS. PICASA» ԾՐԱԳՐԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ**

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորության Ռոհեմփթոնի համալսարանում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS. PICASA-

Բուհերի միջազգայնացման խթանում Արևելյան հարևանության երկրներում՝ մշակութային և կառուցվածքային փոփոխությունների միջոցով» ծրագրի հերթական աշխատաժողովը

ԳՎԿ-ից աշխատաժողովին մասնակցեց Ռուզաննա Հակոբյանը, ով ներկայացրեց բուհի ռազմավարական ծրագրում նախատեսված միջազգայնացման քաղաքականության հիմնական սկզբունքները, ուղղություններն ու կառուցակարգերը, իրականացրած միջազգային ծրագրերը, այդ ծրագրերի որակի ապահովման ներքին և արտաքին մեխանիզմները, համալսարանների դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունության հնարավորություններն ու նշանակությունը:

26.06.2016թ. ՍԻՐՈ ԵՎ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐ ԳՎԿ-ՈՒՄ

ԳՎԿ Հեռակա ուսուցման ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողները կազմակերպել էին ցերեկույթ՝ նվիրված Սիրո և Երախտագիտության թեմային:

Միջոցառման նպատակն էր «Վերնատուն 2»-ի շրջանակներում մեկ անգամ ևս անդրադառնալ մարդկային կարևորագույն և անգնահատելի արժեքներին՝ Սիրուն և Երախտագիտությանը:

30.06.2016թ. ՏՈՒՐԻԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Վրաստանի Հանրապետության Քոբուլեթի քաղաքում տեղի ունեցավ Եվրամիության «Սևծովյան տարածաշրջանի տուրիզմի ուղիներ» (EU Tourism Paths of the Black Sea Region) ծրագրի հերթական աշխատաժողովը, որի նպատակն էր քննարկել տուրիզմի զարգացման ուղղությամբ իրականացված գործողություններն ու նախանշել հետագա անելիքները:

Հանդիպմանը մասնակցում էին ԳՎԿ դասախոս Գուրգեն Մուրադյանը, Ուսանողական խորհրդի նախագահ Արեգ Սինանյանը, ԱՄՆ Խաղաղության Կորպուսի կամավոր, Գավառի պետական համալսարանի դասախոս Փոլ Ուիթթենը:

01.07.2016թ. ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «TEMPUS ARMENQA» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱՎԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

Բելգիայի Թագավորության Գենտի համալսարանում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS.ARMENQA-Ազգային և ոլորտային որակավորումների շրջանակների մշակում և ներդրում Հայաստանում (Ճանաչում ազգային և միջազգային աշխատանքային շուկայում)» ծրագրի հերթական աշխատաժողովը:

Աշխատաժողովին մասնակցեցին ԳՎԿ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և Որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը:

05.07.2016թ. ԲԱՐԻ ԵՐԹ, ՍԻՐԵԼԻ՝ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

ԳՎԿ-ում ձևավորված գեղեցիկ ավանդույթի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրը, հուլիսի 5-ին, քսաներեքամյա բուհը կյանք ճանապարհեց առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների շրջանավարտների 19-րդ սերնդին:

ԳՎԿ-ն կյանք ճանապարհեց 441 շրջանավարտի, որոնցից 126-ը՝ կարմիր դիպլոմակիրներ, հավատացած լինելով, որ նրանք իրենց ներդրումը կունենան մայր հայրենիքի զարգացման և առաջընթացի գործում:

31.07.2016թ. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ»

Ս. թ. հուլիսի 27-ից 30-ը Հունաստանի Հանրապետության Սալոնիկ քաղաքում կայացավ Եվրոպական Միության «BSB-TOUR. Tourism paths of the Black Sea՝ Սևծովյան

տարածաշրջանի զբոսաշրջության ուղիներ» ծրագրի հերթական աշխատաժողովը, որին մասնակցեց ԳՊՀ պատվիրակությունը:

Հայաստանի Հանրապետությունից ծրագրին անդամակցում է միայն ԳՊՀ-ն:

ԳՊՀ միջազգային ծրագրերի գծով որակի ապահովման մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը ներկայացրեց շնորհանդես տուրիզմի զարգացման գործում կրթության կարևորության, գիտականորեն հիմնավորված քաղաքականության մշակման և իրականացման, սերվիսի և տուրիզմի ոլորտի որակյալ մասնագետների պատրաստման, զբոսաշրջային նոր ուղիների պատշաճ նախանշման և գրագետ ներկայացման, զբոսաշրջիկներին համալիր ծառայությունների մատուցման, Հայաստանի Հանրապետությունում ժամանցային, ճանաչողական, ուսումնական, գիտական, առողջապահական, մշակութային, բնապահպանական, գյուղական, աշխատանքային և տուրիզմի այլ տեսակների զարգացման նախադրյալների վերաբերյալ:

**28.08.2016թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ
«ԲԱԶԵ 2016»-ԻՆ**

Ծաղկաձորում կայացավ «Բազե-2016» համահայկական երիտասարդական հավաքը, որին մասնակցեցին հարյուրավոր երիտասարդներ Հայաստանից, Արցախից, Զավախքից և Սփյուռքից:

ԳՊՀ-ն ներկայացնող թիմը վաստակեց 2 արծաթե մեդալ ֆուտբոլ և վոլեյբոլ մարզաձևերում, նվաճեց 3-րդ տեղը ինտելեկտուալ մրցույթում, ինչպես նաև արժանացավ պատվոգրերի տարբեր անվանակարգերում:

28.08.2016թ. ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Ավանդույթի համաձայն՝ նոր ուսումնական տարվա նախաշեմին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ բուհի ռեկտորատի անդամների հանդիպումը առաջին կուրսի ուսանողների և նրանց ծնողների հետ:

Համալսարանի տարբեր ֆակուլտետներ ընդունված ուսանողներին բաժանվեցին իրենց մասնագիտությանը վերաբերող տեղեկատվական թերթիկներ, ներկայացվեցին ուսանողներին առաջադրվող հիմնական պահանջները, կրեդիտային համակարգում ուսանելու սկզբունքները:

ԳՊՀ ռեկտորատի անդամները հաջողություն մաղթեցին բոլոր առաջին կուրսեցիներին:

**Ն. Վ. Մուրադյան՝
ԳՊՀ Հանրության հետ կապերի և
լրատվության բաժնի մասնագետ**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

<i>Ազգանուն, անուն, հայրանուն</i>	<i>Ժառայողական</i>	<i>Էլեկտրոնային փոստի հասցե</i>
ԳՊՀ-ի խորհրդի նախագահ Հակոբյան Հրանուշ Հրանտի	0-60-46-02-01 0264-2-57-75	minister@mindiaspora.am
ԳՊՀ ռեկտոր Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	0-60-46-02-01	rector@gsu.am
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կուտուզյան Նելլի Ալբերտի	0-60-46-04-03	n.kutuzyan@gsu.am
Տնտեսական գծով պրոռեկտոր Ապրոյան Արսեն Հրաչիկի	0-60-46-12-64	a.aproyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկան Ասոյան Թաթուլ Արտիկի	0-60-46-12-44	t.asoyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկան Ավագյան Մարտին Պատվականի	0-60-46-12-55	m.avagyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Ղաջոյան Համլետ Գիրշայի	0-60-46-12-70	h.ghajoyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	0-60-46-12-66	s.amirkhanyan@gsu.am
Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատ	0-60-46-12-90	faculty-of-correspondence-course@gsu.am
Ակադեմիական քաղաքականության վարչություն Ղարիբյան Ալինա Ամբիկի	0-60-46-12-42	a.gharibyan@gsu.am
Ուսանողական խորհրդի նախագահ Սինանյան Արեգ Սամվելի	0-60-46-12-60	a.sinanyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ Սարգսյան Ռուզաննա Մարատի	0-60-46-12-40	r.sargsyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Հերգնյան Մարիամ Նորիկի	0-60-46-12-60	m.hergnyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վոլոդյայի	0-60-46-12-70	g.gevorgyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Գարեյան Մելանյա Վոլոդյայի	0-60-46-12-50	m.gareyan@gsu.am
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	0-60-46-12-46	g.muradyan@gsu.am
Կադրերի և հատուկ բաժնի վարիչ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	0-60-46-12-41	kh.safaryan@gsu.am
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	0-60-46-12-49	l.sirunyan@gsu.am
Ավագ պարետ Զաքոյան Տարիել Հրաչիկի	0-60-46-12-86	t.zaqoyan@gsu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագրեր, զարգացումներ, արդյունքներ.....	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին.....	7
Միջազգային համագործակցություն.....	40
Դասախոսների գործուղումներ.....	114
Ուսումնագիտական աշխատանքներ.....	121
Բանասիրական ֆակուլտետ.....	141
Բնագիտական ֆակուլտետ.....	156
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ.....	175
Տնտեսագիտական ֆակուլտետ.....	191
Հեռակա ուսուցման ֆակուլտետ.....	217
Ակադեմիական քաղաքականության վարչություն.....	223
ԳՊՀ գրադարան	232
ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժին	237
Տեղեկատվական համակարգերի զարգացման և սպասարկման աշխատանքներ.....	241
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն.....	246
Ուսանողական խորհուրդ և Ուսանողական գիտական ընկերություն.....	247
Տնտեսատեխնիկական գործունեություն.....	251
ԳՊՀ հիշարժան միջոցառումներ.....	255
Տեղեկատու.....	273

CONTENTS

Projects, Development and Results.....	3
General Information on the University.....	7
International Cooperation.....	40
Business Trips of the Academic Staff.....	114
Educational and Research Activities.....	121
Department of Philology.....	141
Department of Natural Sciences.....	156
Department of the Humanities.....	175
Department of Economics.....	191
Department of Part-Time Education.....	217
Academic Policy Department.....	223
GSU Library.....	232
GSU Public Relations and Information Department.....	237
Activities for IT Development and Service	241
GSU Trade Union.....	246
Student Council and Student Scientific Society.....	247
Economic-Technological activity.....	251
GSU Memorable Events.....	255
Telephone and E-mail Directory.....	273

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

GAVAR STATE UNIVERSITY

2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ACTIVITY REPORT OF THE ACADEMIC YEAR 2015-2016

ԳՊՀ

Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Հրանտ Հակոբյան 1,
հեռ. (37460) 46-02-01
կայք. www.gsu.am
էլ. փոստի հասցե - infogsu@mail.ru
info@gsu.am

GSU

Gegharkunik Marz
1 Hrant Hakobyan Str., Gavar
tel. (37460) 46-02-01
website: www.gsu.am
E-mail - infogsu@mail.ru
info@gsu.am